ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
СОЦИОЛОГИЯ, ЭКОНОМИКА

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
SOCIOLOGY, ECONOMICS

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (17)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. СОЦИОЛОГИЯ, ЭКОНОМИКА»
«BANBER YEREVANI HAMALSARANI. SOCIOLOGY, ECONOMICS»

Գլխավոր խմբագիր՝ **Միրզոյան Հ. Ղ.**

Խմբագրական խորհուրդ.

Աթանեսյան Ա. Վ., Առաքելյան Ա. Հ., Ասիկյան Ս. Ն., Ավետիսյան Լ. Վ. *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Գալստյան Գ. Ս., Գոնչար Ն. Ա.** *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Թիլման Ա.** (Գերմանիա), **Խաչատրյան Ա. Կ.** *(պատասխ. խմբագիր),* **Հովակիմյան Ա. Է.** *(պատասխ. քարտուղար),* **Ղանթարջյան Ս. Լ., Մանասյան Հ. Գ., Մկրտիչյան Ա. Ե., Չորբաջյան Լ.** *(ԱՄՆ),* **Սահակյան Ա. Կ., Սիմոնյան Ա. Հ.**

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. *(зам. главного редактора),* **Аракелян А. Г., Асикян С. Н., Атанесян А. В., Галстян Г. С., Гончар Н. А.** *(зам. главного редактора),* **Кантарджян С. Л., Манасян Э. Г., Мкртичян А. Е., Овакимян А. Э**. *(ответ. секретарь),* **Саакян А. К., Симонян А. Г., Тилман А.** *(Германия),* **Хачатрян А. К.** *(ответ. редактор),* **Чорбаджян Л.** *(США)*

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Arakelyan A. H., Asikyan S. N., Atanesyan A. V., Avetisyan L. V. *(Deputy editor-in-chief)***, Chorbajyan L.** (USA), **Galstyan G. S., Khantarjyan S. L., Gonchar N. A.** *(Deputy editor-in-chief),* **Hovakimyan A. E.** *(Executive Secretary),* **Khachatryan A. K.** *(Managing Editor),* **Manasyan H. G., Mkrtichyan A. E., Sahakyan A. K., Simonyan A. H., Tilman A.** *(Germany)*

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՎԳԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Սահմանադրության ընդունումից հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունը վստահորեն կանգնեց նոր պետականության կերտման ճանապարհին, որի ընթացքում հասարակական բոլոր ոլորտներում իրականացվեցին լուրջ և ծավալուն բարեփոխումներ, որոնք չշրջանցեցին նաև հանրային կառավարման ոլորտը, որտեղ պետական կառավարմանը զուգահեռ սկսեց գործել նաև տեղական ինքնակառավարման համակարգը: Տեղական ինքնակառավարումը երաշխավորվեց ՀՀ Սահմանադրությամբ՝ որպես հանրային կառավարման կարևորագույն սկզբունք:

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգը փաստացի ներդրվել է 1996 թվականին, երբ ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ առաջին օրենքը, և տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունները: Այդպիսով դրվեց այդ համակարգի կայացման և զարգացման բավականին երկարատև ու բարդ գործընթացի հիմքը:

Ապակենտրոնացման խորացմանն ուղղված բարեփոխումների հաջորդականությունը և դրանց ընթացքն ու արդյունքները հաշվի առնելով՝ կարող ենք ներկայացնել ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հետևյալ փուլերը:

1. 1995-2002 թթ.՝ տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման շրջան, որի ընթացքում մշակվեց տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտը, ներդրվեցին տեղական ինքնակառավարման ինստիտուտները, գործարկվեցին վարչական, կադրային, ֆինանսական մեխանիզմները, ձևավորվեց այդ ոլորտում հայրենական առաջին փորձը: Տեղական ինքնակառավարման «սաղմերը» դեռ վաղուց են ի հայտ եկել պատմական Հայաստանում՝ մասնավորապես միջնադարյան քաղաքներում և գյուղական խոշոր համայնքներում: Այնուամենայնիվ, համակարգն այնպիսին, ինչպիսին որ գործում է ներկայումս՝ իր հիմնական գաղափարներով, սկզբունքներով ու գործառույթներով, ներդրվել է հենց 1995 թվականից:

2. 2002-2011 թթ., որի մեկնարկը տրվեց այն ժամանակ, երբ Հայաստանն անդամագրվեց Եվրոպական խորհրդին և բազմաթիվ համաձայնագրերից ու կոնվենցիաներից բացի՝ ստորագրեց նաև «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան»: Այդ պահից Հայաստանը որդեգրեց ժողովրդավարության, հանրային կառավարմանը երկրի քաղաքացիների մասնակցության իրավունքի, իշխանության ապակենտրոնացման համաեվրոպական արժեքները և պարտավորվեց ձևավորել եվրոպական չափանիշներին համապատասխան տեղական ինքնակառավարման իրավական կարգավորման համակարգ: 2002 թվականին ընդունվեց նաև ՀՀ նոր օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», որը միտված էր տեղական ինքնակառավարման համակարգի անկախության և ինքնուրույնության մեծացմանը, ֆինանսական և վարչական կարողությունների ընդլայնմանը, համայնքային մակարդակում ժողովրդավարության զարգացմանը: Սույն օրենքը տարբեր ոլորտներում համայնքի ղեկավարի լիազորությունների ընդլայնման, ավագանու ինստիտուտի կայացման, տեղական ինքնակառավարման մարմինների՝ պետական և տարածքային կառավարման մարմիններից անկախ և ինքնուրույն գործելու զգալի փոփոխություններ ապահովեց: Այդ ուղղությամբ կարևոր քայլեր էին նաև 2005 թվականի սահմանադրական բարեփոխումները, որտեղ Սահմանադրության համապատասխան դրույթներով ամրագրվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը նախ և առաջ համայնքի բնակչության առջև: Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման այս փուլի համար հատկանշական էր նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ընդունումը (2008 թ.), որի համաձայն՝ Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ, և վերջինիս ինքնակառավարման ոլորտում ամրագրվեցին յուրօրինակ պայմաններ և սկզբունքներ, որոնք բնորոշ չէին ՀՀ մնացյալ համայնքների ինքնակառավարման համակարգերին: Երևանի ինքնակառավարման ոլորտում նմանատիպ փոփոխությունները պայմանավորված էին մայրաքաղաքի զարգացման արագ տեմպերով, ինքնակառավարման համակարգի ձևավորման և գործառման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ և տարբեր ոլորտներում միասնական ու արդյունավետ քաղաքականություն վարելու կարևորությամբ: Այս ընթացքում ընդունվեցին տեղական ինքնակառավարման իրավական կարգավորմանը վերաբերող բազմաթիվ իրավական ակտեր, և քանիցս լրացումներ ու փոփոխություններ կատարվեցին արդեն իսկ գործող հիմնական օրենքներում:

3. 2011-ից մինչ օրս: Այս փուլը սկիզբնավորվեց տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման նոր ռազմավարության ընդունմամբ: Տեղական ինքնակառավարման համակարգում առաջացած

դժվարությունները, որոնք պայմանավորված էին ՀՀ վարչատարածքային բաժանմանը վերաբերող խնդիրներով, իրավական ոլորտի բացթողումներով, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության ցածր մակարդակով, այդ ոլորտում նոր և կարևոր բարեփոխումներ նախաձեռնելու պատճառ դարձան: Մասնավորապես, 2011 թվականին ՀՀ կառավարությունը № 44 արձանագրային որոշմամբ ընդունեց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը՝ հիմք դնելով տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հերթական փուլին: Արդեն իսկ ընթացող զարգացումները թույլ են տալիս փաստել, որ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման նոր փուլի հիմքում ընկած են հենց այդ բարեփոխումները և դրանց միջոցով ներկայացվող ու ապահովվող հիմնական գաղափարներն ու սկզբունքները:

Այսպիսով, մեր երկրում տեղական ինքնակառավարումն արդեն անցել է կայացման երկար ուղի, սակայն, այնուամենայնիվ, զարգացման ու բարեփոխումների բավականին երկար գործընթացը դեռ առջևում է: Կարծում ենք, որ համայնքների խոշորացումն ու միջհամայնքային միավորումների ձևավորումը կնպաստեն ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի առջև ծառացած հիմնական խնդիրների հաղթահարմանը, իսկ դրանք բավականին շատ են և պայմանավորված են բազմաթիվ փոքր համայնքների առկայությամբ, հայաստանյան համայնքների ռեսուրսների սղությամբ ու սահմանափակ կարողություններով և օրենքով նախատեսված լիազորություններն ինքնուրույն իրագործելու անհնարինությամբ, բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների ցածր որակով կամ դրանց իսպառ բացակայությամբ: Համայնքների խոշորացումը կարող է ապահովել փոքրաթիվ բնակչություն և համայնքային սուղ բյուջե ունեցող համայնքների ուժերի, ռեսուրսների ու կարողությունների մեկտեղումը և հիմնախնդիրների համատեղ հաղթահարումը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև համայնքների խոշորացման հնարավոր բացասական հետևանքները, ինչպիսիք են՝ համայնքային ծառայողների շրջանում գործազրկության աճը, բնակչությունից համայնքային ծառայությունների կամ դրանք կարգավորող կառույցների տարածքային հեռավորության մեծացումը և այլն, և նախապես պլանավորել այդ հիմնախնդիրները հաղթահարելու կամ դրանց ազդեցությունը մեղմացնելու մեխանիզմները, ինչպես նաև համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման ընթացքում առաջնորդվել *տարբերակված մոտեցմամբ*՝ հաշվի առնելով համայնքների բնակիչների մշակութային և էթնիկ համատեղելիությունը, համայնքների միջև հեռավորությունը, համագործակցության նախկին փորձը ու այդ ըն-

թացքում առաջացած խնդիրները և ձևավորել ՏԻՄ ներկայացուցիչների և համայնքային ծառայողների արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայմաններ:

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի հետագա և կայուն զարգացման առումով կարևոր է նաև տեղական ինքնակառավարման՝ երկրի սոցիալ-տնտեսական և իրավական պայմաններին, ինչպես նաև մշակութային առանձնահատկություններին առավել համապատասխան մոդելի ընտրության հարցը: Ընդհանրապես, մասնագիտական գրականության մեջ ընդունված է առանձնացնել տեղական ինքնակառավարման բազմաթիվ մոդելներ և դրանց տարաբնույթ դասակարգումներ, որոնցից ամենահայտնին հիմնվում է տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների բնույթի վրա: Այս չափանիշից ելնելով՝ միջազգային պրակտիկայում առանձնացվում են տեղական ինքնակառավարման մի քանի մոդելներ՝ անգլոսաքսոնական, մայրցամաքային և խառը[1]: Իհարկե, տարբեր դասակարգումների շրջանակներում մոդելների այդ ցանկը համալրվում կամ պակասեցվում է, սակայն տեղական ինքնակառավարման համակարգի կառուցվածքագործառութային հիմնարար ընդհանրությունները և առանցքային տարբերությունները հնարավոր է ներկայացնել հենց այդ երեք մոդելի միջոցով:

Անդրադառնալով տեղական ինքնակառավարման մոդելներից յուրաքանչյուրի հիմնական բնորոշիչներին և առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ տեղական ինքնակառավարման անգլոսաքսոնական մոդելը ձևավորվել է դասական մունիցիպալիզմի հայրենիքը համարվող Մեծ Բրիտանիայում, որտեղ դեռևս 11-րդ դարում համայնքները ձեռք բերեցին ինքնակառավարման լայն իրավասություններ ոչ միայն պետական որոշումները և տեղերում պետական կառավարումն իրականացնելու գործընթացներում, այլև ինքնուրույն որոշումներ կայացնելու, օրենքներ ընդունելու և տեղային բյուջե ունենալու առումներով[2]: Այս մոդելի հիմնական առանձնահատկությունն այն է, որ ենթադրում ու նախատեսում է տեղական ինքնակառավարման համակարգի՝ պետական կառավարումից բավականին անկախ և ինքնուրույն գործելու լայն հնարավորություններ: Անգլոսաքսոնական մոդելում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինները գործում են որպես պառլամենտի կողմից իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ինքնուրույն գործող կառույցներ, որոնք, փաստորեն, չունեն որևէ ուղղակի ենթակայություն պետական կառույցնե-

[1] Տե՛ս **Чиркин В. Е.** Организационные формы местного самоуправления: Россия и зарубежный опыт // "Журнал российского права", 1997, № 8, էջ 98:

[2] Տե՛ս **Саначев И. Д.** Сравнительный анализ моделей Росии, США и Западной Европы. Владивосток, 2005, էջ 54:

ին և առաջին հերթին պատասխանատու են համայնքի բնակիչների առջև: Միևնույն ժամանակ տեղական ինքնակառավարման և կենտրոնական իշխանության միջև հարաբերությունները սահմանվում են «տրված լիազորությունների շրջանակներում գործելու» սկզբունքով, այսինքն՝ տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել միայն այնպիսի գործառույթներ, որոնք իրենց վերապահված են օրենքով, կամ որոնք դուրս են պետական իշխանության լիազորություններից: Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված՝ անգլոսաքսոնականը համարվում է տեղական ինքնակառավարման մարմիններին ինքնավարության հնարավորինս լայն շրջանակներ տրամադրող մոդել, որը տարածում է գտել հիմնականում նմանատիպ իրավահամակարգ ունեցող այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, Հնդկաստանը, Ավստրիալիան, Նոր Զելանդիան և այլն: Անդրադառնալով այդ մոդելի տեսական հիմքերին՝ պետք է ասել, որ մոդելի ձևավորման վրա էապես ազդել է 19-րդ դարում Եվրոպայում ստեղծված տեղական ինքնակառավարման մասին ազատ համայնքի տեսությունը: Այն արտացոլում է ֆեոդալական Եվրոպայում քաղաքների ինքնակառավարման փորձը: Տեսության հիմնադիրներն են համարվում *Տոկվիլը, Տուրեն, Հերբերը, Արենսը*, ովքեր գտնում էին, որ իրական իշխանությունը պատկանում է հենց համայնքին և այն անհատներին, ովքեր համախմբվել են իրականացնելու համայնքի ինքնակառավարումը[3]: Տեսության հիմքում ընկած է նաև այն գաղափարը, որ պետությունը պետք է ունենա սահմանափակ հնարավորություններ համայնքի ինքնակառավարման հարցերին միջամտելու առումով, և համայնքն իր կառավարման գործընթացներում պետք է լինի հնարավորինս ինքնուրույն ու պետական կառավարումից անկախ: Հետագայում ազատ համայնքի տեսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումը գտան տարբեր երկրների օրենսդրական բազմաթիվ ակտերում, մասնավորապես՝ Բելգիայի և Ֆրանսիայի՝ 19-րդ դարում ընդունված սահմանադրությունների մեջ: Ընդ որում, տեղական ինքնակառավարման մասին այս տեսությունն այսօր էլ շարունակում է տեղ գտնել բազմաթիվ երկրներում գործող տեղական ինքնակառավարման համակարգերում:

Տեղական ինքնակառավարման՝ միջազգային պրակտիկայում լայն տարածում ստացած մյուս մոդելը մայրցամաքայինն է: Այն անգլոսաքսոնական մոդելի հիմնական դրույթներին հակադրվող մոդել է: Մասնավորապես, մայրցամաքային մոդելում շեշտադրվում է պետության և տեղական ինքնակառավարման մարմինների անքակտելի ու ամուր կապը: Այս մոդելը, որը տարածված է Եվրոպայում (Ֆրանսիա, Ի-

[3] Տե՛ս **Tocqueville Alexis De**. Democracy in America. London, Glasgow, Toronto. Oxford University Press, 1953, էջ 64:

տալիա, Իսպանիա, Բելգիա), ինչպես նաև Լատինական Ամերիկայի, Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի մի շարք երկրներում, տեղերում իրականացնում է պետական կառավարում տեղական ինքնակառավարման զուգորդմամբ, ինչը նշանակում է, որ գործում է տեղական ինքնակառավարման դասական, բրգաձև համակարգ, որի դեպքում ներքևում, այսինքն՝ տեղերում գործող իշխանությունները գտնվում են վերադաս մարմինների անմիջական ենթակայության ներքո[4]: Այս մոդելի դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը բավականին սահմանափակված է, ինչը պայմանավորված է նրանով, որ տեղերում գործում են պետական կառավարման ներկայացուցիչներ, որոնց անմիջական վերահսկողության ներքո էլ գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինները[5]: Ընդ որում, տեղական ինքնակառավարման մայրցամաքային մոդելը որդեգրած երկրներում սահմանափակվում են նաև այն ոլորտները, որոնցում տեղական իշխանությունները կարող են ծավալել իրենց գործունեությունը: Սովորաբար դրանք այն ոլորտներն են, որոնք հստակորեն սահմանված են օրենքով, կամ որտեղ գոնե տեղական իշխանությունների գործունեությունն օրենքով արգելված չէ:

Մայրցամաքային մոդելի հիմքում ընկած են տեղական ինքնակառավարման մասին «պետական» տեսության հիմնական դրույթները, որոնց համաձայն՝ տեղական ինքնակառավարումը դիտվում է որպես պետական գործունեության ձև, որն իրականացվում է պետության շրջանակներում և պետության կողմից տրված լիազորությունների հիման վրա: Հետևաբար, տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական գործառույթը համարվում է տեղերում պետական հարցերի կարգավորումը և պետական քաղաքականության իրագործումը: Սակայն այս տեսության հիմնադիրներից Լորենց ֆոն Շտեյնը հատկապես կարևորում էր այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինները իրականում պետական կառույցներ չեն, այլ իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ, որոնք իրավահարաբերությունների մեջ են գտնվում պետության հետ[6]: Հենց դրանով էլ տեղական ինքնակառավարման մարմինները տարբերվում են պետական կառավարման մարմիններից, որոնք չունեն այլ իրավունքներ ու շահեր, բացի պետականից և պետության կողմից տրամադրվածներից: Այսպիսով, տեղական ինքնակառավարման այս տեսությունը և վերջինիս հիման վրա ձևա-

---

[4] Տե՛ս **Шустов В. Г.** Основные модели местного самоуправления // http://cyberleninka.ru/article/n/osnovnye-modeli-mestnogo-samoupravleniya. 14.07.2014, ժամը 14:55:

[5] Տե՛ս «Local Government: Characteristics and Types» // http://www.infoplease.com/ encyclopedia/history/local-government-characteristics-types.html. 14.07.2011, ժամը 15:01:

[6] Տե՛ս **Mengelberg K**. Lorenz von Stein and His Contribution to Historical Sociology// Journal of History and Ideas. Vol. 22, # 2, University of Pennsylvania Press, 1979, էջ 267:

վորված համապատասխան մոդելը կարևորում են տեղական ինքնակառավարման ու պետական կառավարման սերտ կապն ու միմյանց փոխլրացնելու սկզբունքը:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում տեղական ինքնակառավարման համակարգում տեղի ունեցող լուրջ և շարունակական բարեփոխումները հանգեցրին տեղական ինքնակառավարման գործող մոդելների ու տեսական մոտեցումների մերձեցման, ինչի շնորհիվ ձևավորվեցին տեղական ինքնակառավարման *խառը մոդելը* և դրա տեսական հիմքը կազմող *երկակիության կամ դուալիստական տեսությունը:* Վերջինս շեշտում է տեղական ինքնակառավարման երկակի բնույթը, և այն, որ տեղական ինքնակառավարումը, լինելով պետությունից անջատ և անկախ, միևնույնն է, գործում է պետության շրջանակներում: Այս տեսությունն ընդգծում է տեղական ինքնակառավարման միաժամանակ և՛ պետական, և՛ հասարակական բնույթը: Դա նշանակում է, որ դուալիստական տեսությունը տեղական ինքնակառավարումը դիտում է որպես միջնորդ պետության և քաղաքացու, պետության և քաղաքացիական հասարակության միջև:

Տեղական ինքնակառավարման մոդելների և դրանց հիմքում ընկած տեսական մոտեցումների ուսումնասիրությունը թույլ է տալիս դատողություններ անել Հայաստանում գործող տեղական ինքնակառավարման մոդելի և վերջինիս հիմնական առանձնահատկությունների ու բնութագրիչների մասին:

Վերլուծելով տեղական ինքնակառավարման հայաստանյան համակարգի հիմնական բնութագրիչները, կառուցվածքային և գործառութային առանձնահատկությունները՝ կարող ենք փաստել, որ այն իր բնույթով առավելապես հարում է տեղական ինքնակառավարման *խառը* մոդելին: Օրենսդրական մակարդակում այդ ընդհանրությունն ակնհայտ է և դրսևորվում է սեփական ու պետության կողմից պատվիրակված լիազորությունների ինստիտուտի միջոցով: Ինչպես և խառը մոդելը որդեգրած այլ երկրներում, Հայաստանում ևս տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն օրենքով սահմանված սեփական և պատվիրակված լիազորություններ: Ընդ որում, եթե սեփական լիազորությունների իրագործման ընթացքում ՏԻՄ-երը գործում են լիովին անկախ և ինքնուրույն՝ պետական կառավարման մարմիններից աջակցություն ստանալով հիմնականում օրենսդրական կարգավորումների տեսքով, ապա պատվիրակված լիազորությունների առումով տեղական ինքնակառավարման մարմինները գործում են որպես պետության ներկայացուցիչներ տեղերում և իրագործում են պետության գործառույթները վարչատարածքային տվյալ միավորման շրջանակում: Այսինքն՝ տեղական ինքնակառավարման խառը մոդելի դեպքում համակարգն ունենում է անկախության և ինքնուրույնության հարաբերա-

կանորեն լայն շրջանակներ, բայց միևնույն ժամանակ հստակորեն կրում է պետական կառավարման համակարգի ազդեցությունը, որն արտահայտվում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ ինչպես սեփական լիազորությունների շարքը որոշելու և իրականացնելու հնարավորություն, այնպես էլ պետության կողմից պատվիրակված լիազորություններն իրագործելու պարտավորություն ունենալով: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ տեղական ինքնակառավարման հայաստանյան մոդելը միայն օրենսդրորեն է նման միջազգային պրակտիկայում տարածում ստացած խառը մոդելին, քանի որ տեղական ինքնակառավարման մարմինների իրական կախվածությունը պետական մարմիններից թույլ է տալիս ասելու, որ ՀՀ-ում գործող տեղական ինքնակառավարման համակարգը իր բնույթով հարում է մայրցամաքային մոդելին, որովհետև այդ կախվածությունը շատ ավելի խորն է ու բազմաբնույթ և առաջին հերթին դրսևորվում է ֆինանսական կախվածության տեսքով: Այսօր Հայաստանի համայնքների մեծ մասի բյուջեն գոյանում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների հաշվին, իսկ այն համայնքները, որոնց հաջողվում է հավաքել սեփական եկամուտները և համայնքային բյուջեում ապահովել դրանց գերակշռող մասը, դեռևս շատ քիչ են. դրանք հիմնականում խոշոր քաղաքներն են, որոնք նաև պետական կամ ազգային որոշակի քաղաքականության կենտրոնում են (օրինակ՝ Երևանը, Ծաղկաձորը, Դիլիջանը, Ջերմուկը): ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների կախվածությունը պետական կառույցներից դրսևորվում է նաև հարկային քաղաքականության միջոցով: Ինչպես սահմանված է ՀՀ մի շարք օրենքներում, հայաստանյան համայնքների բյուջեն գոյանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների միջոցով[7]: Եթե տեղական հարկատեսակներ համարվող գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերը հաշվարկելիս, գանձելիս, տույժեր սահմանելիս տեղական ինքնակառավարման մարմինների դերը որոշակի է, ապա նույնը չենք կարող ասել հյուրանոցային հարկի մասին, որի օրենսդրական կարգավորումը դեռևս մշակված չէ: Իսկ տեղական տուրքերի և վճարների առումով առկա են օրենսդրական մի շարք բացթողումներ[8]: Օրենսդրորեն չեն կարգավորվում նաև համայնքների կողմից արժեթղթերի թողարկմանը վերաբերող մի շարք այլ գործընթացներ: Չեն իրականացվում նաև հարկային մյուս տեսակներից համայնքների բյուջեն համալրելու նպատակով օրենսդրորեն նախատեսված մասհանումները:

---

[7] Տե՛ս ՀՀ օրենքները «Հարկերի մասին» (1997 թ.), «Գույքահարկի մասին» (2002 թ.), «Հողի հարկի մասին» (1994 թ.), «Տեղական տուրքերի և վճարների մասին» (1997 թ.):

[8] Տե՛ս «Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային նախագիծը, Եր., 2011, էջ 6-9:

Տեղական ինքնակառավարման մարմինների կախվածությունը պետական կառույցներից դրսևորվում է նաև կադրային քաղաքականության ոլորտում: Մասնավորապես, կառավարությունը սահմանում է համայնքային ծառայողների հաստիքների առավելագույն թիվը համայնքների համապատասխան տեսակների համար՝ դրանով ազդելով համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքի և գործառույթների վրա: Բացի դրանից, համայնքային ծառայության թափուր պաշտոնների թեկնածուներին ներկայացվող՝ օրենսդրորեն ամրագրված չափանիշներով մի շարք պաշտոններ, հատկապես գլխավոր մասնագետի և աշխատակազմի քարտուղարի պաշտոնները, երկար ժամանակ թափուր են մնում: Այդ չափանիշները փոփոխման կարիք ունեն հատկապես մինչև 1000 բնակիչ ունեցող փոքր համայնքներում համայնքային ծառայողների շարքերը համալրելու առումով:

Այսպիսով, եթե վերլուծենք տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը, ապա կարող ենք փաստել, որ ՀՀ-ում գործում է տեղական ինքնակառավարման այնպիսի մոդել, որը թեև հարում է միջազգային պրակտիկայում լայն տարածում ստացած խառը մոդելին, այնուամենայնիվ տեղական ինքնակառավարման մարմինների գործառման պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ տեղական ինքնակառավարման հայաստանյան մոդելն իր բնույթով առավելապես «մայրցամաքային» է կամ կոնտինենտալ, որի դեպքում կախվածության մակարդակը պետությունից շատ ավելի բարձր է: Դա նաև հնարավորություն է տալիս պնդելու, որ հայաստանյան մոդելի հիմքում տեղական ինքնակառավարման պետական տեսությունն է: Եվս մի կարևոր հանգամանք. ՀՀ տեղական ինքնակառավարման գործող մոդելի տեսական հիմքն են նաև տեղական ինքնակառավարման «քաղաքական» կոչվող տեսության որոշ դրույթներ, որոնց հեղինակը համարվող Ռ. Գնեյստը պնդում էր, որ տեղական ինքնակառավարումը պետք է իրականացվի համայնքի պատվավոր քաղաքացիների կողմից և առանց դրամական որևէ փոխհատուցման, իսկ հիմնական խրախուսանքը պետք է լինեն համայնքի անդամների հարգանքը տվյալ պաշտոնը զբաղեցնող անձի նկատմամբ և վերջինիս բավարարվածությունը այդքան պատվավոր ու պատասխանատու գործով զբաղվելու համար[9]: Տեսական այս դրույթներն իրենց ազդեցությունն են ունեցել տեղական ինքնակառավարման հայաստանյան մոդելի ձևավորման վրա. Հայաստանի համայնքների ավագանիները, ընտրվելով համայնքի անդամների կողմից, իրենց պաշտոնեական գործունեությունն իրականացնում են անհատույց: Այս հանգամանքը պայմանավորում է համայնքի կառավարման գործըն-

[9] Տե՛ս **Charles E. McClelland**. The German historians and England: A Study in Nineteeth Century Views. UK, Cambridge Univeristy Press, 1971, էջ 140:

թացներում ավագանու անդամների պասիվությունը, մոտիվացվածության բացակայությունը որոշակի նախաձեռնություններով հանդես գալու հարցում և իհարկե նաև խոչընդոտում է ավագանու ինստիտուտի կայացմանը մեր երկրում: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է համայնքի ավագանու անդամ(ներ)ի պաշտոնեական գործունեության ընթացքում կատարված ծախսերի փոխհատուցում, սակայն նախ անհրաժեշտ է իրավական կարգավորման ենթարկել, թե գործունեության որ տեսակների դեպքում ավագանու անդամը կարող է հավականել ծախսերի մասնակի կամ լիարժեք փոխահատուցման, և որքան կարող է դա լինել գործունեության կոնկրետ ձևերի համար: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այդ պրակտիկան ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում գրեթե չի կիրառվում:

Այսպիսով, Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման անցած ուղու վերլուծությունը հավաստում է, որ տեղական ինքնակառավարումը՝ որպես տեղական նշանակության խնդիրները լուծելու համար ստեղծված համակարգ, աստիճանաբար հարթում է իր ճանապարհը: Սակայն համակարգի արդյունավետ գործառման տեսանկյունից դեռևս առկա են լուրջ խնդիրներ, որոնք պայմանավորված են մի կողմից օրենսդրական դաշտում առկա բացթողումներով և հակասություններով, մյուս կողմից՝ տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական, կադրային, վարչական և այլ ռեսուրսների սղությամբ: Դրանից բացի, մշակված չեն այն մեխանիզմները, որոնք կապահովեն համայնքային մակարդակում անհրաժեշտ ծառայությունների արդյունավետ մատուցումը բնակչությանը: Ուստի շարունակում է զգալի մնալ տեղական ինքնակառավարման մարմինների կախվածությունը պետությունից: Այս և բազմաթիվ այլ հիմնախնդիրների լուծման ճանապարհին առաջանում է նաև տեղական ինքնակառավարման մոդելի գիտակցված ընտրության և հստակ ձևակերպման հարցը. դա պետք է հիմնված լինի մեր երկրի սոցիալ-տնտեսական պայմանների, ժողովրդագրական և մշակութային առանձնահատկությունների վրա և ի վիճակի լինի տալու տեղական ինքնակառավարման ռազմավարական և հայեցակարգային զարգացման տեսլականը:

Բանալի բառեր – *տեղական ինքնակառավարում, ապակենտրոնացում, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններ, տեղական ինքնակառավարման մոդելներ, համայնքների խոշորացում, համայնքային ծառայություն*

ЕВГИНЕ ВАРДАНЯН – ***Процесс формирования модели местного самоуправления в Республике Армения.*** – Система местного самоуправления Армении – неотъемлемая часть общественного управления, а также механизм реализа-

ции демократических принципов правления. Однако до сих пор не решён вопрос о том, какой моделью местного самоуправления мы руководствуемся и какая модель наиболее эффективна для нашей политической системы.

В статье представлено развитие системы местного самоуправления в постсоветской Армении, проанализированы соответствующие модели, принятые в международной практике, изучены их теоретические основы, а также выявлены сходства и различия нашей нынешней системы местного самоуправления с общепризнанными моделями.

Ключевые слова: *децентрализация, полномочия органов местного самоуправления, модели местного самоуправления, объединение общин, общинная служба*

YEVGINE VARDANYAN – *The Process of Formation of the Model of Local Self-Government in RA.* – The local self-government system is already undividable part of public administration system of Armenia and the mechanism for realization of democratic principles. But the questions of what model of local self-government we have adopted and implement now and if that model is the most appropriate one for the geopolitical system of Armenia have no answers yet.

The article is devoted to the description of the development of the local self-government system in Armenia and to the analyses of the models of local self-government and their theoretical bases which has been formatted and used in different countries. But the primary goal of the article is to present the main similarities and differences of Armenian system of local self-government with the models which are commonly used in international practice.

Key words: *local self-government, decentralization, authorities of local self-government bodies, models of local self-government, consolidation of communities, community service*

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ (ՑԻՐԿՈՒԼՅԱՐ) ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ[1]

ՌՈՒԲԵՆ ԵԳԱՆՅԱՆ

«Աշխատանքային ժամանակավոր միգրացիա» հասկացության գիտական սահմանման առումով լուրջ տարակարծություններ չկան:

Այն ընկալվում է որպես աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով երեք և ավելի ամսով ելքի բնակավայր վերադարձ կամ այլ բնակավայր տեղափոխում ենթադրող ժամանում:

Որպես աշխատանքային ժամանակավոր միգրացիայի առանձին տեսակներ ներկայումս դիտվում են.

- Սեզոնային աշխատանքային միգրացիան,
- Ոչ սեզոնային կարճաժամկետ աշխատանքային միգրացիան,
- Երկարաժամկետ կամ տևական աշխատանքային միգրացիան,
- Շրջանակային կամ ցիրկուլյար աշխատանքային միգրացիան:

Լուրջ տարակարծություններ չկան նաև աշխատանքային ժամանակավոր միգրացիայի առաջին երեք տեսակների ընկալման և սահմանման առումով:

Սեզոնային աշխատանքային միգրացիան իրականացվելիք աշխատանքների սեզոնայնության բնույթով պայմանավորված՝ 3-12 ամիս տևողությամբ մեկնում-վերադարձն է, իսկ ոչ սեզոնային կարճաժամկետ աշխատանքային միգրացիան ոչ սեզոնային բնույթի աշխատանքներ կատարելու նպատակով 3-12 ամիս տևողությամբ մեկնում-վերադարձն է: Երկարաժամկետ կամ տևական աշխատանքային միգրացիան 12 ամսից ավելի տևողությամբ մեկնում-վերադարձն է:

Մատնանշելով սա, հարկ է սակայն նշել, որ ԵՄ անդամ երկրներից ոչ մեկում ժամանակավոր միգրացիայի օրենսդրորեն ամրագրված պաշտոնական սահմանում չկա[2]: Այս հանգամանքը հաճախ անհարկի բարդություններ է ստեղծում այդ երկրներում մշտական բնակության

---

[1] Հոդվածը պատրաստված է «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար: Միգրացիայի կառավարման ոլորտում Հայաստանի կարողությունների հզորացում, կենտրոնանալով վերաինտեգրմանն ուղղված միջոցառումների վրա, ԵՄ- Հայաստան շարժունակության շուրջ գործընկերության շրջանակում» (PN: 2005.3506.2-014.00), ծրագրի համար:

[2] Տե՛ս «Временная и циркулярная миграция: эмпирические данные, современная практика управления и варианты дальнейшего развития в странах Европейского Союза». Европейская Миграционная Сеть, Издательство Европейского союза, 2011 // ISBN 978-92-79-21026-6 doi:10.2837/67921, ноябрь 2011, 2.2.1. Временная миграция, էջ 18-26:

ձգտող ժամանակավոր բնակվողների և նման նպատակ չհետապնդողների՝ իրապես ժամանակավոր միգրանտների համակցությունների հստակ տարանջատման գործում:

Ինչ վերաբերում է համեմատաբար նոր՝ «շրջանակային կամ ցիրկուլյար աշխատանքային միգրացիա» հասկացությանը և առհասարակ «շրջանակային կամ ցիրկուլյար միգրացիա» հասկացությանը, ապա դրանց ոչ այնքան հստակ ինչպես գիտական, այնպես էլ ոչ մեծաթիվ պաշտոնական-օրենսդրական սահմանումները դեռևս առնվազն վիճելի են և տարընթերցումների տեղիք են տալիս:

Այսպես, որոշակի հարցեր է ծնում հասկացության բավական ճանաչում գտած հետևյալ սահմանումը. ցիրկուլյար միգրացիան *«...երկրների միջև մարդկանց անարգել տեղաշարժն է, այդ թվում՝ ժամանակավոր կամ տևական, որը կարող է օգտակար լինել բոլոր մասնակիցների համար, եթե տեղի է ունենում կամավոր և պայմանավորված է ծագման ու մուտքի երկրների աշխատանքային պահանջմունքներով»*[3]:

Մեր համոզմամբ՝ տվյալ սահմանման մեջ վիճարկման ենթակա չեն միայն ցիրկուլյար միգրացիայի ժամանակավոր լինելու և կամավորության սկզբունքի մասին ձևակերպումները (միանշանակ է, որ այն չի կարող լինել մշտական կամ հարկադիր միգրացիա):

Դրան հակառակ՝ միանգամայն անհասկանալի է *«անարգել տեղաշարժ»* արտահայտությունը: Քանի որ ներկայիս միգրացիոն հոսքերի հիմնական թիրախն են զարգացած երկրներն իրենց մուտքի թույլատրման բարդ համակարգերով, հարց է առաջանում՝ ինչպե՞ս սա ընկալել, ինչպե՞ս մեկնաբանել:

Առնվազն վիճարկելի են նաև *«մասնակիցների համար օգտակար»* և *«ծագման ու մուտքի երկրների աշխատանքային պահանջմունքներով պայմանավորված»* ձևակերպումները:

Նախ, պարզ չէ, թե ինչ չափանիշներով, և ովքեր են նման գնահատում կատարելու, անգամ կասկածի տեղիք է տալիս դրա կոռեկտ իրականացման հնարավորությունը:

Երկրորդ, հասկանալի չէ, թե այս առումով ինչով է ցիրկուլյար միգրացիան տարբերվում մնացած բոլոր ժամանակավոր միգրացիոն ուղևորություններից. արդյո՞ք վերջիններս չեն կարող կողմերի համար նունքան օգտակար լինել և/կամ համապատասխանել երկրների աշխատանքային պահանջմունքներին:

Երրորդ, արդյո՞ք *«աշխատանքային պահանջմունքներ»* արտահայտությունը պետք է մեկնաբանվի որպես այն բանի վկայություն, որ ցիրկուլյար միգրացիան բացառապես աշխատանքային երևույթ է

[3] **Agunias Dovelyn Rannveig, Newland Kathleen.** Circular Migration and Development: Trends, Policy Routes, and Ways Forward, in *Policy Brief*, Migration Policy Institute, April 2007, http://www.migrationpolicy.org/pubs/MigDevPB_041807.pdf

(նշենք, որ գոյություն ունեցող այլ սահմանումների մեծ մասը նման սահմանափակում չի դնում. ցիրկուլյար է համարվում նաև կրթական, հետազոտական և այլ բնույթի ուղևորությունների որոշակի մասը):

Վերջապես, որևէ կերպ մատնանշված չէ այն հատկանիշը, որը կարծես թե հիմք է հանդիսացել «ժամանակավոր միգրացիա» ամբողջական հասկացության շրջանակներում տարակարգելու «ցիրկուլյար միգրացիա» երևույթը, այն է՝ կրկնվելու, նույն անձի կողմից մեկից ավելի անգամ իրականացվելու հատկանիշը:

Անհամեմատ պարզ և ընկալելի է ցիրկուլյար միգրացիայի եվրոպական միգրացիոն ցանցի (ԵՄՑ) բառարանում բերված սահմանումը. «*Միևնույն անձի կողմից երկու և ավելի երկրների միջև լեգալ միգրացիայի կրկնում*»: Տվյալ սահմանումը մեկ այլ փաստաթղթում[4] լրացված է օրինակներով, որոնք, ավելի հասկանալի դարձնելով տերմինի եվրոպական ընկալումը, միաժամանակ ոչ բոլոր հարցերն են հստակեցնում:

Այս փաստաթղթում երևույթը տարակարգված է հետևյալ երկու մասի.

1. ԵՄ-ում բնակվող երրորդ երկրների քաղաքացիների ցիրկուլյար միգրացիա,

2. Երրորդ երկրում բնակվող անձանց ցիրկուլյար միգրացիա:

Այսպիսով, մի կողմից հստակեցվում է, որ ԵՄ երկրները բոլոր դեպքերում ցիրկուլյար միգրանտ են ընկալում միայն **երրորդ երկրների քաղաքացիներին** (ինչը ևս վիճարկելի է. իսկ ինչպե՞ս գնահատել իրենց՝ ԵՄ երկրների քաղաքացիների կրկնվող միգրացիոն ուղևորությունները), մյուս կողմից՝ այն, որ որպես նման ուղևորություններ կարող են որակվել **ոչ միայն այդ երկրներում բնակվողների ժամանակավոր այցերը ԵՄ, այլև ԵՄ-ում օրինական հիմունքներով մշտապես բնակվող դրանց քաղաքացիների ժամանակավոր այցերը հայրենիք** (չի բացառվում նաև այլ երկրներ):

Նշված փաստաթղթի բնորոշմամբ՝ ԵՄ երկրներում բնակության իրավունք (պետք է ենթադրել հիմնական) ունեցող երրորդ երկրների քաղաքացիների ցիրկուլյար միգրացիան հնարավորություն է տալիս մարդկանց, պահպանելով այդ իրավունքը, գործունեություն ծավալել (ձեռներեցական, մասնագիտական, բարեգործական և այլ) ելքի երկրներում:

Ինչ վերաբերում է երրորդ երկրներում բնակվողների ցիրկուլյար միգրացիային, ապա, ըստ տվյալ փաստաթղթում բերված օրինակների, այն կարող է ներառվածների համար պայմաններ ստեղծել, ժամանակավորապես ժամանելով ԵՄ անդամ որևէ երկիր, աշխատելու, ուսա-

---

[4] Տե՛ս «Положение Комиссии Европейскому Парламенту, Совету, Комитету Европы по экономическому и социальному развитию и Региональным комитетам по циркулярной миграции и партнерским соглашениям в области мобильности между Европейским Союзом и третьими странами» (CKM (2007) 248) // http://eur-lex. europa.eu/LexUriServ/ LexUriServ.do?uri=CELEX:52007DC0248:EN:NOT

նելու, բարձրացնելու որակավորումը, ստանալու լրացուցիչ որակավորում, կամ համատեղելու այս նպատակներից մի քանիսը՝ պայմանով, որ մուտքի երկրում գտնվելու իրենց վերապահված ժամկետի վերջին նրանք պարտավոր են վերադառնալ իրենց հիմնական բնակության երկիր և *«…իրենց նախորդ գործունեությանը»*:

Նախ նշենք, որ այստեղ միանգամայն անհասկանալի է *«իրենց նախորդ գործունեությանը»* վերադարձի պարտադրող արտահայտության իմաստը: Դժվար է ենթադրել, որ, հեղինակների կարծիքով, վերադառնալուց հետո գործունեության բնույթը փոխածները դադարում են ցիրկուլյար միգրանտ համարվելուց: Միակ հնարավոր բացատրությունը երևի այն է, որ խոսքն այն դեպքերի մասին է, երբ տվյալ պայմանը հստակ նախանշված է միգրանտի և ընդունող կողմի միջև կնքված պայմանագրում:

Էլ ավելի ուշագրավ է հաջորդ հանգամանքը: Թերևս հասկանալով, որ տվյալ ձևակերպումն ըստ էության վերաբերում է առանց օրինականության խախտման իրականացվող ժամանակավոր միգրացիայի բացառապես բոլոր դեպքերին, հեղինակները դրան հավելում են. *«Ցիրկուլյարությունը կարող է ուժեղացվել, եթե միգրանտները հնարավորություն ստանան վերադառնալուց հետո պահպանել ԵՄ անդամ տվյալ երկիր մուտքի և ելքի որոշակի արտոնյալ պայմաններ, օրինակ՝ կրկնվող այցի պարզեցված արարողակարգի ձևով»*[5]:

Բացի մասնակիցների որոշակիության՝ վերը ներկայացված հատկանիշից (երրորդ երկրների մուտքի և ելքի երկրներում բնակվող քաղաքացիները), ցիրկուլյար միգրացիայի աշխատանքային սահմանումների մեծ մասն անդրադառնում է երևույթի տարածքային, ժամանակային, կրկնելիության և ներառված բոլոր կողմերի համար օգտակարության կամ շահավետության հատկանիշներին:

Դրանցից զատ՝ որոշ սահմանումներ այս կամ այն կերպ ներառում են նաև օրինականության և կազմակերպվածության հատկանիշները:

Տարածքային (միջպետական միգրացիա) և ժամանակային (ելքի երկիր վերադարձ ենթադրող միգրացիա) առումներով ցիրկուլյար միգրացիայի լրիվ համընկնումը «ժամանակավոր միգրացիա» երևույթի և հասկացության հետ, ինչպես նաև այն, որ ներառված բոլոր կողմերի համար օգտակար և շահավետ կարող են լինել նաև մեկանգամյա ժամանակավոր միգրացիոն ակտերը, որ դրանց մի զգալի մասը նույնպես լինում է օրինական և կազմակերպված, կարծես թե թույլ է տալիս արձանագրել, որ ցիրկուլյար միգրացիայի միակ, անվիճարկելի տարբերիչ

[5] «Временная и циркулярная миграция: эмпирические данные, современная практика управления и варианты дальнейшего развития в странах Европейского Союза». Европейская Миграционная Сеть. Издательство Европейского союза, 2011 год // ISBN 978-92-79-21026-6 doi:10.2837/67921, ноябрь 2011, с. 16.

հատկանիշը կրկնելիությունն է: Այն, թերևս, կարևորվում է այն պատճառով, որ «կրկնելիությունը» ենթադրում է մուտքի երկրում միգրանտի կողմից թողած դրական իմիջ, ինչը ցիրկուլյար միգրացիան ժամանակավոր, մեկանգամյա միգրացիայի համեմատ մուտքի երկրի համար դարձնում է ցանկալի ու խրախուսելի:

Արդյո՞ք սրանից հետևում է, որ բոլոր կրկնվող ժամանակավոր միջպետական միգրացիոն տեղաշարժերը կարող են և պետք է բնորոշվեն որպես ցիրկուլյար: Միանգամայն համոզված ենք, որ ոչ:

Մեր կարծիքով, երևույթի ընկալմանը և սահմանմանը վերաբերող խառնաշփոթը սկսվել է դրա անվանումից: Ցիրկուլյար՝ շրջանակային անվանումը միանգամից կարծրատիպ է ստեղծում, որ երևույթի գլխավոր տարբերիչ հատկանիշը միևնույն անձանց կողմից ժամանակավոր միգրացիոն ակտերի կրկնությունն է: Ակնհայտ է, որ եթե դա այդպես լիներ, ապա միանգամայն հիմնավորված ու տեղին կլիներ այն կոչել բանավեճի տեղիք չտվող «կրկնվող ժամանակավոր միգրացիա» տերմինով:

Ակնհայտ է, որ այս ուղին չի ընտրվել լոկ այն պատճառով, որ այլ է եղել երևույթի տարբերակման հիմքում դրված գլխավոր հատկանիշը:

Առավել հավանական է թվում, որ «ցիրկուլյար միգրացիա» հասկացության տարբերակման հիմնական նպատակը եղել է «ժամանակավոր միգրացիա» ամբողջական երևույթից դրա առավել պակաս խնդրահարույց հետևանքներ առաջացնող (ընդ որում՝ միաժամանակ ներառված բոլոր կողմերի համար՝ թե՛ մուտքի և ելքի երկրների և թե՛ հենց իրենց՝ միգրանտների) մասի առանձնացումը և դրա զարգացմանը նպաստող նպատակային քաղաքականության մշակումն ու վարումը:

Հետևաբար, երևույթի տարակարգման կարևորագույն հատկանիշն իրականում ոչ այնքան «ներառված բոլոր կողմերի համար առավելագույն հնարավոր օգտակարությունն» է, որքան, եթե կարելի է այդպես կոչել, **քաղաքակիրթ լինելը՝ նույն այդ կողմերի համար նվազագույն խնդիրներ առաջացնելը:**

Ինչ վերաբերում է ցիրկուլյարության (կրկնվողության), ինչպես նաև կազմակերպվածության (օրինականության) հատկանիշներին, ապա դրանք, ունենալով միգրանտների վերադարձելիության խնդրի լուծման որոշակի ներուժ, ընդամենը այդ կարևորագույն հատկանիշի ապահովման միջոցներ են:

Երևույթի նման ընկալումը մեզ թույլ է տվել ձևակերպելու և առաջարկելու դրա հետևյալ սահմանումը.

«Ցիրկուլյար միգրացիան մուտքի և ելքի երկրներում բնակվող երրորդ երկրների քաղաքացիների, ներառված բոլոր կողմերի՝ թե՛ այդ երկրների և թե՛ անձամբ միգրանտների, համար նվազագույն խնդրահարուցություն և առավելագույն հնարավոր օգտակարություն ապահովելու նկատառմամբ օրինականորեն կազմակերպված, կրկնվող ժա-

մանակավոր միջպետական միգրացիոն տեղաշարժն է»:

Նշենք, որ այս ենթատեքստում «կազմակերպված» բառն օգտագործված է լայն ըմբռնմամբ: Այն ներառում է թե՛ միջպետական, թե՛ պետական ու մասնավոր առանձին կառույցների, և թե՛ վերջիններիս ու անհատների մակարդակով կազմակերպված լինելու տարբերակները: Այսինքն՝ չի ներառում միայն իրավական առումով ոչ մի կերպ չձևակերպված տարբերակները կամ ժամանակավոր անկանոն միգրացիան: Ընդ որում՝ ենթադրվում է, որ հենց կազմակերպվածության միջոցով են արդեն նախապես ապահովվում երևույթի նվազագույն խնդրահարույցության և մասնակիցների համար առավելագույն հնարավոր օգտակարության հատկանիշները:

Ինչ վերաբերում է աշխատանքային ցիրկուլյար միգրացիային, ապա նախորդ սահմանման ոչ բարդ վերաձևակերպման միջոցով ստացվում է դրա սահմանումը ևս.

«Աշխատանքային ցիրկուլյար միգրացիան մուտքի և ելքի երկրներում բնակվող երրորդ երկրների քաղաքացիների, ներառված բոլոր կողմերի՝ թե՛ այդ երկրների և թե՛ անձամբ միգրանտների համար նվազագույն խնդրահարույցություն և առավելագույն հնարավոր օգտակարություն ապահովելու նկատառմամբ օրինականորեն կազմակերպված, աշխատանքային կրկնվող ժամանակավոր միջպետական միգրացիոն տեղաշարժն է:

Բանալի բառեր – *ժամանակավոր միգրացիա, աշխատանքային միգրացիա, ցիրկուլյար միգրացիա*

РУБЕН ЕГАНЯН – ***Об определении круговой (циркулярной) миграции.*** – “Циркулярная миграция” – сравнительно новое научное понятие. В статье дан критический анализ его определений, содержания и признаков, выделен основной, главенствующий признак, отличающий данное явление от прочих форм временной миграции. Этот признак – наименьшая проблемность для всех вовлечённых сторон – для принимающих стран, стран доноров и для самих мигрантов. С учетом сказанного определены понятия циркулярная и трудовая циркулярная миграция.

Ключевые слова: *временная миграция, циркулярная миграция, трудовая миграция*

RUBEN EGANYAN – ***On the Definition of Circular Migration.*** **–** In the article, on the basis of critical analysis of the existing definitions of the comparatively new scientific term “circular migration”, its essence, content and signs, the main, the most important sign is defined, by which this phenomenon is distinguished from other forms of temporary migration, and which became the main reason for emphasizing and examining it as a new, independent form of migration.

Key words: *temporary migration, circular migration, labor migration*

ՎԱՆԱՁՈՐԻ ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԼԻՆԵ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

Գենդերային հետազոտությունները տարիներ շարունակ չեն կորցնում իրենց կարևորությունն ու արդիականությունը: «Մեր կյանքի բազմաթիվ ոլորտներ, ներառյալ ընտանիքը, կրթությունը, տնտեսությունը, սեքսուալությունը, կառուցվում են գենդերային սկզբունքների հիման վրա և բախվում են կոնֆլիկտների, բազմազան տարբերությունների և առավելությունների հետ»[1]:

Այդ ոլորտների շարքին կարելի է դասել նաև միգրացիան, քանի որ այն շաղկապված է գենդերային հիմնահարցերի հետ: «Միջազգային միգրացիոն գործընթացներում կանանց անտեսված լինելը չի համապատասխանում իրականությանը: Կանայք հատում են միջպետական սահմանը և միգրացիայի են դիմում գրեթե նույն արագությամբ, ինչպես տղամարդիկ»[2]: Միջազգային միգրացիայի տեսաբաններից Ռավենշտայնն անգամ նշում է. «Կինն ավելի հզոր միգրանտ է, քան տղամարդը»[3]: XX դարի միգրացիոն հետազոտությունների մեծ մասը վերաբերում էր տղամարդկանց միգրացիային. կանայք համարվում էին պասիվ դերակատարներ: 1970-1980-ական թվականներից սկսեցին հրապարակվել ուսումնասիրություններ, որտեղ կարևորվում էին միգրացիոն հոսքերում կանանց դերը և կին միգրանտների առանձնահատկությունները[4]: Այս առումով անմասն չմնաց ՀՀ-ն, սակայն միգրացիոն հոսքերում կանանց գործունեությունը և նշանակությունը ուսումնասիրվում են հիմնականում ավանդական մոտեցումներով՝ «ձգող» և «վանող» գործոնները քննելով, որը, տնտեսական, քաղաքական, մշակութային, պատմական, հոգեբանական, կոնֆլիկտաբանական և մի շարք այլ գործոնների հետ մեկտեղ առավելություն տալով սոցիալ-տնտեսական

[1] **Glenn, E. N**. The Social Construction and Instituionaliztion of Gender and Race: An Integraive framework.In Revisioning Gecr.Ed.M.M. Ferre, J. Lorber and B. B. Hess.Thousand Oaks. CA:Sage Publication . 1999. Pp-5.

[2] **De Laet, D. L**..Introduction: The Invisibility of Women in Scholarship on International Migration. In Gender and Immigration . Ed . G.A. Kelson and D. DeLaet.New York: New York University Press. 1999. Pp-13.

[3] **Ravenstein, E. G**.The Laws of Migration. Journal of the Royal Statistical Society, 48(2): 1885. Pp- 196.

[4] Տե՛ս **Donato, K. M**. Understanding U.S. Immigration: Why Some Countries Send Women and Others Send Men. In Seeking Common Ground Multidisciplinary Studies of Immigrant Women in the United States. Ed. D. Gabaccia. Westport, CT: Greenwood Press. 1992:

գործոններին (մասնավորապես ընդունող և դոնոր երկրների միջև աշխատուժի պահանջարկի անհավասարակշռությանը), անտեսում էր սոցիալական և ցանցային գործոնների ուսումնասիրությունը:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում միգրացիոն գործունեությունը հիմնականում կապում են տղամարդկանց հետ, սակայն գլոբալացման գործընթացների ազդեցության ներքո անգամ հայկական ավանդական ընտանիքներում փոփոխությունների են ենթարկվում ազգային արժեքները և պատկերացումները, և հայ կինը հատում է սահմանները՝ աշխատանք գտնելու և ընտանիքը պահելու համար: Վերջին ժամանակաշրջանում միգրացիոն ուսումնասիրությունները վկայում են, որ կանանց ընդգրկվածությունը միգրացիոն հոսքերում աստիճանաբար մեծանում է: Այսպես՝ 2002-2004 թթ. Հայաստանում աշխատանքային կին միգրանտների թիվը կազմել է 6.5 %, 2005-2007 թթ.՝ 14.1 %[5]: Վանաձորում 2013 թ.-ին աշխատանքային կին միգրանտների թիվը կազմել է 9% (մարզերում ավելի շատ են պահպանվում ավանդական պատկերացումները, իսկ մայրաքաղաքը ավելի արագ է իր վրա կրում գլոբալացման գործընթացների ազդեցությունը): Փոփոխությունների են ենթարկվում ոչ միայն ծավալները, այլև միգրացիայի դիմելու ձևերը: Եթե հայ կին միգրանտները նախկինում հիմնականում միգրացիայի էին դիմում ընտանիքի անդամների կամ բարեկամների հետ, ապա այսօր գնալով մեծանում է միայնակ կին միգրանտների թիվը, որոնք, արտագնա աշխատանքի միջոցով իրենց ընտանիքի ֆինանսական խնդիրները հոգալով, նպաստում են միգրացիոն հոսքերի ընդլայնմանը: Այս ամենն իր ազդեցությունն է ունենում նաև ընտանիքում կանանց դերի, ազգային արժեհամակարգի վրա:

Աշխատանքի նպատակն է ավանդական մոտեցումների հետ մեկտեղ սոցիոլոգիական տեսանկյունից նկարագրել սոցիալական ցանցային այն գործոնները, որոնք ազդում են կանանց կայուն միգրացիոն հոսքերի ձևավորման ու գործառության վրա: Այդ նպատակով իրականացվել է համալիր սոցիոլոգիական հետազոտություն, որտեղ կիրառվել են քանակական և որակական մեթոդներ: Վանաձոր քաղաքում իրականացվել է քանակական հարցում 2013 թ. գարնանը: Ընտրանքային համախմբությունն ընդգրկել է 1054 տնային տնտեսություն: Այս ծավալը հնարավորություն է տալիս ապահովել 3 % սահմանային սխալ՝ 5 % նշանակելիության մակարդակի համար: Նաև իրականացվել է խորին հարցազրույց վանաձորյան 15 կին միգրանտների հետ՝ ընդգրկող «ձնակույտի» մեթոդով: Հետազոտության հիմնական նպատակներն էին՝ պարզել միգրացիոն հոսքերի կառուցվածքային բնութագրերը,

[5] Տե՛ս «Migration and skills in Armenia: Results of the 2011-2012 migration survey on the relationship between skills, migration and development». CRRC. Europian Training Foundation 2013, էջ 8:

մասնավորապես կին և տղամարդ միգրանտների տոկոսային հարաբերակցությունը, սեռատարիքային կազմը, ինչպես նաև՝ կանանց միգրացիոն հոսքերի ձևավորման և գործառության մեխանիզմները, միգրանտ կանանց հիմնական խնդիրները և միգրացիայի հետևանքները:

Անդրադառնալով հետազոտության արդյունքներին՝ պետք է նշենք, որ ձևավորվել են կայուն գործող մի շարք միգրացիոն հոսքեր կոնկրետ ուղղություններով, որոնք սկսում են ստանալ տրանսազգային բնութագրեր: Սույն հոսքերի շրջանակներում իրականացվում են կին միգրանտների շրջաբերական տեղաշարժեր: Հետազոտությունները վկայում են, որ կանանց վանաձորյան միգրացիոն հոսքերը նախ և առաջ ուղղված են դեպի Թուրքիա, Մոսկվա (մասնավորապես՝ Ռամենսկի տարածաշրջան), Սոչի, Իվանովո, Ստավրոպոլ և Կրասնոդար:

Ամենամեծ բաժինն ընկնում է Թուրքիային: Համապատասխան ուղղությամբ միգրացիոն հոսքերը կարելի է դասել և՛ ճոճանակային (տևողությունը մինչև մեկ ամիս), և՛ սեզոնային (տևողությունը տատանվում է մեկ ամսից մինչև մեկ տարի) միգրացիայի դասերին, որտեղ սեզոնային միգրանտների զբաղվածության հիմնական ոլորտը առևտուրն է:

Կանանց՝ Վանաձոր - Թուրքիա միգրացիոն հոսքերի ստեղծմանը նպաստում են նաև Վանաձորում գործող միջնորդները, որոնք կանանց խումբ են հավաքում Թուրքիայում մաքրման աշխատանքներ, մեծերի և երեխաների խնամք, մարմնավաճառություն, ինչպես նաև մի շարք այլ ցածրակարգ աշխատանքներ իրականացնելու համար: Միջնորդները նախապես հոգում են միգրանտների ճանապարհածախսը և կացության, աշխատանքի տեղավորման խնդիրները՝ կնքելով ոչ ձևական պայմանագիր՝ աշխատավարձի համապատասխան տոկոսը ստանալու մասին: Վանաձորի մի քանի հեռուստալիքների («Լոռի TV», «Միգ TV») «վազող տողի», ինչպես նաև արդեն իսկ այդ հոսքերի մեջ ընդգրկված միգրանտների միջոցով միջնորդներն իրենց ծառայությունների մասին տեղեկացնում են բնակչությանը և ընդլայնում իրենց գործունեության ծավալները:

Առանձնահատուկ տեղ են գրավում Վանաձորից դեպի Ռամենսկ և Իվանովո կանանց հոսքերը, որ կարելի է դասել սեզոնային միգրացիայի դասին: Տվյալ ուղղություններով կանանց հոսքերը պայմանավորված են մի շարք գործոններով: Առաջինը այդ տարածաշրջաններում երկու երկրների գործատուների միջև առկա ոչ ձևական համաձայնությունն է. այդ տարածաշրջան են գործուղվում Վանաձորի կարի գործարաններում աշխատող կարող բանվորուհիները՝ որպես «էժան աշխատուժ»: Ճանապարհի և նախնական մյուս ծախսերը հոգում են Վանաձորի կարի արտադրամասերի տնօրենները՝ պայմանավորվածությամբ, որ վերադառնալուց հետո միգրանտները պետք է վճարեն իրենց աշխատավարձի որոշակի տոկոսը:

Հարկ է նշել, որ Իվանովոն հայտնի է որպես «Ռուսաստանի տեքստիլային մայրաքաղաք», հետևաբար ակնհայտ է դառնում հենց այս մասնագետների հոսքի պատճառը: Այս ամենը վկայում է այն մասին, որ Վանաձորից կանանց միգրացիոն հոսքերի ձևավորմանը նպաստում են նաև արտերկրյա կազմակերպությունները, որոնք ուղղակի թե անուղղակի նպաստում են Վանաձորում համապատասխան ենթակառուցվածքների և միգրացիոն ցանցերի ձևավորմանը:

Վանաձորի կանանց միգրացիոն հոսքերը ձևավորվում են նաև սոցիալական ցանցային գործոններով, այսինքն՝ ազգակցական - բարեկամական կապերի հիման վրա, որոնք պայմանավորում են միգրացիայի ուղղությունները և հաճախականությունը: Հետազոտության արդյունքները վկայում են, որ առկա է նաև որոշակի կապ կանանց միգրացիոն հոսքերի և համապատասխան երկրում բարեկամական-սոցիալական կապերի միջև: Արտերկրում բարեկամները սոցիալական կապիտալի դերում են հանդես գալիս, և կին միգրանտներից շատերը ոչ միայն ֆինանսական աջակցություն են ստանում, այլև իրենց ավելի պաշտպանված և անվտանգ են զգում, կրճատում են ռիսկերի զգալի մասը:

Վերը նշված օրինակները վկայում են այն մասին, որ Վանաձորում գործում են ոչ ձևական կազմակերպություններ, որոնք արդեն ձևավորված ենթակառուցվածքների միջոցով կանանց ընդգրկում են արտագնա աշխատանքի մեջ՝ ընդլայնելով կանանց միգրացիոն ցանցերը և առաջացնելով միգրացիայի նոր ուղղություններ:

Ուսումնասիրությունները վկայում են, որ մեկ անգամ գնացած և վերադարձած կին միգրանտների մի մասը շրջապատի կանանց սկսում է ներգրավել՝ այսպիսով աստիճանաբար ընդլայնելով միգրացիոն ցանցը:

Հետաքրքրական է, որ կին միգրանտներն ավելի մեծ թվով մարդկանց են ներգրավում արտագնա գործունեության մեջ, քան տղամարդիկ: Կանայք ավելի շատ բարեկամական սոցիալական ցանցերի ընդլայնմանն են նպաստում, իսկ տղամարդիկ՝ և՛ բարեկամական, և՛ ընկերական: Սա վկայում է այն մասին, որ կին միգրանտների թվաքանակի աճը կարող է ավելի արագացնել արտագաղթը, իսկ ինչպես վկայում են վերը նշված ցուցանիշները, միգրացիայի ֆեմինիզացման գործընթացները սկսվել են նաև ՀՀ-ում:

Կին միգրանտները նպաստում են այնպիսի միգրացիոն հոսքերի ձևավորմանը, ինչպիսիք են «մայր-դուստր», «մայր-որդի» ցանցերը: Ի տարբերություն տղամարդ միգրանտների, որոնք մեծ մասամբ միգրացիայի մեջ ներգրավում են տղաներին, կին միգրանտները երկու սեռի երեխաներին էլ, որպես կանոն, ներքաշում են միգրացիոն ցանցի մեջ, որը ևս մեկ անգամ ապացուցում է, որ կին միգրանտներն

ավելի են արագացնում միգրացիոն ցանցերի ընդլայնումը:

Անդրադառնալով կին միգրանտների կրթական մակարդակին՝ կարող ենք եզրակացնել, որ մեծ մասը ունի միջին մասնագիտական կրթություն, և շատ ավելի քիչ տոկոսը՝ բարձրագույն: Հետազոտության արդյունքները վկայում են, որ կանանց աշխատանքային միգրացիոն հոսքերը կարելի է բաժանել երկու հիմնական տեսակների՝ անմիջական, որն իրականացվում է անմիջապես Վանաձորից, և տարանցիկ, որն իրականացվում է «Վանաձոր - Երևան - արտերկիր» երթուղով: Կանանց աշխատանքային միգրացիոն հոսքերում ընդգրկվածների գերակշիռ մասը քառասունն անց կանայք են: Տարանցիկ միգրացիոն հոսքերում ավելի մեծ է բարձրագույն կրթություն ստացած երիտասարդ միգրանտների թիվը: Կարելի է նշել, որ անմիջական միգրացիոն հոսքերը ավելի շատ նպաստում են «մասնագետների» և «ցածրակարգ աշխատուժի» արտահոսքին, իսկ տարանցիկները՝ «ուղեղների» և «մասնագետների» արտահոսքին:

Արտաքին աշխատանքային միգրացիոն հոսքերը, ըստ տեղափոխման հաճախականության, կարելի է բաժանել երեք հիմնական տեսակների՝ երկարաժամկետ (մեկ տարուց ավել), սեզոնային (մինչև մեկ տարի) և ճոճանակային (մինչև մեկ ամիս): Վանաձորի կանանց միգրացիոն հոսքերի մեծ մասը ճոճանակային միգրանտներն են, և շատ ավելի քիչ տոկոսը՝ սեզոնային և մշտական միգրանտները: Ճոճանակային միգրացիայի որոշ մասը աստճանաբար վերածվում է սեզոնայինի և այնուհետև՝ մշտականի: Անգամ Վանաձորում, որտեղ, մայրաքաղաքի հետ համեմատած, ավելի շատ են պահպանվում հայկական ավանդական պատկերացումները և դերերը, կան ընտանիքներ, որտեղ տղամարդիկ են լքվածի կարգավիճակում. կանայք, ընդգրկվելով միգրացիոն հոսքերի մեջ և աստիճանաբար երեխաներին ընդգրկելով, մշտական բնակություն են հաստատում արտերկրում՝ տղամարդկանց թողնելով ՀՀ-ում: Այս ամենը վկայում է այն մասին, որ միգրացիոն հոսքերի մեջ կանանց ընդգրկվածությունը նպաստում է ընտանիքներում ավանդական դերերի փոփոխմանը, որոշ ընտանիքների քայքայմանը: Վերը թվարկված փոփոխությունները կարող են լինել կանանց միգրացիայի ոչ միայն հետևանք, այն պատճառ: Ամուսնալուծությունները և ընտանիքում կանանց ու տղամարդկանց դերերի փոփոխությունները կարող են դառնալ միգրացիոն հոսքերի մեջ կանանց ներգրավման հիմք: Այս ամենի հետ մեկտեղ՝ մի շարք ընտանիքներում կանայք են հանդես գալիս ֆինանսական կարիքները հոգացողի և ընտանիքը պահողի դերում:

Միգրացիոն գործընթացներում ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց ընդգրկվածությունը ծնում է բազմաթիվ խնդիրներ, որոնցից մի քանիսը վերը նշվեցին: Կին միգրանտների մեջ ևս մեծ թիվ են կազ-

մում արտերկրում անօրինական ճանապարհով աշխատող կանայք, որոնք, չունենալով համապատասխան գրանցում և աշխատանքի թույլտվություն, քիչ են վարձատրվում կամ ընդհանրապես չեն վարձատրվում: Նման իրավիճակներում մեծ մասամբ հայտնվում են միջնորդների կամ ԶԼՄ-ի միջոցով միգրացիոն հոսքերի մեջ ընդգրկվածները: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ քանիցս խաբեության զոհ դարձած կին միգրանտները չեն հուսահատվում և փնտրում են ուղիներ՝ արտերկրում աշխատանք գտնելու: Այս ամենը խոսում է այն մասին, որ միգրացիոն ցանցում ընդգրկվածությունն անգամ կարող է «կախվածություն» առաջացնել և դառնալ կենսակերպ:

Այսպիսով, ըստ մեր հետազոտությունների արդյունքների կարող ենք փաստել, որ կանանց աշխատանքային միգրացիան իր ուրույն տեղն է զբաղեցրել վանաձորյան արտագնա աշխատանքային հոսքերում: Այն իր ազդեցությունն է ունենում ընտանիքի դերային կառուցվածքի, կին միգրանտների արժեքային համակարգի վրա: Այն նաև ռիսկային գործոն է արտագնա աշխատանքով զբաղվող կանանց համար: Չնայած դրան՝ ստեղծվել են մի շարք պայմաններ, որոնք նվազեցնում են նշված գործոնների ազդեցությունը: Նշենք, որ միգրացիայի սոցիալական կարևորագույն գործոններից է միգրացիոն ենթակառուցվածքների մեջ կին միգրանտների ընդգրկվածությունը: Որպես կանոն՝ միգրացիոն գործընթացների մեջ ընդգրկված կին միգրանտներն արդեն ունեն միգրացիոն փորձ, որի շնորհիվ նրանք ընդլայնում են առկա միգրացիոն հոսքերը: Կին միգրանտների մեծ մասն ունի նաև բարեկամներ կամ ծանոթներ համապատասխան երկրում, որոնք կրճատում են միգրացիոն ռիսկերը: Ենթակառուցվածքների, միգրանտների սոցիալական կապերի և միգրանտների տրանսակցիաների միջոցով աստիճանաբար ձևավորվում են կայուն միգրացիոն ցանցեր, որոնք ապահովում են միգրացիոն տեղաշարժերը, սակայն միգրացիան դարձնում են բարդ և դժվար կառավարելի:

Բանալի բառեր - *միգրացիա, կանանց միգրացիոն հոսք, տղամարդկանց միգրացիոն հոսք, միգրացիոն ցանց*

МЕЛИНЕ КАРАКЕШИШЯН – ***Особенности женских трудовых миграционных потоков из г. Ванадзора.*** – В работе приведены социальные характеристики трудовых миграционных потоков женщин из Ванадзора. На основе количественных и качественных опросов, проведённых там весной 2013 г., анализируется демографическая структура, величина, причины и последствия женской трудовой миграции, а также её влияние на перемену традиционных семейных ролей. Особое место уделено женским миграционным сетям в этом городе, которые формируются в результате миграционных потоков и инфраструктур и способствуют увеличению объёмов внешней трудовой миграции. Кроме того, разобраны различия между женскими и мужскими социальными потоками из Ванадзора.

Ключевые слова: *миграция, женский миграционний поток, мужской миграционний поток, миграционная сеть*

MELINE GHARAKESHISHYAN – *Features of Women External Labor Migration Flows from Vanadzor.* – In the article, the social characteristics of external labor migration flows of women from Vanadzor are touched upon. The demographic structure, magnitude, causes and consequences of women labor migration, as well as their influence on the change of traditional family roles are analyzed in the following article, based on the results of quantitative and qualitative surveys conducted in spring 2013 in Vanadzor. A great attention is paid to Vanadzor women migration networks that are formed as a result of migration flows and infrastructure and which increase the volume of external labor migration. The differences between Vanadzor male and female social streams are also touched upon in this article.

Key words: *migration, women migration flows, men migration flows, migration network*

ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՏՈՄ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Հաղորդակցություն–շփում, մտքերի, տեղեկությունների, գաղափարների փոխանակում. այս կամ այն բովանդակության փոխանցումը մեկ գիտակցությունից մյուսին մատերիական բնույթի կրող նշանների միջոցով: Հաղորդակցություն երևույթի այսպիսի սահմանումը, որը հանդիպում է տարբեր հեղինակների մեկնաբանություններում և տեղ է գտել նաև փիլիսոփայական բառարաններում[1], կարող է բավարար համարվել թերևս դրա գիտական և մասնավորապես գրավոր դրսևորման պարագայում, որքանով այդ դեպքում առանձնակի և նպատակային է դրա ինֆորմատիվ–կոգնիտիվ գործառույթը: Թեև ավելի քան ակնհայտ է, որ այսկերպ կամայականորեն (կամ կոնվենցիոնալ կերպով) ոչ միայն նվազեցվում է տերմինի բովանդակությունը, այլև խնդրահարույց է հարակից այլ հասկացությունների հետ (օր.՝ տեղեկատվություն)՝ շփոթության կամ նույնացման հնարավորությամբ: Նպատակահարմար չի թվում նաև «հաղորդակցության» բովանդակության ընդլայնումը կամ փոխարինումը «շփում» հասկացությամբ, որքանով վերջինս ավելի լայն է և արտացոլում է մարդու (և ոչ միայն) կենսագործունեության այլ իրողություններ ու տարածաժամանակային ավելի ընդհանուր ծավալներ[2]: Մինչդեռ, ի դեմս հաղորդակցության և ի մասնավորի բանավոր հաղորդակցության, մենք գործ ունենք կենդանի գործընթացի հետ, որը, նյութական ու հոգևոր, գործառութային ու տեխնոլոգիական բազմազանությամբ հանդերձ, տեղ ունի սուբյեկտ–սուբյեկտ կոնկրետ հարաբերության մեջ և որոշակի նկարագրում: Այստեղ նշանակալի են դառնում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ՝ իրավիճակ, կողմերի հարաբերությունների բնույթ և աստիճան, հետաքրքրություններ, շահեր, նպատակներ, հոգեվիճակ և այլն, որոնք մի կողմից անհրաժեշտորեն ապահովում են գործընթացը, մյուս կողմից դառնում են դրանում միշտ առկա դժվարությունների պատճառն ու հիմքը: Իսկ դրանց «մեղավորը» հենց մարդն է՝ իր բարդ ու հակասական բնույթով, իր անհատական և հասարակական նկարագրով, իր զգուշավոր-շրջահայաց

[1] Տե՛ս «Философский энциклопедический словарь». М. 1983, էջ 269:

[2] Այս մասին մանրամասն տե՛ս **Ա. Մ. Վարդումյան**, Հաղորդակցություն և հռետորիկա, «Սիոն», 2002, № 4-5-6, էջ 195-196:

պահպանողականությամբ, ներփակությամբ և ազատության ու տիրապետման մղում-բնազդով, իր էգոիստ «ԵՍ»-ի և ալտրուիստ-բարոյականի համակեցությամբ: Հակադրության այս համադրությունն իր ամբողջական արտահայտությունն է գտնում մարդու վարքում, հարաբերություններում, ուր առավել մեծ ծավալ է զբաղեցնում հաղորդակցությունը՝ իբրև հասարակական կյանքի կազմակերպման անփոխարինելի բաղադրիչ:

Ցանկացած հաղորդակցություն, անկախ բնույթից և հաղորդակցվող կողմերից, ենթադրում է ընդհանուր իմաստով փոխներգործություն, որն առաջին հերթին և հիմնականում արտացոլվում է կրող սուբյեկտի աշխարհայացքային, մասնավորապես՝ դիրքորոշումային-արժեքային ինքնորոշվածության համակարգերում, չափազանց չի լինի ասել՝ ամբողջ հոգեկերտվածքում: «Բառը,- գրում է Ա.Վոյսկունսկին,- սովորաբար արտաբերվում է դիմացինի վրա ներգործելու նպատակով. նրան համոզել, տեղեկացնել, նախազգուշացնել, հասնել համաձայնության, առաջացնել ցանկալի էֆեկտ և այլն: Դրա համար խոսողից ամենից առաջ պահանջվում է լռողին վերածել լսողի»[3]:

Արտացոլման իր բարդ համակարգերով մարդը չի կարող սահմանափակվել եկած ինֆորմացիայի ընդամենը արձանագրմամբ (ինչը վիճարկելի է այսօր անգամ տեխնիկական սարքերի պարագայում) և գրանցել այն իբրև «չեզոք» իրողություն: Անգամ առօրյա բառապաշարում կիրառվում է «մերկ ինֆորմացիա» հասկացությունը՝ որպես դրա անվիարժեքության արտահայտություն: Այն հոգևոր պատկերի, գիտակցության փաստի, առավել ևս համոզմունքի բաղադրիչի վերածելու բարդ գործընթացում ամենաակտիվ մասնակցություն են ունենում սուբյեկտի հուզական, կամային նաև գեղագիտական զգացողություններն ու ապրումները, որոնց հիմքում, որպես վճռորոշ նախադրյալներ, մշտապես առկա են ինքնապաշտպանության (ինքնապահպանման), ինքնակայացման, ինքնահաստատման, մեկ բառով՝ ինքնագիտակցության մեխանիզմները: Դրանք արտացոլումը վերապրումի վերածող միջոցներ են, որոնց «խիստ վերահսողությամբ» մշակվող (հակառակ դեպքում՝ մերժում, մոռացում, անտեսում, անարձագանքություն) իմպուլսը հարմարեցվում, համապատասխանեցվում և այդկերպ ու միայն այդկերպ «արտոնվում» է սուբյեկտի ընդհանուր աշխարհայացքում: Այս գործընթացը, թերևս երբեմն առաջին հայացքից աննկատ, առավել դրամատիկ դրսևորում ունի կենդանի հաղորդակցության ժամանակ, երբ տարածաժամանակային փոքր միավորում տեղի ունի անհատական աշխարհայացքային սուբյեկտների անմիջական շփում:

Քանի որ անհնար է երկու սուբյեկտների միջև աշխարհայացքային

[3] **Войскунский А.** Я говорю, мы говорим. М. 1990, с. 115.

բացարձակ նույնականությունը, շահերի, հետաքրքրությունների, նպատակների, դրանց ռեֆլեքսիայի և լուծման ուղիների համարժեքությունը, կարելի է համարել, որ փոխազդեցության այս եղանակում այս կամ այն չափով մշտապես առկա է (ռեալ կամ պոտենցիալ կերպով) որոշակի հակադրություն, որն իր իմպլիցիտ կամ բացահայտ արտահայտությունն է գտնում սուբյեկտի ընկալման, գնահատման ու արձագանքման նկարագրում թե՛ ձևի և թե՛ բովանդակության առումով: Չբացարձակացնելով հանդերձ մարդու եսակենտրոն բնույթը՝ կարելի է ասել, որ հաղորդակցության պրոցեսում ռեցեպիենտը ի դեմս պրոպոնենտի առաջին հերթին տեսնում է «ուրիշ»-ին՝ այլ շահերի, հետաքրքրությունների, նպատակների կրողին, ով ներկա գործընթացում իրացնում, իրականացնում է իր (այլ) «ԵՍ»-ը: Հատուկ նպատակ չունենալով այս գործընթացում առանձնացնել հակադրության պահը՝ Կ. Յասպերսը հաղորդակցությունը որակում է իբրև «մարդկային կեցության համընդհանուր պայման», ուր «ԵՍ»-ը կայանում է՝ իրեն ուրիշի մեջ երևան բերելով[4]: Վերջինս ներկայանում է ոչ միայն մատուցվող ինֆորմացիայի բովանդակությամբ, այլև դրա աշխարհայացքային (այլ) մշակվածությամբ՝ ապրումային-արժեքային (այլ) կողմնորոշվածությամբ, մասնակցության ուղղորդմամբ, որոշակի նպատակադրությամբ: Իրավիճակի նման ընկալումը, անկախ սրության աստիճանից, գիտակցական թե անգիտակցական մակարդակից, որոշ իմաստով կարելի է համարել ինքնապաշտպանական կամ, ավելի ճիշտ կլինի ասել, ինքնության պաշտպանության ռեակցիա, մեղմ, աննկատ կամ բացահայտ արտահայտվող բացասական կամ գոնե ոչ լրիվ պատրաստակամ դիրքորոշում, որը բառիս ոչ խիստ իմաստով թերևս կարելի է որակել իբրև հաղորդակցային կոնֆլիկտ: «Յու. Վ. Կնորոզովը գտնում է,- ինչպես վկայում է Ա. Վոյսկունսկին,- որ հաղորդման փոխանցման ժամանակ հնարավոր են արգելք-խոչընդոտներ ոչ միայն կապի խողովակում, այլև հնարավոր է, որ հենց ինքը՝ հասցեատերը, պատրաստ չլինի տրված հաղորդումը հասկանալու ու ընդունելու»[5]: Եվ հասկանալու ու ընկալելու այս «պատրաստ չլինելը» պայմանավորված է ոչ թե մատուցվող ինֆորմացիայի բովանդակային թերիությամբ, ոչ թե հաղորդակցային համակարգերի ու ձևերի անհամապատասխանությամբ և նույնիսկ ոչ այնքան հաղորդակցվող կողմերի միջև եղած հարաբերությամբ, այլ այն, կարելի է ասել, բնական, աշխարհայացքային «դիմադրությամբ», որով կրող սուբյեկտը «ապահովագրվում» է այլ աշխարհայացքի ներգործությունից: «Ունկնդրի պատասխան ռեացիան ավելի բարդ է,- մեկնաբանում է վերոնշյալ հեղինակը,- ճիշտ և ոչ լրիվ ճիշտ ընկալման վրա ավելանում են մոտիվները, համոզմունքները,

[4] Տե՛ս **Jaspers K.** Vernunft und Existenz. Groningen, 1935, էջ 59:
[5] **Войскунский А.,** նշվ. աշխ., էջ 118-119:

նպատակները, մտադրությունները, տրամադրությունները, բնավորության յուրահատկությունները և շատ ուրիշ գործոններ, որոնցից յուրաքանչյուրը որևիցե անգամ կարող է որոշիչ դառնալ»[6]:

Սա իրողություն է, որի հաղթահարմանն ուղղված ուսումնասիրությունները (խոսքի մշակույթ, հասկացման տեսություններ, հռետորիկա) միանշանակ վկայում են հաղորդակցությունն ընդամենը տեղեկատվությամբ սահմանափակող և դրա զուտ իմացական-ինֆորմատիվ նշանակությունն ու գործառույթը բացարձակացնող մոտեցումների, մեղմ ասած, անհամոզիչ լինելը: Մինչդեռ հենց համոզմանը, աշխարհայացքային համարժեք արձագանքին է միտված (անկախ դրա լիարժեք գիտակցված թե չգիտակցված լինելուց կամ իրագործման կարողությունից) ցանկացած հաղորդակցություն: Եվ անգամ գիտական քննարկումներում, առավել ևս բանավեճում կողմերը խնդիր ունեն ոչ միայն հնարավորինս հիմնավորված դարձնել հարցի իրենց ընկալումը, այլև դա անել հնարավորինս «հարմարեցված» ռեցեպիենտին՝ տվյալ լսարանին: Այստեղ հնարավոր չէ իմաստային միանշանակություն ու ֆունկցիոնալ համարժեքություն տեսնել «հասկանալի»-ի և «ընդունելի»-ի միջև: Իսկ քանի դեռ չի կայացել դրանց համապատասխանեցումը, խնդրահարույց գործոն է մնում այն կանխակալ կոնֆլիկտը, հակադրությունը, որի լուծումը տեղի ունի ոչ այնքան ռացիոնալ–կոգնիտիվ ապացույցներում, որքան դրանց աշխարհայացքային ընկալումներում, «ԵՍ»-ի և «ուրիշ»-ի հնարավոր «հաշտեցման» մեջ: Այս հանգամանքի շեշտադրությամբ է պայմանավորված ժամանակակից որոշ փիլիսոփաների պահանջ–հորդորը՝ հաղորդակցային հարաբերություններում, անգամ փիլիսոփայական բանավեճում, փաստարկման մեջ հենվել, ապավինել օրինակներին ու համեմատություններին, որոնք առավել նպատակահարմար են և արդյունավետ կողմերի միջև աշխարհայացքային ընդհանրություն ձևավորելու գործընթացում[7]:

Այն, որ համեմատությունը կամ անալոգիան չեն կարող դիտարկվել իբրև խիստ ապացույց, իսկ խիստ դիտարկման դեպքում՝ ընդհանրապես իբրև ապացույց, որևէ այլակարծություն չի հարուցում տրամաբանական անհրաժեշտության, գիտական մեթոդաբանության տեսանկյունից: Մյուս կողմից, սակայն, անառարկելի է թվում դրանց անփոխարինելի դերակատարությունը անծանոթ, անորոշարկելի կամ երկընտրանքային իրավիճակներում, մասնավորապես՝ սոցիալ-քաղաքական և իրավական կարգավորումներում (նշենք, թեկուզ, նախադեպի գործառությունը արդարադատության պրակտիկայում): Դրանք առավել հասանելի և հուսալի այն գործիքներն են, որոնք իրենց, կարելի է ասել,

---

[6] Նույն տեղում, էջ 114:

[7] Տե՛ս «How I see Philosophy». In «Logical Positivism». (ed. By Ayer A. J.). New York. 1966, էջ 365:

«ավանդական-հիմնային» տեղն ունեն մարդու աշխարհայացքում ոչ միայն իմացական-ճանաչողական պատկերացումներում, ընկալումներում, այլև արժեքների, չափանիշների ու դիրքորոշումային ձևավորումներում: Համեմատության, համանմանության և օրինակի մեթոդաբանությամբ է կայանում և գործառում առօրեական գիտակցությունը, որը, անկախ անգամ իր իսկ կրող սուբյեկտի կողմից տրվող տեսական տարբեր որակումներից, իր նշանակալի խմբագրումներն է բերում մարդու վարքում ու կենսագործունության մեջ: Խոսելով իմացության գործընթացում մարդկային կանխակալ դիրքորոշումների, այսինքն՝ ողջախոհության համոզմունքների մասին, Թոմաս Ռիդը գրում է. «Ընդհանուր նախապաշարմունքը ելնում է հակվածությունից՝ չափելու ավելի քիչ ճանաչված և քիչ իմացվող իրերը նրանցով, որոնց ավելի լավ գիտենք, և որոնք մեզ ավելի ծանոթ են: Սա անալոգիական մտածողության հիմնադրումն է, որին մենք բնական մեծ հակվածություն ունենք, և որին իրոք մենք պարտական ենք մեր իմացության մեծ մասով»[8]: Իսկ բարոյահոգեբանական-աշխարհայացքային իրենց նշանակությամբ, ըստ Վ. Համիլտոնի, դրանք «այլ ճշմարտությունների թեստեր են»[9]:

«Թեստավորման» այդ համակարգի առկայությունն ու նշանակությունը, անկախ գիտապաշտական թերագնահատող, իսկ գիտականի ոլորտում՝ մերժող դիրքորոշումից, ավելի քան ակնհայտ են սոցիալական կյանքի կազմակերպման, մեկնաբանման ու գնահատման գործընթացներում, իսկ սովորական մարդու գիտակցության մեջ, առօրյա կողմնորոշումներում փոքր վերապահությամբ կարելի է ասել՝ դրանք զբաղեցնում են ամբողջ ծավալը: Դրանց նկատմամբ գիտական թերահավատությունը պայմանավորված է նախևառաջ դրանց հուզականության, ապրումային այն հագեցվածությամբ, որով կրող սուբյեկտը վերապրում է (հաղորդակցության դեպքում՝ ապրումակցում է պրոպոնենտին) եկող ինֆորմացիան իբրև արտաքին ներգործություն: Սակայն կարելի է կարծել, որ առաջին հերթին հենց այդ «շաղախն» է, որ հնարավոր և մեկնաբանության տեսակետից հասկանալի է դարձնում սուբյեկտ-սուբյեկտ հաղորդակցությունն ընդհանրապես: Եվ այս տեսակետից ավելի քան ընդունելի է Մ. Ս. Կագանի և Տ. Շիբուտանիի աներկբայորեն դրական գնահատականը դրան՝ իբրև կառուցողական անհրաժեշտության. «Համենայն դեպս անկասկած է թվում Տ. Շիբուտանիի այն պնդումը, որ «միջանձնային հարաբերությունների ուսումնասիրության համար հիմնական անալիտիկ միավորը զգացմունքն է»,

[8] «The Works of Thomas Reid D.D.». Now Fully Collected With Selections From His Unpublished Letters, v. 1, Seventh Edition, Edinburgh, 1872, p. 470.

[9] «The Encyclopedia of Philiosophy», ed by. Paul Edwards, vol.2, New York, London, 1967, p. 157.

քանի որ հենց նա է արտացոլում այն, թե մարդն ինչ նշանակություն ունի մյուս մարդու համար»[10]: Հաղորդակցության գործընթացի մեկնաբանությունը խիստ միակողմանի կլիներ, եթե դրա աշխարհայացքային բնույթը ներկայացվեր ընդամենը զգացմունքային կամ ապրումային նկարագրով: Վերջիններս, աշխարհայացքում ունեցած դերով և մյուս բաղադրիչներում նշանակալի մասնակցությամբ հանդերձ, չեն սպառում սուբյեկտի կողմից աշխարհի յուրացման ու արձագանքման մեխանիզմների ամբողջ ծավալը: Մարդկային հոգևորում ոչ պակաս կարևորությամբ ներկայացված այնպիսի գոնե հիմնական բովանդակությամբ առավելապես օբյեկտիվ իրողություններ, ինչպիսիք են արժեքային համակարգերը, հասարակական-սոցիալական պատկերացումները, սովորութային-ավանդութային-նորմատիվ ընկալումները և այլն, իրենց վճռորոշ մասնակցությունն են ունենում արտացոլման, հոգևոր պատկերի ձևավորման պրոցեսում, և ամենաանմիջական դրսևորում են գտնում արձագանքման մեխանիզներում: Ահա թե ինչու հաղորդակցության գործընթացում չկա և չի կարող լինել համաձայնություն, առավել ևս համամասնակցություն, քանի դեռ չի կայացել «հաշտեցում» կողմերի՝ հիշատակված հոգևոր պայմանավորումների միջև: Եթե սուբյեկտի դերի մարմնավորումը դետերմինացված է վերոնշյալ որակներով, ապա հասկանալի է դառնում ընդհանրացնող պնդումը, որ «համաձայնությունը կայանում է դերերի փոխադարձ ընդունման ճանապարհով: Երբ համաձայնություն է առաջանում, տեղի է ունենում աշխարհընկալումների փոխներթափանցում, որը թույլ է տալիս…. յուրաքանչյուր մասնակցի հասկանալ մյուս մասնակիցների տեսակետները: Համաձայնությունը նշանակում է, որ ինչ-որ պահի տարբեր մարդկանց մոտ գոյություն ունի իրավիճակի միևնույն սահմանումը»[11]:

Առաջին հայացքից չափազանց բարդ թվացող այս խնդրի լուծումը, սակայն, թեև հաճախ ոչ ակնհայտորեն ինքնադրսևորվող «ինքնամատուցմամբ», ամփոփված է հենց իր իսկ սուբյեկտի բնութագրում՝ որպես սոցիալականացված տարրի, կոմունիկացիոն էակի առանձնահատկություն: Կ. Յասպերսի համոզմամբ՝ մարդը որպես մեկուսի մի անհատ անհեթեթություն է…, «հաղորդակցությունը մարդկային կեցության համընդհանուր պայմանն է. հաղորդակցությունն այն աստիճան է ներթափանցում մարդու համապարփակ էությունը, որ այն ամենը, ինչ կազմում է մարդը …. ձեռք է բերվում հաղորդակցման մեջ»[12]: Եվ պետք է ենթադրել, որ վերը հիշատակված դժվարություն (կոնֆլիկտ) հարուցող «արգելք-խոչընդոտները» բարոյահոգեբանական (ընդհանրապես աշխարհայացքային) «ինքնապահապան բարիկադների» հետ

[10] **Каган М. С**. Мир общения. М. 1988, с. 260.
[11] **Шибутани Т**. Социальная психология. М. 1969, с. 122.
[12] **K. Jaspers**, նշվ. աշխ., էջ 59:

մեկտեղ պարունակում են առկա հակադրության, կոնֆլիկտի հաղթահարման ռացիոնալ և ապրումային բավարար նախադրյալներ՝ իբրև հաղորդակցությունը պայմանավորող, սպասարկող, ապահովող, պատկերավոր ասած՝ պարարտ հող հանդիսացող անհրաժեշտ հնարավորություն: Միաժամանակ պետք է նշել, որ այդ հնարավորությունների իրացումը տեղի չի ունենում ինքնաբերաբար, մեխանիկորեն՝ հաղորդակցության ցանկացած դրսևորման, կազմակերպման, ընթացքի կամ ընդամենը առկայության պարագայում, և հաղորդակցության արդյունավետ ու նպատակային գործառման խնդիր է մնում դրանց դիմադրող-խոչընդոտող գործոնից ընդունող-հարող-նպաստող գործոնի վերածելու անհրաժեշտությունը: Ժամանակակից գրականության մեջ այդ խնդրի լուծման համար կարևոր խոսքային պարամետր է համարվում ներգործության ֆասցինատիվ* միջոցների համակարգը՝ որպես ռեցեպիենտի հուզական-զգացական-էսթետիկական բնույթին միտված բաղադրիչ: «Ընդունողի ուղեղում,- գրում է Ա. Վոյսկունսկին,- ինֆորմացիայի խափանման խոչընդոտների չեզոքացմանն են ուղղված այսպես կոչված ֆասցինատիվ ազդանշանները… Որպես կանոն, ֆասցինացիան միախառնվում է հաղորդման հետ և ներգործում է ընդունողի վրա՝ զուգահեռ այն մասնաբաժին ինֆորմացիայի հետ, որին վերապահված է սեմանտիկական նշանակության դերը»[13]:

Տվյալ ուսումնասիրության համատեքստում իմաստավորելով ֆասցինացիայի երևույթը՝ փաստորեն մենք գործ ունենք դեռևս անտիկ մշակույթում ձևավորված և մեր օրերում իր դերն ու պրակտիկան ծավալող հռետորիկայի կոնկրետ գործառույթի հետ: Այն, բանավիճային տեխնիկական–տեխնոլոգիական հնարքների, միջոցների մշակումից զատ, կոչված է բացահայտելու մարդու ներքին ինքնությունն ու ինքնորոշվածությունը «երաշխավորող» առավել գործուն ու նշանակալի բարոյական, հոգեբանական ու արժեքային համակարգերի, դրանցում առկա (մասնավորապես հաղորդակցության գործընթացում) տարաբնույթ «զսպումների», կանխակալ անվստահության կամ անբարյացակամության գործոն–նախադրյալները, ինչպես նաև՝ վերջիններիս հաղթահարման, «չեզոքացման» հնարավորինս «անցավ» ու նպատակահարմար եղանակները: Հռետորիկայի այս խնդրառությամբ են պայմանավորված այն երեք հիմնական գործառույթները (ապացուցել, գրավել, բավականություն պատճառել), որոնք պարտավոր է ապահովել հռետորը (հաղորդակցության այլ ձևերում՝ հարաբերվող կողմերը) լսարանի հետ կենդանի փոխհարաբերության ժամանակ: Դրանցում արտացոլված է մարդու՝ իբրև ճանաչող-վերապրող-էսթետիկական էակի

* Ֆասցինացիան նախնական ընկալումներում համապատասխանում է կախարդությանը, հմայությանը, թովչությանը:

[13] **Войскунский А.,** նշվ. աշխ., 118-119:

ընդհանրական բնութագիրը, նրա աշխարհընկալման, աշխարհազգացողության ու վարքի մեկնակետը:

Ինչպես մատուցվող նյութի թե՛ բովանդակության, թե՛ ձևի մեջ, այնպես էլ թե՛ ընկալման և թե՛ արձագանքման մեջ միախառնված ներկայանում է անհատի առնչության ողջ սպեկտրը՝ խնդրո առարկային, որը, կարելի է ասել, փոքր, տեղայնացված մոդելն է նրա աշխարհընկալման ու աշխարհազգացողության: Եվ շփման պրակտիկայում մարդիկ միմյանց տարբերակում-ճանաչում են ավելի շատ դրանց դրսևորումներում, միմյանց մեջ դրանց «ընթերցանությամբ», որոնք թույլ կամ ուժեղ արտահայտված են առաջին հերթին մարդու հայացքում և հնչող խոսքում: Անհատի խոսքը յուրահատուկ է և նրան էապես բնութագրող՝ ոչ միայն ակուստիկ նկարագրով, ոչ միայն բառամթերքի կիրառությամբ, ժեստերի, միմիկայի, կեցվածքի անհատական դրսևորմամբ, այլև դրանցում ամփոփված, այսպես ասած, «ոգեղեն բովանդակությամբ»: Եվ հենց այդ «ոգեղենացված ինֆորմացիան» է, որ հանդես է գալիս որպես հաղորդակցության միջոց, և որի ոչ նույնականությունն է (փոխանցողի և ընդունողի միջև) գլխավոր նախապայմանը՝ կողմերի հակադրության, կոնֆլիկտի կամ առնվազն ոչ լիարժեք փոխըմբռնման: Եթե այս ամենին ավելացնենք նաև որոշ տեսաբանների հավաստումը, որ «…մենք խոսում ենք, որպեսզի ինքնարտահայտվենք, … ղեկավարենք ուրիշներին կամ ղեկավարվենք ուրիշներից»[14], ապա ավելի քան հասկանալի է դառնում հաղորդակցության գործընթացում վերը նշված դժվարություն-խոչընդոտ-դիմադրության առկայությունը և դրա հաղթահարման տեսական ու գործնական կարողությունների բացահայտման անհրաժեշտությունը:

Ահա թե ինչու դեռևս անտիկ մշակույթում այդքան կարևորվեց հռետորիկան իբրև ներգործուն խոսքի մշակում, տպավորիչ ու գեղեցիկ խոսքի արվեստ, իբրև հաղորդակցության առավել արդյունավետ և աշխարհայացքային «հաշտեցման» համապարփակ եղանակ: Վերջինիս շրջանակներում բացահայտվեցին ու կատարելագործվեցին խոսքը ոչ միայն հասկանալի, հիմնավոր, ուստի և՝ ընդունելի դարձնելու մեթոդները (բովանդակությանը, կառուցվածքին վերաբերող տեսություններ), այլև կենդանի արտահայտման պրոցեսում այն առավել համոզիչ դարձնող բարոյահոգեբանական (խոսքի ֆիգուրներ, տրոպներ) ու էսթետիկական անհրաժեշտ-նպատակահարմար մեխանիզմները (լինգվիստիկ և պարալինգվիստիկ միջոցներ): Թերևս դրանով է բացատրվում նաև սովորական մարդկանց կողմից մշտապես հռետորական հնարքների տարերային գործառությունը առօրյա հաղորդակցության պրակտիկայում:

---

[14] **Гасанов Г**. Риторика, или Почему я должен отвечать на вечные вопросы // (12. 06. 2003) www.youtube.com

Բանալի բառեր – *հաղորդակցություն, աշխարհայացք, արժեքային համակարգ, հռետորիկա*

АТОМ ВАРДУМЯН – ***Проблема мировоззренческой совместимости в процессе коммуникации.*** – Всякая коммуникация независимо от своей природы подразумевает общее взаимовоздействие, что в первую очередь отражается на мировоззренческих системах носящего субъекта. Поскольку абсолютная мировоззренческая идентичность невозможна, в данном методе взаимодействия существует определённая противоположность, которая находит имплицитное или открытое выражение в механизмах осознания, оценки и реакции субъекта. Риторика как наиболее эффективная и всеобъемлющая коммуникативная система направлена на их изучение. Кроме разработки дискуссионных технико-технологических способов, она призвана выявлять факторы-предпосылки наиболее значимых моральных, психологических и ценностных ориентаций.

Ключевые слова: *коммуникация, мировоззренческая идентичность, система ценностей, риторика*

ATOM VARDUMYAN – ***The Problem of World Outlook Compatibility in the Process of Communication.*** – Any communication, regardless of nature and communicative aspect, supposes an interaction which, first and foremost, is reflected in human worldview, in attitudinal and value- determination systems in particular. Since it is not possible to achieve absolute ideological similarity as well as equivalency of interests, goals, and means of conflict resolution, it can be considered that there exists, in the communicative mode of interaction, a certain extent of contradiction which is implicitly or explicitly expressed in human perception, assessment and response mechanisms. It is the study of these mechanisms that rhetorics, as a system of theoretical and pragmatic tools and methods to achieve a most productive communication and ideological “reconciliation”, focuses. Apart from processing technical-technological devices to carry out debates and discussions, it aims at revealing certain factors conditioning a person’s inner identity and self-determination - significant moral, psychological and value orientations and various expressions of reservedness, biased mistrust and disrespect (in the communication process in particular). In addition, rhetorics offers ways to overcome and “neutralize” the above-mentioned problems in a most expedient manner.

Key words: *communication, contradiction, conflict resolution, perception, assessment and response mechanisms, rhetoric*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ, ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ, ՍԵԴԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

1. Ներածություն: Հոդվածը հրատարակության ներկայացնելու պահին Հայաստանի Հանրապետությունում քաղաքական օրակարգի թիվ մեկ խնդիրը հանրաքվեի ներկայացվելիք Սահմանադրության նախագիծն է: Բնական էր սպասել, որ մենք խնդրո առարկա հիմնահարցերին կանդրադառնանք Սահմանադրության նախագծի համատեքստում: Դա չի կատարվել երկու պատճառով: Նախ, քննարկվող խնդիրների շրջանակն այս աշխատանքում ինդիֆերենտ է սահմանադրական նորմերի՝ հասարակական հիմնարար արժեքների, իրավական սկզբունքների միասնականությամբ դրսևորվող լուծումների բովանդակությանը: Անտարակույս շատ լավ է, երբ այդ նորմերն ունենում են բարձր նշաձողեր և իրատեսական են տեսանելի ապագայի համար: Սակայն դա այլ խնդիր է: Եվ երկրորդ, անդրադարձի բացակայությունը նախագծին պայմանավորված է նրանով, որ մեր կողմից առաջադրվող լուծումներն առավելապես մեթոդաբանական ուղղվածություն ունեն և ամփոփում են սահմանադրականության գնահատման, դրա ապահովմանը միտված կառուցակարգերի ու մեթոդների վերաբերյալ մեր մոտեցումները:

Այդուհանդերձ, չենք ցանկանում լիովին զերծ մնալ գայթակղությունից և չտեսնել, որ սահմանադրական փոփոխությունների համատեքստում առաջարկվող կառավարման հայեցակարգը հնարավորություն է ընձեռում բարձրացնելու նոր սկզբունքներով կառավարություն ձևավորելու սահմանադրական պատասխանատվությունը: Խոսքն իրական կոալիցիայի և ֆինանսատնտեսական հիմնախնդիրները նորովի կարգավորելուն է վերաբերում: Մյուս կարևոր խնդիրն այն է, որ նոր հնարավորություններ են ստեղծվում արդյունավետ ռեսուրսաօգտագործման ու երկրում հավաքվող դրամական միջոցների տնօրինման, հանրային շահի առավելագույնս իրացման խնդիրները լուծելու առումով:

Այս ամենը, թերևս, առանձին և՛ հետազոտության, և՛ բանավեճի առարկա է:

2. Սահմանադրական տնտեսագիտությունը և հանրային ընտ-

ությունը[1]: Վերջին տասնամյակների համաշխարհային գիտական ձեռքբերումներն առանձնացան միջառարկայական կապերի զգալի խորացմամբ՝ հանգեցնելով գիտակրթական նոր ուղղությունների առաջացման, որոնցից է նաև սահմանադրական տնտեսագիտությունը (US), որը սկսել է ձևավորվել նախորդ դարի երկրորդ կեսին և անցել է զարգացման բավական լուրջ ճանապարհ: Նրա հիմնադիր Ջեյմս Բյուքենենը 1986 թ. «Տնտեսական և քաղաքական որոշումների ընդունման տեսության սահմանադրական և պայմանագրային հիմքերի ձևավորումը» աշխատության համար արժանացել է Նոբելյան մրցանակի՝ տնտեսագիտության անվանակարգում:

US-ն լայն առումով դասական տնտեսագիտության վերածննդի կարևոր բաղկացուցիչն է: Այն կարելի է համարել Ադամ Սմիթի «օրենսդրության գիտություն» տեսության արդիականացման փորձ: Սա գիտության մի ուղղություն է, որը ձգտում է կրկին մերձեցնել տնտեսագիտությունը, իրավագիտությունը, քաղաքագիտությունը և փիլիսոփայությունը:

Ըստ Ջ. Բյուքենենի՝ «սահմանադրական տնտեսագիտությունն ուսումնասիրում է կանոնների (սահմանադրական) գործող հատկությունները, ինստիտուտները, որոնց շրջանակներում անհատները փոխազդում են, և այն գործընթացները, որոնք նպաստում են այդ կանոնների ու ինստիտուտների առաջացմանը և ընտրվելուն»[2]: US-ն բնորոշվում է նաև որպես գիտական ուղղություն, որը «փորձում է բացատրել իրավական - ինստիտուցիոնալ - սահմանադրական կանոնների այլընտրանքային համակցությունների գործող հատկությունները, որոնք սահմանափակում են տնտեսական և քաղաքական գործիչների ընտրությունն ու գործունեությունը»[3]:

Սահմանափակումների միջև ընտրությունն իր տեղը զիջում է սահմանափակումների ու կանոնների ընտրությանը: Սա է թերևս հատկանշականը, առավել բնորոշը US-ի իմաստաբանությանը:

Պետք է նշել, որ «սահմանադրություն» եզրն անգլերենում բազմիմաստ է, որով էլ պայմանավորած են US հասկացության իմաստային տարբերությունները: Առավել ընդունելի է լայնորեն ճանաչված հետև-

---

[1] Տե՛ս **Арутюнян Г.** Конституционная экономика или антиконституционность (коррупционность) экономики? // http://concourt.am/armenian/structure/president/articles/article-econ2014. pdf, **Ժ. Մխիթարյան, Ս. Նահապետյան,** Սահմանադրական տնտեսագիտություն. առարկայական տիրույթը և ուղղությունները, «Ֆինանսներ և էկոնոմիկա», № 9-10, 2014, **Ժ. Մխիթարյան,** Սահմանադրական տնտեսագիտության ձևավորման և զարգացման ընթացքի տեսամեթոդաբանական առումները, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները», Գիտաժողովի նյութերի ժողովածու, Եվրասիա միջազգային համալսարան, Եր., 2014:

[2] **Buchanan J.** The Domain of Constitutional Economics // Constitutional Political Economy, Vol. 1, № 1, 1990, p. 1.

[3] **Van den Hauwe L**. Constitutional economics // The Elgar companion to law and economics, second edition / Edited by Jurgen G. Backhaus. –Edward Elgar Publishing, 2005, p. 223-224.

յալ սահմանումը. US-ն գիտական ուղղություն է, որն ուսումնասիրում է ազգային տնտեսական համակարգի շրջանակներում անհատի տնտեսական և սոցիալական իրավունքների առավելագույն բավարարման հնարավորությունները՝ տնտեսական նպատակահարմարությունը սահմանադրական զարգացման առկա մակարդակի հետ օպտիմալ համակցման ճանապարհով[4]:

Հայտնի է, որ տնտեսագիտական վերլուծությունները կենտրոնանում են առկա սահմանափակումների պայմաններում ընտրության հիմնախնդրի վրա: Այդ սահմանափակումները դրվում են այն անհատների վրա, ովքեր պատասխանատու են ընտրության կատարման համար: US-ի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ վերլուծությունն ուղղորդվում է դեպի ընտրությունն արդեն սահմանափակումների միջև[5]:

US-ն պարունակում է տնտեսագիտության և իրավունքի տարրեր: Սակայն իրավաբանները հազվադեպ են անդրադառնում այս ոլորտին, ինչը ոչ միայն խոչընդոտում է գիտության այս ուղղության զարգացումը, այլև հաճախ հանգեցնում է մակերեսային կամ միակողմանի դատողությունների[6]: Մյուս կողմից, մասնագետները տնտեսագիտական տարատեսակ հասկացությունների և տնտեսական երևույթների շուրջ քննարկումներ են ծավալում, սակայն շրջանցում են սահմանադրական սկզբունքներն ու նորմերը՝ որպես հիմնախնդիրների լուծման նախապայման: Իշխանության տարբեր ներկայացուցիչների նկատմամբ բացակայում է իրավական լուրջ պահանջ, որ նրանք կարճաժամկետ կամ հեռահար տնտեսական որոշումներ կայացնելիս պարտավոր լինեն հետևելու Սահմանադրության մեջ ամրագրված նորմերին, ինչպես նաև այն սկզբունքներին, որոնք ուղղակիորեն արտացոլված չեն Սահմանադրության տեքստում, սակայն երկարաժամկետ հատվածում ապահովում են քաղաքացիների սոցիալական, տնտեսական և այլ իրավունքները[7]:

US-ի հիմնախնդիրների ուսումնասիրման համալիր մոտեցումն ունի գիտագործնական մեծ նշանակություն, քանզի այն թույլ է տալիս

---

[4] Տե՛ս **Лафитский В. И., Мау В. А.** Конституционная экономика и основы экономического положения личности // "Очерки Конституционной Экономики. 23 октября 2009 года". М., 2009, էջ 92, **Мишин А. А.** Конституционное (государственное) право зарубежных стран: Учебник для вузов, М., 2013, USLegal սահմանումների կայքէջը http: //www.definitions.uslegal.com/c/constitutional-economics, 06/08/14 թ. դրությամբ, «Конституционная экономика» / Отв. ред. **Г. А. Гаджиев**. М., 2010, էջ 11, **Баренбойм П. Д.** Соотношение доктрин верховенства права и правового государства как главный вопрос философии права и конституционализма. М., 2013, էջ 85:

[5] Տե՛ս **Buchanan J.,** նշվ. աշխ., էջ 2-3:

[6] Տե՛ս «Конституционная экономика», էջ 11:

[7] Տե՛ս **Barenboim P., Merkulova N.** «25th Anniversary of Constitutional Economics: The Russian Model and Legal Reform in Russia» // The World Rule of Law Movement and Russian Legal Reform. M., 2007, էջ 181:

հաղթահարել իրավաբանների՝ տնտեսագիտության հիմնահարցերից ավանդական անտեղյակությունը, իսկ տնտեսագետների կողմից՝ իրավունքի և հատկապես սահմանադրական իրավունքի հիմնահարցերից անտեղյակությունը[8]:

Տնտեսագետների և իրավաբանների միջև տարբեր հարցերի շուրջ ծավալվող քննարկումներում դիրքորոշումները տարբեր են (իհարկե՝ ոչ այնքան խորը, որքան էկոլոգի և տնտեսագետի պարագայում): Ինչպես նշել է ռուս առաջատար տնտեսագետներից Եվգենի Յասինը, «տնտեսագետների և իրավաբանների բանավեճերում, որպես կանոն, իրավացի են իրավաբանները, իսկ հաղթում են տնտեսագետները, քանի որ եթե չկա գումար այս կամ այն իրավունքի իրականացման համար, նշանակում է՝ այն այդպես էլ կյանքի չի կոչվի»[9]: Իսկ ռուս հայտնի իրավաբան, ակադեմիկոս Օ. Կուտաֆինի կարծիքով, ՍՏ-ն «հնարավորություն է տալիս տնտեսագիտության և իրավունքի հիմնախնդիրները դիտարկել մեկ ամբողջության մեջ և հասկանալ, որ դրանք անխզելիորեն փոխկապակցված են և շատ առումներով կանխորոշում են մեկը մյուսի զարգացումը»[10]: Այսպիսով, սահմանադրական տնտեսագիտությունը պահանջում է տնտեսական բազմագործոն ռազմավարություն երկրի ներսում և դրա սահմաններից դուրս, և ոչ թե պարզապես իրավիճակային և հաճախ պատահական տնտեսական որոշումներ՝ հիմնված գերազանցապես կարճաժամկետ օգուտների վրա:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ՍՏ-ն տնտեսագետների և իրավաբանների՝ պետության տնտեսական գործունեության ինստիտուցիոնալ-նորմատիվ ապահովման հիմնախնդիրների նկատմամբ սահմանադրական իրավունքի կիրառման հարցերի համատեղ ուսումնասիրություն է՝ հանուն տնտեսության զարգացման և երկրի քաղաքացիների նյութական բարեկեցության բարձրացման[11]:

ՍՏ-ի ակունքները հասնում են մինչև հանրային ընտրության տեսությունը, որը սահմանվում է որպես քաղաքագիտության նկատմամբ տնտեսագիտության կիրառություն: Երեք հենասյուները, որոնց առկայությունն ըստ էության նպաստել է հանրային ընտրության տեսության ձևավորմանը, հետևյալն են. ա) մեթոդաբանական անհատապաշտությունը, որի համաձայն՝ միայն անհատներն են ընտրում և գործում, բ) «տնտեսական մարդու» հայեցակարգը, որի համաձայն՝ մարդը ռացիոնալ ընտրություն կատարելու ընդունակ էակ է, գ) «քաղաքականությունը որպես փոխանակություն» սկզբունքը: Քաղաքական շուկայում ապրանքների ու ծառայությունների շուկայի համանմությամբ կատարվող

---

[8] Տե՛ս «Конституционная экономика» / Отв. ред. **Г. А. Гаджиев**. М., 2010, էջ 11:

[9] **Баренбойм П. Д.,** նշվ. աշխ., էջ 26-27:

[10] **Баренбойм П. Д., Лафитский В. И., Мау В. А., Захаров А. В., Меркулова Н. Ю.** Конституционная экономика для школ: Учебное пособие. М., 2006, с. 2.

[11] Տե՛ս **Баренбойм П. Д.**, նշվ. աշխ., էջ 85, 100:

փոխանակության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ պետությունը ներկայանում է որպես որոշումների կայացման վրա ներազդելու, ռեսուրսաբաշխմանը (ամենատարբեր) մասնակից լինելու յուրօրինակ միջավայր[12]:

«Սահմանադրականություն» ֆենոմենալ հասկացության համապարփակ ներկայացումը թերևս հնարավորություն կընձեռի բացահայտելու սահմանադրականության սոցիալ-տնտեսական հատույթը և առաջադրելու լուծումներ դրա «անհարթությունները» վերացնելու ուղիների վերաբերյալ:

3. «Սահմանադրականություն հասկացության» շուրջ: Համընդհանուր մոտեցման համաձայն՝ սահմանադրականությունը գաղափարների, սկզբունքների և կանոնների հավաքածու է, որտեղ բոլորը փորձում են պատասխանել այն հարցին, թե ինչպես ձևավորել այնպիսի քաղաքական համակարգ, որը հնարավորինս կբացառի կամայականությունը[13]: Ընդհանուր առմամբ կամայականությունն այն է, երբ կառավարողները առաջնորդվում են ըստ իրենց ցանկության, այն է՝ ամբողջական հայեցողականությամբ և կառավարվողների շահերի փոխարեն սպասարկում են սեփական շահերը: Սահմանադրականության բարձր մակարդակը թույլ է տալիս հնարավորինս խուսափել այդ վտանգներից՝ մշակելով մեխանիզմներ, որոնք սահմանում են, թե ով կարող է կառավարել, ինչպես և ինչ նպատակով: Իսկ թե ինչն է համարվում կամայականություն, մոտեցումները տարբեր են: Մոտեցումներից մեկի համաձայն (քաղաքական սահմանադրականություն)՝ կամայականությունը կառավարողների կողմից կառավարվողներին գերիշխելն է, ուստի փորձ է կատարվում խուսափելու դրանից՝ ստեղծելով քաղաքական հավասարության պայմաններ, որին հատուկ է պետական կառուցվածքում առկա բոլոր կարևոր խմբերի և կողմերի միջև իշխանական հավասարակշռությունը այնպես, որ ոչ մեկը չկարողանա կառավարել առանց կառավարվողների շահերը հաշվի առնելու: Երկրորդ՝ առավել արդիական և ընդունված մոտեցման համաձայն (իրավական սահմանադրականություն)՝ կամայականությունը պայմանավորված մարդու իրավունքների խախտումներով, ուստի փորձ է կատարվում է ստեղծել դրանց պաշտպանության մեխանիզմներ՝ իշխանության բաժանման և դատականորեն պաշտպանվող սահմանադրությամբ[14]:

Իրավացի են նրանք, ովքեր պնդում են, որ սահմանադրականությունը դոկտրինա է, ըստ որի՝ կառավարության իշխանությունը պետք է

---

[12] Տե՛ս **Հ. Սարգսյան, Ա. Մարկոսյան**, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Եր., 2014, էջ 17-20:

[13] Տե՛ս «Concise Routledge Encyclopedia of Philosophy», General editor: **Craig Edward**. London: Routledge, 2000, էջ 171:

[14] Տե՛ս **Badie, B., Berg-Schlosser, D., & Morlino, L.** (Eds.). International encyclopedia of political science, Thousand Oaks, CA: SAGE Publications, 2011:

սահմանափակվի անհատական իրավունքներով և հակակշիռների ու զսպման մեխանիզմով[15]: Այս ամենից հետևում է, որ «սահմանադրականություն» հասկացությունը բնութագրելու համար անհրաժեշտ է «սահմանադրություն» հասկացությունը դիտարկել գործառութային տեսանկյունից: Այս առումով սահմանադրության առաջնային գործառույթը մարդու իրավունքների պաշտպանությունն է, իսկ երկրորդը՝ առաջինի իրագործման և ինստիտուցիոնալ ապահովման մեխանիզմը՝ իշխանությունների բաժանումը: Այս միտքը լավագույնս արտացոլված է սահմանադրականության դասական աղբյուրներից մեկում՝ «Մարդու իրավունքների ֆրանսիական հռչակագրի» 16-րդ հոդվածում, ըստ որի՝ «յուրաքանչյուր հասարակություն, որում իրավունքները երաշխավորված չեն, կամ իշխանական թևերի բաժանումը սահմանված չէ, չունի սահմանադրություն»[16]:

Նշենք նաև, որ սահմանադրականությունը չպետք է դիտվի բացառապես որպես պետական իշխանության սահմանափակում (նեգատիվ սահմանադրականություն), քանի որ այդ դեպքում բաց է թողնվում նրա հաջորդ կարևոր բնույթը. սահմանադրականությունը պահանջում է նաև արդյունավետ և իրազեկ պետական ինստիտուտների առկայություն, որոնց գործունեությունն ուղղված է պետության գոյության հիմնական նպատակի իրացմանը՝ իր անդամների բարեկեցության բարձրացմանը, այսինքն՝ ունի նաև դրական կողմ[17]:

Ուստի սահմանադրականությունն առկա է պետական-հասարակական այն համակարգերում, ուր սահմանադրական նորմերն ու սկզբունքներն ապրող իրողություն են, ձևավորվել է սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ ու բավարար միջավայր, ուր սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն, և առկա է սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ, ուր սահմանադրությունը ոչ թե գործիք է պետական իշխանության ձեռքին, այլ քաղաքացիական հասարակության հիմնական օրենքն է, միջոց է հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխավորելու համար՝ **ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլև սահման դնելով իշխանությանը, այն սահմանափակելով իրավունքով:** Այլ կերպ ասած՝ սահմանադրականությունը հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունն է, դրանց՝ որպես ապրող իրողության գոյությունն է հանրային կյանքում, յուրաքանչյուր

---

[15] Տե՛ս **Berggren, N., Karlson, N.,** Constitutionalism, division of power and transaction costs, Public Choice, № 117, 2003:

[16] Concise Routledge Encyclopedia of Philosophy, General editor: **Craig Edward**. London: Routledge, 2000, p. 171.

[17] Տե՛ս **Barber, Nicholas W.** Constitutionalism: Negative and Positive, Oxford Legal Studies Research Paper № 7/2015, 2015:

անհատի քաղաքացիական վարքագծում, պետաիշխանական լիազորությունների իրականացման գործընթացում[18]:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ սահմանադրականությունը գաղափարների և հայացքների համակարգ է, որտեղ մարմնավորված են սահմանադրական պետության մասին պատկերացումները, դրանց սահմանադրական ձևակերպումները, ինչպես նաև նման գաղափարների և դրանք ամրագրող նորմերի իրացման քաղաքական-իրավական փորձը: Սահմանադրական պետության հիմնական բնութագրիչներն ամփոփված են նրա չորս կարևորագույն հատկանիշներում. առաջինը իրավունքի գերակայության գաղափարն է, որը նշանակում է իշխանության ենթարկում իրավունքին և իշխանության սահմանափակում իրավունքով, երկրորդ՝ մարդու ազատությունը և նրա արժանապատիվ գոյությունը ապահովվում են իշխանության կամայականության նկատմամբ սահմաններ դնելու միջոցով և պետության ու անհատի փոխադարձ պատասխանատվության պայմաններում օրենքով ամրագրված իրավունքների և ազատությունների երաշխավորման պետության պարտականությամբ, երրորդ՝ պետական իշխանության կազմակերպումը հիմնվում է այնպիսի սկզբունքների վրա, որոնք բացառում են դրա կենտրոնացումը մեկ անձի ձեռքում և ապահովում են պետական մարմինների փոխադարձ կապն ու հսկողությունը, չորրորդ՝ ժողովրդական ներկայացուցչության գաղափարները մարմնավորվում են իշխանական մարմինների ձևավորման ու գործունեության ոլորտում, և իշխանության իրացումը կատարվում է ժողովրդի անմիջական մասնակցության ապահովմամբ, այդ թվում՝ որոշումների ընդունում և իշխանության գործունեության նկատմամբ հսկողություն[19]:

Սահմանադրականության մակարդակի գնահատումը նախևառաջ պահանջում է դիտարկվող հասկացության պարզորոշում՝ գնահատման նկատառումներից ելնելով, որից անմիջականորեն կբխի սահմանադրականության գնահատման կառուցվածքային պատկերը: Վերջինս իրագործվել է սահմանադրականության գնահատման հայեցակարգային մոտեցումների մշակմամբ[20], որի համատեքստում առաջարկվել է հետևյալ սահմանումը. **«Սահմանադրականությունը զարգացման այնպիսի մակարդակ է, երբ սահմանափակված է պետական իշխանության կամայականության հնարավորությունը, այն զսպվում է մարդու իրավունքներով և իշխանական թևերի բաժանման մեխանիզմով, երբ պետական իշխանությունը գործում է արդյունավետորեն՝ ծա-**

---

[18] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» / ընդհ. խմբ. **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**, Եր., 2010:

[19] Տե՛ս **Кутафин О.** Российский конституционализм. М., 2008:

[20] Տե՛ս **Ժ. Միսիթարյան,** Սահմանադրականության գնահատման հայեցակարգային մոտեցումները, // Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր, հատոր 12, № 3, 2015:

ռայելով քաղաքացիների բարեկեցության անընդհատ բարձրացման վերջնանպատակին, երբ հիմնական սահմանադրական արժեքներն ապրող իրողություններ են»:

Հիմնվելով այս սահմանման վրա՝ առաջարկում ենք սահմանադրականության գնահատման հետևյալ կառուցվածքային պատկերը՝



Առաջարկված կառուցվածքային ձևաչափի տարրերից յուրաքանչյուրին համապատասխանեցվել է գնահատման ցուցիչների և ենթացուցիչների համախումբ, ինչի շնորհիվ ամբողջականացվել է սահմանադրականության կառուցվելիք համաթիվը: Ընդհանուր պատկերը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

ՑՈՒՑԻՉ	N	ԵՆԹԱՑՈՒՑԻՉ
Ի. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ		
1. Պատշաճ կենսամակարդակի իրավունք	1.1.	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ
	1.2.	Աղքատության մակարդակ
	1.3.	Գնաճ
	1.4.	Միգրացիոն սալդո
	1.5.	Ազգային խնայողությունները ՀՆԱ-ում
2. Սեփականության իրավունք	2.1.	Սեփականության իրավունքներ
	2.2.	Մտավոր սեփականության պաշտպանվածությունը
3. Աշխատանքի իրավունք	3.1.	Գործազրկության մակարդակ
	3.2.	Աշխատանքի ազատությունը
	3.3.	Աշխատանքի ընդունման դժվարությունը և նվազագույն աշխատավարձի ազդեցությունը
	3.4.	Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները
	3.5.	Ժամային կարգավորումները
	3.6.	Աշխատողների իրավունքներ

	3.7.	Համագործակցությունը գործատու-աշխատող փոխհարաբերություններում
	3.8.	Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կապը
	3.9.	Տաղանդավոր անձանց պահելու երկրի ունակությունը (ուղեղների արտահոսքը)
4. Սոցիալական ապահովության իրավունք	4.1.	Ջինիի գործակից
	4.2.	Սոցիալական ապահովության համակարգ
	4.3.	Հնարավորությունների հավասարություն
	4.4.	Տրանսֆերտներ և լրահատկացումներ
5. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք	5.1.	Գործարարության ազատությունը
	5.2.	Մասնավոր ընկերությունների գործունեության դյուրինություն
	5.3.	Հակամենաշնորհային միջոցառումներ
	5.4.	Տեղական մրցակցության ինտենսիվությունը
	5.5.	Շուկայի գերիշխանությունը
	5.6.	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը
6. Կրթության իրավունք	6.1.	Գրագիտության մակարդակ
	6.2.	Կրթություն/հետազոտությունների զարգացում
	6.3.	ՄԱԿ-ի կրթության համաթիվ
	6.4	Կրթական համակարգի որակը
	6.5.	Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը
	6.6.	Երկրորդային կրթության (բակալավրիատ) բնագավառում սովորողների ընդգրկվածությունը
	6.7.	Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածությունը
II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ		
7. Մտքի և դավանանքի ազատության իրավունք	7.1.	Կրոնի ազատություն
8. Համոզմունքների ազատության և արտահայտվելու իրավունք	8.1.	Խոսքի և մամուլի ազատություն
	8.2.	Ազատ ձայնի իրավունք
	8.3.	Մամուլի ազատության համաշխարհային համաթիվ
	8.4.	Մամուլի ազատությունը
	8.5.	Արտահայտման և համոզմունքների ազատություն
9. Խաղաղ հավաքների և միություններ կազմելու իրավունք	9.1.	Հավաքներ և միություններ կազմելու ազատություն
	9.2.	Համախմբվելու/հավաքվելու իրավունք
	9.3.	Ասոցացիոն և կազմակերպական իրավունքներ
10. Տեղաշարժման ազատություն	10.1.	Ներքին տեղաշարժման ազատություն
	10.2.	Արտաքին տեղաշարժման և ճանապարհորդելու ազատություն
11. Երկրի կառավարմանը մասնակցելու/	11.1.	Ընտրական գործընթաց
	11.2.	Ազատ և արդար ընտրություններ
	11.3.	Ընտրական ինքնորոշում

ընտրելու իրավունք	11.4.	Քաղաքական բանտարկություններ
	11.5.	Քաղաքական բազմակարծություն և մասնակցություն
	11.6.	Կուսակցական համակարգը
12. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ընդհանրական ցուցիչներ	12.1.	Քաղաքացիական իրավունքներ
	12.2.	Քաղաքացիական հասարակության ավանդույթները
	12.3.	Քաղաքացիական հասարակության մասնակցությունը
	12.4.	Ձայն և հաշվետվողականություն
13. Իրավունքի գերակայություն	13.1.	Իրավունքի գերակայություն
III. ԻՇԽԱՆԱԿԱՆ ԹԵՎԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ		
14. Իշխանական թևերի բաժանում	14.1.	Իշխանության և գործադիր մարմնների տարանջատում
15. Դատական իշխանություն	15.1.	Դատական համակարգի անկախությունը
	15.2.	Անաչառ դատարաններ
16. Գործադիր իշխանություն	16.1.	Կառավարության գործունեությունը
	16.2.	Կառավարության արդյունավետություն
	16.3.	Կառավարման որակ
	16.4.	Կառավարության ծախսումների շռայլումը
	16.5.	Կառավարության կարգավորումների բեռը
	16.6.	Կառավարության քաղաքականության թափանցիկությունը
17. Օրենսդիր իշխանություն	17.1.	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի կարգավորման գործում
	17.2.	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը խնդրահարույց հարցերի կարգավորման գործում
18. Կոռուպցիա և հովանավորչություն	18.1.	Կոռուպցիայից ազատությունը
	18.2.	Ոչ պաշտոնական վճարները պետական պաշտոնյաներին
	18.3.	Պատժամիջոցներ պաշտոնական դիրքի չարաշահման համար
	18.4.	Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը
	18.5.	Անօրինական վճարներ և կաշառակերություն
	18.6.	Պետական այրերի վճիռների վրա հովանավորչության ազդեցությունը
	18.7.	Կոռուպցիայի նկատմամբ հսկողություն

4. Սահմանադրականության սոցիալ-տնտեսական հատույթը: Այն նախևառաջ զատորոշվում է սոցիալական և տնտեսական իրավունքների իրացվածության տիրույթում: Դրանք ընդգծված կարևորություն ունեն զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների համար, ինչը հստակ տեսանելի է Հայաստանի Հանրապետության օրինակով:

Մեր պետության առջև ծառացած կարևորագույն մարտահրավերները սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն են, որոնք իրենց կարևորությամբ թերևս զիջում են միայն ազգային անվտանգությանը: Իսկ եթե փորձենք բանաձևել, թե ինչ է արտագաղթն այս համատեքստում, ապա դա կարելի է անվանել անգամ սահմանադրության նկատմամբ անարգանքի կարևորագույն ցուցիչ, քանի որ քաղաքացիների մի որոշակի խումբ փաստորեն դուրս է գալիս հայրենական սահմանադրության գործողության տիրույթից՝ տեղաշարվելով սահմանադրական կարգավորման օտար դաշտ:

Եթե փորձենք հանրագումարի բերել համահասարակական տրամադրությունները, ապա «միջին» ընտանիքի համար ամենասուր դրսևորումներն են՝ աշխատանքի բացակայությունը, եկամուտների ցածր մակարդակը, մրցակցային անհավասար պայմանները, սոցիալական գերբևեռացվածությունը, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցածր մակարդակը և նմանատիպ այլ հիմնահարցեր, կամ որ նույնն է՝ Սահմանադրությամբ ամրագրված և հռչակված աշխատանքի, պատշաճ կենսամակարդակի, սոցիալական ապահովության, ձեռնարկատիրական գործունեության ազատության և այլ սոցիալ-տնտեսական իրավունքների անբավարար իրացվածությունն է հասարակության զգալի հատվածի համար:

Այս առումով սահմանադրականության սոցիալ-տնտեսական հատույթի հետազոտումը ընդգծված կարևորություն է ստանում՝ նկատի առնելով վերջինիս հիմնարար դերը սահմանադրականության հաստատման գործում:

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված սոցիալ-տնտեսական իրավունքների կազմն է[21]՝

❖ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է **սեփականության իրավունքը** (հոդված 8), յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը… Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի… Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով (հոդված 31),

❖ պետությունը **պաշտպանում է սպառողների շահերը**, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ (հոդված 31.1),

❖ յուրաքանչյուր ոք ունի **աշխատանքի ընտրության ազատություն**: Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահման-

[21] Սոցիալ-տնտեսական իրավունքների թե՛ կազմի և թե՛ բովանդակության փոփոխությունները Սահմանադրության նախագծում կարող են դառնալ առանձին ուսումնասիրության և համեմատական վերլուծության (այդ թվում՝ այլ երկրների կտրվածքով) առարկա:

ված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխտանքային պայմանների իրավունք… (հոդված 32),

❖ յուրաքանչյուր ոք ունի **հանգստի իրավունք**… (հոդված 33),

❖ յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված **ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք**: Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են… (հոդված 33.1), Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը (հոդված 8),

❖ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար **բավարար կենսամակարդակի**, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար (հոդված 34),

❖ յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով **բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք**: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք… (հոդված 38),

❖ յուրաքանչյուր ոք ունի **կրթության իրավունք**: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի… Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է… Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով… (հոդված 39),

❖ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝ 1) պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը, 2) նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը, 3) խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը, 4) իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը… 8) նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը… 12) ապահովել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը: Պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել սույն հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար (հոդված 48):

Վերոնշյալ իրավունքների մեծ մասն ունիվերսալ իրավունքներ են և իրենց ամրագրումն են ստացել «Մարդու իրավունքների միջազգային

օրինաշարում», մասնավորաբար՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» և «Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում»:

Չնայած սահմանադրականության սոցիալ-տնտեսական հատույթի զատորոշման գործում սոցիալ-տնտեսական իրավունքների առաջնայությանը՝ պակաս կարևոր չէ նաև դրանց իրացման համար պատասխանատու պետաիշխանական մարմինների դերը: Մասնավորապես, այդ իրավունքների ապահովման, ինչպես նաև տնտեսական կայունության, աճի և զարգացման նպատակներով պետությունն առաջին հերթին վարում է հարկաբյուջետային և դրամավարկային տնտեսական քաղաքականություն, որոնցից առաջինի պատասխանատվությունը կրում է կառավարությունը՝ հետապնդելով տնտեսական աճի ապահովման առաջնահերթ խնդիրը, իսկ երկրորդը՝ կենտրոնական բանկը՝ ապահովելով գների կայունությունը:

Այս համատեքստում կարևորություն են ստանում այնպիսի սահմանադրական կարգավորումների և դրանց փաստացի իրացմանը վերաբերող հարցեր, ինչպիսիք են՝ հարկերն ու հարկումը, բյուջեն և բյուջետային գործընթացը, վերահսկիչ պալատի, կենտրոնական բանկի սահմանադրական կարգավիճակը, տնտեսական մրցակցության պետական պաշտպանությունը, սեփականության իրավունքի պաշտպանությունը, ինչպես նաև լայն առումով՝ պայմանագրերի ու օրենքների կիրարկման մակարդակը, դատական համակարգի անկախությունն ու անաչառությունը, ողջ պետական համակարգի գործունեության արդյունավետությունը, կոռուպցիայի մակարդակը և այլ հիմնահարցեր: Նշվածներից յուրաքանչյուրի դերը սոցիալ-տնտեսական իրավունքների իրացվածության մակարդակի բարձրացման և հետևապես՝ սահմանադրականության մակարդակի բարելավման հարցում խիստ որոշակի է:

5. Սահմանադրականության մակարդակի գնահատման և դրա բարձրացման հիմնահարցերը կառավարման առումով[22]: Մինչ այս քննարկված հիմնահարցերի վերջնանպատակը սահմանադրականության մակարդակի գնահատմանն ուղղված (այդ թվում՝ վերը բերված աղյուսակում ներկայացված հայտանիշների կիրառությամբ) մեթոդների բացահայտումն է:

Ճանաչողության և դասակարգման մեթոդները լայն կիրառություն ունեն հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում, որոնցում առաջացող խնդիրները պահանջում են երևույթներն ու օբյեկտներն ուսումնասիրել դրանց բնորոշ որոշակի հայտանիշների միջոցով: Որպես հետազոտման առարկա են հանդես գալու բազմաչափ

[22] Տե՛ս **Հ. Սարգսյան, Գ. Տոնոյան, Ն. Քոչինյան,** Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում, Եր., 2015, **Հ. Սարգսյան, Ժ. Մխիթարյան**, Երկրի սահմանադրականության մակարդակի գնահատումը դիսկրետ մոդելավորման և կլաստերային վերլուծության մեթոդներով, ՀՊՏՀ Բանբեր, № 2, 2015:

օբյեկտները, որոնց ուսումնասիրության համար կիրառվում են մասնավորաբար դիսկրետ մոդելավորման և կլաստերային վերլուծության մեթոդները:

Վերջիններիս օգնությամբ կատարվող թեստային հետազոտությունների նպատակն է երևույթներն ուսումնասիրելիս՝ ա) գնահատել հայտանիշների կարևորության աստիճանը, բ) դասակարգել երկրները, գ) որոշել կոնկրետ երկրի՝ որոշակի դասում (ըստ սահմանադրականության մակարդակով որոշվող սանդղակի) հնարավոր ընդգրկման պայմանները:

Կլաստերային վերլուծությունը հնարավորություն է ընձեռում հեռավորության չափման որևէ եղանակի ընտրությամբ օբյեկտների բազմությունը տրոհել համասեռ կոմպակտ կլաստերների (խմբերի, դասերի) այնպես, որ տրոհման խմբերը միմյանցից հեռու լինեն (տարբերվեն), իսկ յուրաքանչյուր խմբում ընդգրկված օբյեկտները՝ միմյանց մոտ: Որոշ դեպքերում տրոհման խմբերն ունենում են իրենց «կենտրոնները» (տիպական օբյեկտը):

Այժմ քննարկենք սահմանադրականության գնահատման համար առաջադրվող խնդիրների դրվածքը: Դիտարկենք նմանատիպ երկրների վերջավոր բազմություններ (դասեր): Դիցուք ունենք փորձագիտական կամ անմիջական չափումների արդյունքների հիման վրա ստացված ցուցանիշների աղյուսակներ, որոնցում զետեղված տվյալները պարբերաբար հրապարակվում են Համաշխարհային բանկի շտեմարաններում: Այդ աղյուսակների տարրերը ցույց են տալիս, թե յուրաքանչյուր երկիր ինչ չափով է բավարարում հայտանիշներից յուրաքանչյուրը: Քննարկման առարկա կարող են լինել հետևյալ խնդիրները.

I. Խնդիրներ երկրների՝ տրված բազմության ուսումնասիրման շրջանակներում, մասնավորապես՝

ա. հայտանիշի տեղեկատվական կշռի որոշում: Հետազոտվում են երկրների բազմությունը և որոշվում գնահատվող երևույթի նկատմամբ հայտանիշերի հարաբերական կարևորության չափը:

բ. Երկրի տեղեկատվական կշռի որոշում: Հայտանիշների տեղեկատվական կշիռների կիրառությամբ երկրները տրոհվում են դասերի՝ ըստ նախապես ընտրված հայտանիշի կարևորության, և ըստ այդմ զատորոշվում են երկրների տվյալ բազմությունում ամենատիպական երկրները:

գ. Նոր երկրի ճանաչողության խնդիր: Նոր ուսումնասիրվող երկրի համար որոշվում է, թե այն ինչ չափով է բավարարում այս կամ այն հայտանիշին, և կարելի՞ է արդյոք այն ներառել երկրների դիտարկվող բազմությունում:

II. Խնդիրներ երկրների տարբեր դասերի ուսումնասիրման շրջանակներում: Դիցուք երկրների դիտարկվող բազմության տարրերը,

ըստ որոշակի հայտանիշը ինչ-որ «չափով» բավարարելու պայմանի, տրոհված են դասերի: Քննարկվող խնդիրներն են.

ա. Հայտանիշի տարբերակող կշռի որոշում: Որոշվում են հայտանիշների կարևորության աստիճանները, որոնցով տարբերակվում են երկրների տրոհման դասերը՝ հայտանիշները դասավորելով ըստ կարևորության նվազման կարգի:

բ. Նոր երկրի դասակարգման խնդիր: Նոր ուսումնասիրվող երկրների բազմության յուրաքանչյուր տարրի համար որոշվում է, թե այն որ դասում կարելի է ներառել:

գ. Երկրի փոխակերպման (լավարկման) խնդիր: Որոշվում է, թե որոշակի դասին պատկանող տրված երկրի որ հայտանիշներն են կարևոր, որոնք փոփոխելով (լավացնելով)՝ այդ երկիրը կհայտնվի ավելի բարձր դասում:

Քննարկվող խնդիրների համատեքստում կարող են ձևակերպվել նվազագույն ջանքերով (ծախսերով, կառուցակարգերով և այլն) նպատակին հասնելու **կառավարման խնդիրներ**: Այս հարցադրումը շատ ենք կարևորում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ *սահմանադրականության մակարդակի* գնահատմանն ու գործընթացների կառավարմանն ուղղված մեր ձեռնարկումները, սկիզբ առնելով խնդրո առարկա մեթոդների դիտարկումից, ուղղորդվելու են կառավարման ամբողջական հիմնախնդիրների լուծմանը:

Վերջիններս նպատակաուղղվելու են այն ոլորտների բացահայտմանը, որոնք հիմնարար են տվյալ երկիրը սահմանադրականության առավել բարձր մակարդակով օժտվածության դաս «տեղափոխելու» համար: Վերը թվարկված խնդիրների լուծմանն ուղղված մեթոդների կիրառմամբ երկրներում տարատեսակ «անհարթությունների» (դիցուք՝ կոռուպցիայի բարձր մակարդակ, քաղաքացիական հասարակության չկայացածություն և այլն) վերացմանն ու երկիրը լավ դաս «տեղափոխելուն» ուղղված ջանքերը զուգահեռաբար պետք է ուղղվեն առկա հիմնախնդիրների հանգուցալուծմանը՝ սահմանադրականության գնահատմամբ ու մշտադիտարկման անընդհատ գործընթացներով:

Բանալի բառեր – *սահմանադրականություն, սահմանադրական տնտեսագիտություն, հանրային ընտրություն, գնահատում, դիսկրետ մոդելավորում, կլաստերային վերլուծություն*

ГАЙК САРКИСЯН, ЖИРАЙР МХИТАРЯН, СЕДА НАГАПЕТЯН – *Парадигма конституционализма: экономические аспекты, вопросы оценки.* – В статье обсуждаются вопросы конституционной экономики и теории общественного выбора, понятие конституционализма, его социально-экономическое сечение. Приводится краткая методика оценки и повышения уровня конституционализма с точки зрения управления. Применяемый метод распознавания и

классификации является одним из инструментов рассматриваемого моделирования, который здесь приводится без описания алгоритмов и предоставления программных пакетов. Анализ его эффективности – это предмет отдельного исследования.

Ключевые слова: *конституционализм, конституционная экономика, общественный выбор, оценка, дискретное моделирование, кластерный анализ*

HAYK SARGSYAN, ZHIRAYR MKHITARYAN, SEDA NAHAPETYAN – ***The Paradigm of Constitutionalism: Economic Aspects and Issues of Evaluation.*** – The issues of constitutional economics and theory of public choice, the concept of constitutionalism, its socio-economic cross section are discussed in the article. A brief methodology of evaluation and raising its level from the point of view of management is presented. The applied cognitive and ranking method is one of the modeling tools which is presented without the description of algorithms and software, and the attitudes of its efficiency are a separate issue of research.

Key words*: constitutionalism, constitutional economics, public choice, evaluation, discrete modeling, cluster analysis*

ՌԻՍԿԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ

ՍԱՐԳԻՍ ՂԱՆԹԱՐՋՅԱՆ

Ինովացիոն նախագծերի իրականացման կարևորագույն փուլերից մեկը ռիսկերի որոշումն է: «Ռիսկերի որոշում» տնտեսագիտական կատեգորիան հետազոտվել է արտասահմանյան բազմաթիվ գիտնականների՝ մասնավորապես Ի. Շումպետերի[1], Ա. Սմիթի[2], Ա. Մարշալի[3], Վ. Աբչուկի[4] կողմից: Ըստ հեղինակների՝ ռիսկը ոչ բարենպաստ արդյունքի հավանականություն է, այսինքն, կանխատեսված տարբերակի համեմատ կորուստների ծագում կամ եկամուտների նվազեցում:

Ռիսկերի կառավարման այս կամ այն մեխանիզմի օգտագործումը զգալիորեն կախված է ինովացիոն նախագիծն ուղեկցող ռիսկերի բազմությունից և նախագծի արդյունքների վրա դրանց ազդեցության աստիճանից: Ռիսկերը կարող են լինել ընդհանուր բոլոր նախագծերի համար, և յուրահատուկ՝ պայմանավորված կոնկրետ ինովացիոն նախագծի առանձնահատկությամբ:

Առաջնային նշանակություն ունի նախագծային ռիսկերի նույնականացումը:

Տեսականորեն առանձնացվում է ռիսկերի ղեկավարման համակարգի վեց ընթացակարգ՝ ղեկավարման պլանավորում, նույնացում, որակական գնահատում, քանակական գնահատում, հետևանքների պլանավորում, մշտադիտարկում և վերահսկում[5]:

Նշված ընթացակարգերը գտնվում են փոխներգործության մեջ, և պետք է նշել, որ ինովացիոն նախագծի իրագործման ժամանակ յուրաքանչյուրը գոնե մեկ անգամ կատարվում է:

Անկախ ճյուղից, որում իրագործվում է ինովացիոն նախագիծը, վերլուծենք յուրաքանչյուր ընթացակարգի առանձնահատկությունները:

1. ***Ռիսկերի ղեկավարման պլանավորում***

Ռիսկերի ղեկավարման պլանավորում ասելով սովորաբար հասկանում են այն ընթացակարգը, որը կիրառվում է որոշում ընդունելու և ռիսկերի ղեկավարման պլանավորման ժամանակ[6]:

---

[1] Տե՛ս **Шумпетер И**. Теория экономического развития. М., 1982:

[2] Տե՛ս **Смит А**. Исследования о природе и причинах богатства народов (книги 1-3), М., 1993:

[3] Տե՛ս **Маршал А**. Принципы экономической науки. Том 2. М., 1993:

[4] Տե՛ս **Абчук В. А**. Предпринимательство и риск. СПб., 1994:

[5] Տե՛ս «A Guide to the Project Management Body of Knowledge» (www.pmi.org)

[6] Տե՛ս նույն տեղը:

Մեր կարծիքով, այդ գործընթացը պետք է ընդգրկի այն բոլոր որոշումները, որոնք ընդունվում են նախագծերի ռիսկերի ղեկավարման՝ կազմակերպման, կադրերով ապահովման, նախընտրելի մեթոդոլոգիայի ընտրության, ռիսկերի նույնացման համար տվյալների աղբյուրների որոշման ժամանակ:

2. ***Ռիսկերի նույնացում***

Այս ընթացակարգի ժամանակ որոշվում են այն ռիսկերը, որոնք կարող են էականորեն ազդել նախագծի վրա: Վերջին տարիներին ՀՀ-ում տեղի ունեցած դոլարի փոխարժեքի շեշտակի ամրապնդումը և հայկական դրամի փոխարժեքի անկումը չեն կարող չազդել տնտեսական գործընթացների վրա: Հետևաբար փոխվելու են այս կամ այն ճյուղում իրականացվող ինովացիոն նախագծերում նախատեսված նոր տեխնոլոգիաների մեջ օգտագործվող հումքերի և սարքավորումների գները:

3. ***Ռիսկերի որակական գնահատում***

Որակական վերլուծությունը ենթադրում է ռիսկերի ծագման պայմանների գնահատում և դրանց ազդեցությունը նախագծի վրա որոշվում է ստանդարտ կամ ոչ ստանդարտ մեթոդներով և միջոցներով:

Որակական գնահատման խնդիրը յուրաքանչյուր ռիսկի կարևորության աստիճանի որոշումն է, որպեսզի այնուհետև հնարավոր լինի ընտրել հակազդելու ձևը:

4. ***Քանակական գնահատում***

Գրականության մեջ[7] ռիսկերի քանակական գնահատում ասելով հասկանում են ռիսկերի ծագման հավանականության որոշումը և նախագծի վրա ռիսկերի հնարավոր ազդեցությունը: Բարդ ինովացիոն նախագծերի դեպքում պետք է ընտրել քանակական գնահատման այնպիսի մեթոդներ, որոնք հիմնված են նախագծերի որակական գնահատման արդյունքների վրա:

5. ***Ռիսկերի հետևանքների պլանավորում***

Տեսաբանները ռիսկերի հետևանքների պլանավորում ասելով հասկանում են նախագծերի վրա ռիսկերի բացասական ազդեցության հաշվարկների այնպիսի մեթոդների և տեխնոլոգիաների մշակում, որոնք թույլ են տալիս բաշխել նույնացված ռիսկերն ըստ տեսակների՝ հաշվի առնելով օգտագործվող վերլուծության մեթոդաբանությունը[8]:

Պլանավորումը ռիսկ-մենեջմենթի կարևորագույն գործառույթներից մեկն է: Արձագանքի պլանավորման ռազմավարությունը պետք է առավելագույնս հաշվի առնի ռիսկերի այն տեսակները, որոնք ազդում են նախագծի վրա, այսինքն՝ դրանք պետք է հիմնվեն ռիսկերի նույնացման ընթացակարգերի արդյունքների վրա:

---

[7] Տե՛ս նույն տեղը:
[8] Տե՛ս նույն տեղը:

6. ***Ռիսկերի մշտադիտարկում և վերահսկում.***

Այս ընթացակարգի սահմաններում կատարվում է նույնացված ռիսկերի կազմի կայունության վերահսկում, մնացորդային ռիսկերի որոշում, ռիսկերից պաշտպանության պլանների կատարում և դրանց արդյունավետության որոշում:

Այս ընթացակարգի միջոցով կատարվում է տեղեկության ընտրություն, որը անհրաժեշտ է այլընտրանքային ռազմավարություն իրագործելու և անհրաժեշտության դեպքում նախագծերում փոփոխություններ կատարելու համար:

Նախագծային ռիսկերի տարբեր տեսակներն ունեն տարբեր բնութագրեր: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է ծագում առանձնացնելու այն ռիսկերը, որոնք ղեկավարման տեսակետից ամենաբարդն են և ընձեռում են պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ մշակելու հնարավորություն: Այս խնդրի լուծման համար որպես մեթոդական բազա ծառայում է ռիսկերի դասակարգումը: Ռիսկերի դասակարգման ամենակարևոր չափանիշերն են՝

1. դրսևորման փուլը,
2. ծագման աղբյուրները:

Ըստ առաջին չափանիշի՝ ռիսկերը լինում են նախագործառութային և գործառութային[9]:

Նախագործառութային ռիսկերի հետազոտումը ենթադրում է հիմնադիրների և տնօրենների միջև պարտականությունների և իրավունքի ստույգ բաժանում, ինչպես նաև՝ հեղինակային իրավունքների առկայության ստուգում, բանվորական ուժի առկայություն և այլն:

Գործառութային ռիսկի հետազոտման ժամանակ, ըստ Դ. Ենդովիցկու, անհրաժեշտ է գնահատել[10].

1. արտադրության ծավալի անկման հավանականությունը,
2. հարկման և տարադրամի փոխարժեքի կուրսի կայունությունը,
3. օրենսդրական այն սահմանափակումները, որոնք պայմանավորված են ապրանքի ելք – մուտքով, կապիտալով և շահույթով (մաքսային արգելքներ, հարկեր),
4. ներդրված միջոցների օգտագործման ժամանակ (այլընտրանքային հումքի գնում, սարքավորումներ և այլն) նախագծային պայմաններից շեղվելու հնարավորությունը,
5. արտադրությունը և հաճախականությունը,
6. երաշխավորությունների մակարդակն ըստ վարկերի (գնահատումը կատարվում է, որպեսզի որոշվի այն կազմակերպության կայունությունը, որը իրագործում է ինովացիոն նախագիծը):

Ռիսկերի դասակարգումն ըստ ծագման աղբյուրների բաժանվում

---

[9] Տե՛ս **Лимитовский М. А**. Основы оценки инвестиционных и финансовых решений. М., 1998.

[10] Տե՛ս **Ендовицкий Д. А**. Оценка проектного риска: аналитические подходы и процедуры // "Инвестиции в России", 2000, № 9, с. 35-46.

է հետևյալ տեսակների՝ 1. տեխնոլոգիական, 2. շուկայական և գործառութային, 3. ֆինանսական, 4. քաղաքական անկայունության, 5. օրենսդրական և իրավունքային, 6. էկոլոգիական:

Տեխնոլոգիական ռիսկերը ծագում են այն դեպքում, երբ խախտվում է արտադրության տեխնոլոգիան:

Մեքենաշինության մեջ, կախված ենթաճյուղերի տեսակից, այդպիսի ռիսկերը կարող են ունենալ բավականին լուրջ հետևանքներ, օրինակ՝ մարդկանց առողջության քայքայում:

Տեխնոլոգիական ռիսկերը կարող են արտահայտվել տարբեր տեսանկյուններից, ինչպիսիք են բանվորական ուժի կամ հումքի որակը, արտադրության անվտանգությունը և այլն:

Շուկայական և գործառութային ռիսկերը կախված են այն շուկայական պայմաններից, որոնցում իրագործվում է ինովացիոն նախագիծը, և ընդգրկում են գնորդների և պատվիրատուների վճարողական կարգապահությունը, արտադրանքի նկատմամբ պահանջարկի փոփոխությունը և հումքի գների ոչ բարենպաստ փոփոխությունները:

Ֆինանսական ռիսկերի հիմնական աղբյուրներն են՝ ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսների անմատչելիությունը, սղաճը, տարադրամի փոխարժեքի փոփոխությունը:

Ռիսկերի մնացած տեսակները, մասնավորապես քաղաքական անկայունության, օրենսդրական, իրավունքային և բնապահպանական ռիսկերը բնորոշ են տնտեսության բոլոր ճյուղերին:

Մ. Ա. Լիմիտովսկին առաջարկում է ռիսկերի ինդիկատորները բնութագրող երեք մեծություն[11].

1. կուտակված մաքուր դրամական եկամուտ (ԿՄԴԵ),
2. ընթացիկ իրացվելիության գործակից (ԸԻԳ),
3. ակնթարթային իրացվելիության գործակից (ԱԻԳ)[11]:

ԿՄԴԵ-ն ձևավորվում է որպես դրամական միջոցների հետհոսքի և արտահոսքի կատարված բալանս, այսինքն՝

$$\text{ԿՄԴԵ} = \sum_{t}^{n} \left(\sum_{i} a_{it} - \sum_{j} b_{jt} \right) \qquad (1)$$

որտեղ՝

a_{it} –ն նշանակում է ներհոսումներ, եկամուտներ t ժամանակամիջոցում,

b_{jt} –ն՝ ծախսեր t ժամանակամիջոցում,

n –ը՝ նախագծի կյանքի ցիկլի ժամանակամիջոցների քանակը:

Յուրաքանչյուր a_i և b_j պայմանականորեն որոշվում է որպես գծային ֆունկցիա m_i, m_j ֆիզիկական բնութագրումներից և համապատասխան c_i, c_j գներից, որոնք նախագծում կանխատեսվող սկզբնական մե-

[11] Տե՛ս **Лимитовский М. А.,** նշվ. աշխ., էջ 232:

ծություններ են: Հետևաբար կուտակված մաքուր դրամական եկամուտը կհաշվարկվի ըստ բերված բանաձևի՝

$$ԿՄԴԵ = \sum_{t}^{n}(\sum_{i} c_{it} m_{it} - \sum_{j} c_{jt} m_{jt}) \qquad (2)$$

Զգայունության գնահատումը կատարվում է որպես հաջորդական ընթացակարգ յուրաքանչյուր i-ի կամ j-ի համար:

Ներդրումային հաշվարկների ժամանակ, երբ 1 %-ով աճում կամ նվազում են c_i, c_j –գների և m_i, m_j - ֆիզիկական բնութագրերի մակարդակները, որոշվում է ԿՄԴԵ-ի հակազդման արժեքների տոկոսը:

Նմանատիպ ձևով է կատարվում ռիսկերը բնութագրող մյուս երկու մեծությունների՝ ԸԻԳ-ի և ԱԻԳ-ի գնահատումը:

Արտասահմանյան վիճակագրության հիման վրա Ե. Ս. Տուրմաչովը եզրակացրել է, որ վերամշակող ճյուղերի համար առաջարկվող նախագծերի սնանկացումը տեղի է ունենում սնանկացման 69 %-ով, երբ ԿՄԴԵ≤0, իսկ երբ ԸԻԳ≤2-ից, ապա՝ 57 %-ով: Եթե այս երկու ցուցանիշները գործում են համատեղ, ապա սնանկացումը կազմում է 86 %-ից ավելի, իսկ երեք ցուցանիշների դեպքում երբ ԱԻԳ<0.5-ից, ապա սնանկացման հավանականությունը դառնում է անխուսափելի և հավասար է 98 %-ի[12]:

Երբ ԿՄԴԵ>0, ԸԻԳ>1 և ԱԻԳ>0.5, նախագծերի սնանկացման հավանականության միջին արժեքը կազմում է 50%-ից ոչ ավելի:

Կարելի է եզրակացնել, որ ինովացիոն նախագծերի ռիսկերը ներդրումային փուլում (մինչև արտադրության սկիզբը) և նախագծի կյանքի ցիկլի ավարտից հետո պահանջում են հատուկ վերլուծություն:

Բանալի բառեր – *ռիսկ, գնահատում, ներդրումային նախագծեր*

САРКИС КАНТАРДЖЯН – ***Определение рисков в инновационных проектах***. – В статье обобщены различные подходы к оценке рисков инновационных проектов и их классификации, описанные в литературе. Отмечается, что независимо от отрасли, для которой проводится оценка риска, наиболее важны этапы, когда риск проявляется и определяется его источник. Приведены формулы для расчёта накопленного чистого денежного потока.

Ключевые слова: *риск, оценка, инновационные проекты*

SARKIS GHANTARDJYAN – ***The Definition of Risk in Innovative Projects***. – The article summarizes the literature described different approaches to risk assessment of innovative projects and their classification. It is noted that regardless of the industry, for which the risk assessment is conducted, the most important are the stages of manifestation of risk and identify the source of its origin. Presents the formulas for calculating the accumulated net cash flow.

Key words: *risk, assessment, innovative projects*

[12] Տե՛ս **Турмачёв Е. С**. Методологические проблемы количественного определения рисков инвестиционных проектов // http://cfin.ru/press/afa/97 3 232-240.pdf

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ

ՎՈԼՈԴՅԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Տնտեսական բարիքների արտադրության ծավալի աճը եղել և մնում է ընդլայնված վերարտադրության հրատապ խնդիրներից մեկը: Այդ բնագավառում գործում է պահանջմունքների առաջընթաց աճի տնտեսական օրենքը, որի գործողության մեխանիզմը դրսևորվում է անցումով բարձր կարգի պահանջմունքներից սովորականի, իսկ վերջիններից էլ՝ ավելի ցածր կարգի պահանջմունքների: Այսինքն՝ որոշակի պահանջմունքներ մարում են, դրանց կողքին ծագում են նորերը: Պահանջմունքների ընդլայնման (զարգացման) խնդիրն այն է, որ դրանց քանակության անընդհատ աճի և որակական հատկանիշների ներուժը բախվում է արտադրական հնարավորությունների սահմանափակությանը՝ պայմանավորված արտադրության ընթացքի այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ աշխատողը և նրա աշխատանքի արտադրողականությունը, աշխատաժամանակը, բնական ռեսուրսները, արտադրության միջոցները և այլն: Դրա համար էլ էական նշանակություն են ստանում այդ սահմանափակումների մեղմումը և համահարթեցումը:

Այս տեսակետից առաջին պլան են մղվում գիտատեխնիկական առաջադիմությունը և այդ հիմքի վրա՝ կայուն ու բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովումը: Տնտեսական աճի բարձր տեմպերը հնարավորություններ ընձեռեցին Ճապոնիային, Կորեային և Չինաստանին 8-10 տարում կրկնապատկելու ազգային եկամտի արտադրությունը: Սակայն արտադրության ընդլայնման տեմպերի արագացումը բախվում է մի կողմից սպառողների շահերի, մյուս կողմից՝ կապիտալի կուտակման արդյունավետությանը: Տնտեսական աճի տեմպը հիմնականում լինելով քանակային ցուցանիշ՝ էական ներգործություն է ունենում բնակչության եկամուտների մակարդակի դինամիկայի և սպառման վրա: Որքան մեծ են երկրի ազգային եկամտի աճի տեմպերը, այնքան բարձր է նրա սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը: Բնակչության կայուն թվի պայմաններում, որպես օրինաչափություն, մեկ շնչի եկամուտը միջին հաշվով պետք է աճի տնտեսական աճի տեմպին ուղիղ համեմատական ձևով:

Հետևաբար յուրաքանչյուր երկրի կառավարություն պետք է պատասխանատու լինի երկրի տնտեսական զարգացման և բնակչության եկամուտների աճի ապահովման համար: Զարգացող և անցումային ժա-

մանակաշրջանում գտնվող տնտեսություններում իրականացվող վերափոխումները (ռեֆորմները) պետք է նպատակաուղղված լինեն աղքատության վերացմանը և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Ինչպես հայտնի է, տնտեսական աճի տեմպը կախված է տնտեսության իրական հատվածում զբաղվածների թվից և նրանց աշխատանքի արտադրողականության մակարդակից: Սակայն դա դեռևս չի նշանակում, որ բնակչության մեծ թիվ ունեցող երկրները կարող են ապահովել տնտեսական աճի բարձր տեմպեր: Իրականում շատ երկրներ, որոնք ունեն մեծ թվով բնակչություն, կարող են ունենալ տնտեսական աճի ցածր տեմպեր: Խնդիրն այն է, որ տնտեսական աճը ունի ոչ միայն բնաիրային, այլև ֆինանսական ասպեկտ: Այսինքն՝ զբաղվածության աճ ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել նոր աշխատատեղեր, իսկ դրա համար անհրաժեշտ է կատարել զուտ ներդրումներ (ինվեստիցիաներ), որոնց առկայությունն իր հերթին պայմանավորված է կապիտալի կուտակման աստիճանով: Իսկ որքան բարձր է աշխատանքի տեխնիկական զինվածության աստիճանը, այնքան ավելի բարձր գին ունի նոր աշխատատեղերի ստեղծումը: Բարձր տեմպերով և արդյունավետ տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև աշխատուժի արտադրողականության բարձրացմանը, որը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, սակայն դրանցից գլխավորը համարվում է տեխնիկական առաջադիմությունը, որը ապահովում է աշխատանքի արտադրողականության աճի 28 %[1]:

Թեպետ տեխնիկական առաջադիմությունը տնտեսական աճի գլխավոր գործոն է, այնուամենայնիվ անհրաժեշտ է նաև նկատի ունենալ ինստիտուցիոնալ, վարքագծի և գաղափարական փոփոխությունները, առանց որոնց նոր տեխնոլոգիան անարդյունավետ կլինի[2]:

Տնտեսական աճի էքստենսիվ և ինտենսիվ տիպերի հարաբերակցության խնդիրներին անդրադարձել են Վ. Լեոնտևը, Գ. Մյոտդալը, Ռ. Սոլոուն, Դենիստոնը և հանրաճանաչ այլ տնտեսագետներ:

Տնտեսական աճի արդյունավետության տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության են արժանի Ռ. Սոլոուի ուսումնասիրությունները: Նա առաջարկեց այսպես կոչված «կուտակման ոսկե կանոնը», որը ցույց է տալիս օպտիմալ սպառման համար անհրաժեշտ կապիտալազինվածության մակարդակը: «Ոսկյա կանոնը» որոշում է սպառման բարձր մակարդակ ունեցող տնտեսության կայուն իրավիճակի համար անհրաժեշտ կապիտալի մակարդակը: Ընդ որում, ի տարբերություն սովորական մոտեցման՝ ավելի բարձր սպառումը որոշվում է ոչ թե կապիտալի մեծությամբ (ինչքան շատ, այնքան լավ), այլ նրա օպտիմալ չափերով և տնտեսական արդյունավետությամբ՝ միավոր ար-

[1] Տե՛ս **Макконнел К. Р., Брю С. Л.** Экономикс. М., 1992, էջ 384:
[2] Տե՛ս «Экономическое развитие». М., էջ 108:

տադրանքի կապիտալահատույցով: Բանն այն է, որ 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին, գիտատեխնիկական առաջադիմության ծավալմանը ու զարգացմանը զուգընթաց, աճում են գիտահետազոտական աշխատանքների, ինչպես նաև ներքին նորարարությունների վրա կատարվող ծախսերը: Դրա հետ մեկտեղ՝ գիտատեխնիկական նվաճումների արտադրողական ներուժի ծախսերը ավելի բարձր են, քան դրանց գործնական օգտագործումից ստացված արդյունքները:

Հետևաբար, գիտատեխնիկական առաջադիմության ներուժային կարողությունները վեր հանելու, իրացնելու և արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է արտադրության և աշխատանքի կազմակերպման և կառավարման բարձր մակարդակներում առանձնահատուկ ուշադրություն դարձնել աշխատանքի որակավորման բարձրացման և արդյունավետ օգտագործման խնդիրներին: Պատահական չէ, որ վերջին ժամանակներում գիտական շրջանառության մեջ է մտել «մարդկային կապիտալի զարգացումը» հասկացությունը, և անհրաժեշտություն է առաջացել համադրելու կրթության ծախսերը նրա տնտեսական արդյունավետության հետ: Այդ տեսակետից մարդկային կապիտալը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն տնտեսական աճի արդյունավետության բարձրացման գործում ինչպես գիտելիքների կուտակման, կրթության ձեռքբերման կարևորության և մասնագիտական որակական մակարդակի բարձրացման, այնպես էլ սպառման կառուցվածքում նոր միտումների առաջացման և աշխատավարձի աճով՝ որպես արտադրության ծախքերի տարր:

Միավորված ազգերի կազմակերպությունն առաջարկել է մարդկային կապիտալի զարգացման հետևյալ բնութագրիչները.

1. բնակչության եկամուտները (կենսամակարդակը),
2. մարդկանց կրթության մակարդակը,
3. մարդկանց առողջական վիճակը:

Ընդ որում՝ որպես դրանց համապատասխան ցուցանիշներ ընտրած են.

- եկամտի գնահատման համար՝ երկրում մեկ շնչի հաշվով արտադրված համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), որը բնութագրում է պատշաճ կենսամակարդակ ունենալու հնարավորությունը,
- կրթության մակարդակի գնահատման համար՝ գրագիտության մակարդակը և համապատասխան տարիքային խմբի բնակիչներից ուսումնական հաստատություններում ընդգրկվածների թիվը. այդ երկու չափանիշների կշռված մեծությունների (առաջինը՝ 1/3, երկրորդը՝ 2/3 գործակցով) գումարը ներկայացնում է կրթության մակարդակը երկրում,
- մարդկանց առողջության գնահատման համար՝ նորածինների կյանքի սպասվելիք միջին տևողությունը տարիներով:

Մարդկային կապիտալի զարգացման համաթիվը (ինդեքս) որոշե-

լու համար վերը շարադրված երեք գնահատումների ցուցանիշները հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$H_j = \frac{1}{3}\sum_{i=1}^{3} H_{ij} \qquad (1.1)$$

$$H_{ij} = \frac{X_{ij} - \min k\{X_{ij}\}}{\max k\{X_{ik}\} - \min k\{X_{ik}\}} \qquad (1.2)$$

որտեղ j-ն առանձին երկրի համաթիվն է, i-ն՝ 1, 2, 3՝ վերը թվարկած երեք ցուցանիշների (որոնք օգտագործվում են մարդկային զարգացման համաթիվը հաշվարկելու համար) համաթվերն են, k-ն յուրաքանչյուր ցուցանիշի նվազագույն արժեքն է, X-ը բնութագրիչ ցուցանիշի մեծությունն է: H_j-ն j երկրի մարդկային զարգացման համաթիվն է:

ՄԶՀ (մարդկային զարգացման համաթվի) փոփոխման հնարավոր միջակայքն է $0 \le H_{ij} \ge 1$: Դրա իրական մեծությունը փաստորեն նշում է այն մնացյալ ճանապարհը, որը տվյալ երկիրը պետք է անցնի՝ հասնելու մարդկային զարգացման առաջին աստիճան[3]:

Ընդ որում՝ ՄԱԿ-ի մարդկային զարգացման ցուցանիշները 1990 թ. ի վեր ընդգրկում են մոտ 170 երկիր, որոնք բաժանվում են երեք հիմնական՝ բարձր, միջին և ցածր զարգացման խմբերի: Հայաստանը 170 երկրների շարքում զբաղեցնում է 76-րդ տեղը (միջին զարգացման ցուցանիշով՝ 0,754) և տարածաշրջանում առաջ է անցել Վրաստանից (0,748), Թուրքիայից (0,743) և Ադրբեջանից (0,741):

Տարածաշրջանում Հայաստանի առաջատար դերը պայմանավորված է կրթական մակարդակի և կյանքի միջին տևողության բարձր աստիճանով: Այդուհանդերձ, երկրի վարկանիշը ենթակա է ամենամյա փոփոխության՝ կախված երկրի զարգացման աստիճանից: Մյուս կողմից էլ երկրի տնտեսական զարգացումը և տնտեսական աճը կախված են մարդկային կապիտալի զարգացման աստիճանից:

Ժամանակակից շուկայական տնտեսությամբ զարգացած երկրներում առաջին պլան են մղվում հասարակության առաջընթացը և տնտեսական զարգացումը, որոնք պայմանավորված են ոչ միայն նյութական բարիքների, այլև մարդու բազմակողմանի զարգացման մակարդակով, որի աշխատանքը արդյունավետ, կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովման լայն հնարավորություններ է ընձեռում:

Տնտեսական աճի կարևորագույն աղբյուրների՝ բնական կապիտալի և ֆիզիկական կապիտալի կողքին իր ուրույն տեղն է զբաղեցնում մարդկային կապիտալը: Ներդրումները մարդկային կապիտալում հիմնական նպատակ են հետապնդում հոգալու սննդի, առողջապահության, կրթության և մասնագիտական որակավորման ապահովման անհրաժեշտ ծախսերը:

Արտադրության մեջ ժամանակակից գիտատեխնիկական նվա-

[3] Տե՛ս «Մարդկային զարգացման հիմունքները», Եր., 2004, էջ 53-54:

ճումների ներդրումը պահանջում է մարդու մտավոր ստեղծագործական աշխատանքի ընդլայնում, իսկ սոցիալական ոլորտում իրականացվող ներդրումների տնտեսական արդյունավետությունը դրսևորվում է հենց մարդկային կապիտալի հատույցի ձևով:

Մարդկային զարգացման կապը տնտեսական աճի հետ միակողմանի չէ. տնտեսական աճը և ընդհանրապես տնտեսական զարգացումը իրենց հերթին լայն հնարավորություններ են ստեղծում մարդու զարգացման համար: ՀՆԱ-ի և ազգային եկամտի աճը միջոցներ է ստեղծում առողջապահության, կրթության զարգացման և մարդկանց կենսամակարդակի բարձրացման համար:

Մարդկային կապիտալի զարգացման ցուցանիշներով Հայաստանը դասվում է միջին զարգացած երկրների շարքին: Դա ամենից առաջ պայմանավորված է կրթության բնագավառում ձեռք բերված հաջողություններով: Հայաստանը դեռևս ԽՍՀՄ կազմում համարվում էր բարձր կրթական մակարդակ ունեցող երկիր: Այն առաջնակարգ տեղ էր զբաղեցնում արտադրության մեջ միջնակարգ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության աշխատողների թվաքանակով: Իսկ գիտության թեկնածուների և դոկտորների թվով (10.000 մարդու հաշվարկով) զբաղեցնում էր առաջին տեղը: Ընդհանուր առմամբ Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել: Այսօր էլ պետական, ազգային կարևոր խնդիր է կրթության համակարգի պահպանումը և կատարելագործումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության պահպանումը:

Թեև շուկայական հարաբերությունների անցման ժամանակաշրջանում մեր երկրում բարեփոխումների իրականացման նպատակով ընդունվեցին ենթաօրենսդրական և այլ նորմատիվ ակտեր, որոնք հիմնականում ուղղված էին ազգային, հայեցի կրթության ապահովմանը և կատարելագործմանը, սակայն պատշաճ մակարդակով չապահովվեց մեթոդական ու կադրային սպասարկում, որը հանգեցրեց ուսման որակի որոշակի անկման: Սրան ավելացավ նաև կրթության զարգացման անբավարար ֆինանսավորումը:

Կրթությունը կոչված է ապահովելու երկու հիմնական խնդիր. մի կողմից այն պետք է բավարարի իմացական և պրոֆեսիոնալ պահանջները, մյուս կողմից ձևավորի և լրացնի հասարակության մտավոր մասնագիտական ներուժը:

Ըստ այդմ՝ կրթության հիմնական գործառույթները պետք է նպատակուղղված լինեն.

ա) սովորողների անձի ձևավորմանը և անհատական ունակությունների ու կարողությունների զարգացմանը,

բ) սովորողների մասնագիտական, պրոֆեսիոնալ պատրաստությանը,

գ) հասարակության գիտական ներուժի ձևավորմանը:

Նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է.

- ուսուցման գործընթացի անընդհատություն,
- կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնում (այդ թվում՝ անվճար կրթության),
- ուսումնական դասընթացների, ծրագրերի, ուսուցման մեթոդների ճշգրտում և մշտական բարելավում:

Յուրաքանչյուր երկրի կրթության համակարգը պետք է ելնի ազգային սովորություններից և արտացոլի նրա մշակույթի ավանդույթները՝ միաժամանակ հաշվի առնելով միջազգային փորձը:

Կրթության զարգացման ոլորտում էական դեր և նշանակություն ունի ներդրումների իրականացման համակարգի կատարելագործումը: Մարդկային կապիտալում կատարված ներդրումները կնպաստեն կայուն տնտեսական աճին, որն իր հերթին կնպաստի մարդկային զարգացման գործընթացին: Ազգային եկամտի աճի մոտ 14 %-ը ապահովվում է կրթության և մասնագիտական պատրաստականության բարձրացման հաշվին[4]:

Մարդկային զարգացման համաթվի հաջորդ կարևոր բաղադրիչը բնակչության կենսամակարդակն է, որ առաջնահերթ պայման է մարդկային զարգացման հնարավորությունների համար: Պլանային տնտեսությունում Հայաստանի կենսամակարդակը բարձրանում էր, որը դրսևորվում էր բազմաթիվ ցուցանիշներով, հատկապես բնակչության դրամական եկամուտների աճով, որն էապես գերազանցում էր մանրածախ գների աճը:

Հայաստանը բնակչության մեկ շնչին ընկնող սպառման մակարդակով (տարեկան 4900 դոլարին համարժեք ռուբլի) դասվում էր այնպիսի երկրների շարքին, ինչպիսիք էին Հունաստանը և Իսրայելը (5200-5300 դոլար)[5]:

Իրավիճակը գլխիվայր փոխվեց շուկայական տնտեսության անցման սկզբնական ժամանակաշրջանում: Տնտեսության տրանսֆորմացիոն անկումը Հայաստանում արտահայտվեց ՀՆԱ-ի էական կրճատումով (59 %): Դրա հիմնական պատճառները օբյեկտիվ և սուբյեկտիվ էին, որոնց թվին կարելի է դասել.

- Սպիտակի ավերիչ երկրաշարժը,
- ԽՍՀՄ-ի փլուզումը և տնտեսական կապերի խզումը,
- տնտեսական շրջափակումը,
- կոռումպացված սեփականաշնորհումը,
- էներգետիկական ճգնաժամը,
- Արցախյան ազատամարտը և այլն:

---

[4] Տե՛ս **Վ. Հովսեփյան**, Անցումային տնտեսության տեսություն, Եր., 2008, էջ 67:
[5] Տե՛ս նույն տեղը, էջ 68:

Ներկայումս ՀՀ-ում բնակչության մեկ շնչին ընկնում է մոտ 3100-3200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Նվազագույն աշխատավարձը՝ 55 հազ. դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ մոտ 180 հազ. դրամ: Նման իրավիճակում բնակչության մոտ 1/3 մասը աղքատ է, իսկ աշխատավարձի իրական մակարդակը չի բավարարում բնակչության տարրական պահանջմունքները:

Ինչպես ասվեց, մարդկային զարգացման համաթվով ՀՀ-ն զբաղեցնում է 76-րդ տեղը, որի իրական պատճառը բնակչության ցածր կենսամակարդակն է:

Մարդկային զարգացման էական բնութագրիչներից է նաև բնակչության առողջության վիճակը, որը հիմնականում գնահատվում է մարդկանց տարատեսակ հիվանդությունների և դրանց հետևանքների մասշտաբներով չափվող սոցիալական ակտիվության աստիճանով, աշխատունակության կորստով, կյանքի միջին տևողությամբ և այլն:

Շուկայական տնտեսության վերափոխումների ընթացքում Հայաստանում որոշակիորեն բարձրացավ բուժօգնության մակարդակը: Սակայն անցումային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ մարդկանց առողջական վիճակի վրա:

Ցածր կենսամակարդակի պայմաններում տեղի է ունեցել բուժսպասարկման մատչելիության նվազում հատկապես սոցիալապես առավել խոցելի խավերի համար: Ճիշտ է, առողջապահական ծառայությունների հիմնական մասն անվճար է (պոլիկլինիկաներ), սակայն ոչ պաշտոնական վճարների առկայությունը զգալի խնդիրներ է առաջացնում բնակչության զգալի մասի համար: Տարածաշրջանում դեղորայքի ամենաբարձր գները Հայաստանում են, այն մոտ 30-40 %-ով ավելին է մեր հարևան Վրաստանի համեմատությամբ: Դրա հիմնական պատճառը դեղորայքի ներկրման օլիգոպոլիական մենաշնորհն է (Հայաստանում մոտ 5-6 ֆիրմաներ են ներկրում դեղորայք և գներ թելադրում շուկայում): Բավականին շատ են նաև ժամկետանց դեղորայքների առկայության դեպքերը: Գնալով բարձրանում են նաև վիրահատությունների գները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրենց բուժման համար լրիվ վճարունակ են հիվանդների 40 %-ը՝ Երևանում, 20-30 %-ը՝ այլ քաղաքներում և գյուղերում, իսկ հիվանդ մարդկանց 59,4 %-ը գերադասում է ինքնաբուժմամբ զբաղվել[6]:

Ցածր կենսամակարդակը և առողջապահության համակարգի ոչ լիարժեք գործունեությունը պայմանավորում են ծնելիության գործակցի նվազում, մահացության թվաքանակի աճ և բնակչության կյանքի միջին տարիքի նվազում: Այս իրավիճակը պետությանը ներկայացնում է առավելագույն պահանջներ, նոր պարտականություններ՝ ապահովել

[6] Տե՛ս «Մարդկային զարգացման հիմունքները», էջ 195

մարդու և ողջ հասարակության կյանքի պայմանների արմատական բարելավում և հասարակության զարգացման մակարդակի բարձրացում:

Սոցիալական պետությունը պետք է ձգտի իր բնակչության համար ստեղծել առողջ, արժանապատիվ և անվտանգ գոյության պայմաններ, բարենպաստ կենսական միջավայր, բոլորի համար մատչելի կրթության և առողջապահության համակարգեր, ինչպես նաև յուրաքանչյուր բնակչի ապահովել աշխատանքով և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել սոցիալական օգնություն (կարիքավորներին) և այլն:

Տնտեսության սոցիալական կողմնորոշումը իր ուրույն առանձնահատկություններն ունի նաև անցումային ժամանակաշրջանում: «Տնտեսություն մարդու համար» ասելով պետք է հասկանալ այնպիսի տնտեսական համակարգի ստեղծում, որտեղ տնտեսական հարաբերությունները և տնտեսավարման մեխանիզմը ապահովում են վերարտադրության ենթարկվածությունը մարդու զարգացմանը՝ հաղթահարելով մարդու օտարումը աշխատանքից, արտադրության միջոցներից, արտադրված արդյունքներից, հասարակությունից և մշակույթից:

Բանալի բառեր – *տնտեսական աճ, մարդկային կապիտալ, պահանջմունքներ, կենսամակարդակ, տրանսֆորմացիա, ազգային եկամուտ, համախառն ներքին արդյունք*

ВОЛОДЯ ОВСЕПЯН – ***Развитие человеческого капитала и экономический рост.*** – Экономический рост – необходимое и решающее условие повышения уровня жизни населения. Расширение (развитие) человеческих потребностей и их качественный потенциал постоянно сталкиваются с границей экономических возможностей. Важную роль здесь играет смягчение и выравнивание ограничений, связанных с развитием человеческого капитала.

Ключевые слова: *экономический рост, человеческий капитал, потребности, жизненный уровень, трансформация, национальный доход, валовой внутренний продукт*

VOLODYA HOVSEPYAN – ***The Development of Human Capital and the Economic Growth.*** – Economic growth is a necessary and decisive condition for raising the standard of living of the population. Expansion /development / of human needs and their quality potential constantly faced with the boundary of economic opportunities. In this regard, an important role is given to softening and flattening of these limitations, associated with the development of human capital. From this perspective, the article analyzes the problems of the development of human capital.

Key words: *economic growth, human capital, needs, standard of living, transformation, national income, gross domestic product*

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՀՀ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՈՐՈՇ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

ԱԼՎԱՐԴ ԽԱՌԱՏՅԱՆ, ԱՍՊՐԱՄ ՇԱԴՅԱՆ

ՀՀ անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը բուռն քննարկումներ է առաջացրել մասնագետների շրջանում՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ ՀՀ-ն երկար տարիներ օրենսդրական և այլ բազմաթիվ փոփոխություններ է կատարել՝ նպատակ ունենալով ինտեգրվելու Եվրամիությանը (ԵՄ):

Մեր նպատակն է.

- ռեգրեսիոն մոդելների միջոցով ուսումնասիրել ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները բնութագրող հիմնական ցուցանիշների միջև եղած քանակական կապերը,
- վերլուծել Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հնարավոր հետևանքները,
- գնահատել Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցելու ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա:

ՀՀ առևտրատնտեսական կապերի ռեգրեսիոն վերլուծություն: ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականությունը բավականին ազատական է: Այսպես, «Heritage Foundation»-ի և «Wall Street Journal»-ի տնտեսական ազատության ինդեքսով 2015 թ. ՀՀ-ն 67,1 ինդեքսով զբաղեցրել է 52-րդ տեղը՝ ընդգրկվելով միջին ազատությամբ երկրների շարքում: Հարևան երկրներից Վրաստանը, Թուրքիան, Ադրբեջանը, Ռուսաստանը համապատասխանաբար 22-րդ, 70-րդ, 85-րդ և 143-րդ տեղերում են[1]:

ՀՀ առևտրային հաշվեկշիռը անցումային ողջ ժամանակաշրջանում ունեցել է բացասական հաշվեմնացորդ: Ընթացիկ հաշվի ֆինանսավորման գործում նշանակալի դեր են խաղում արտերկրից ստացվող տրանսֆերտները: 2013 թ. տվյալներով Հայաստանի հետ 293447,20 հազար ԱՄՆ դոլար արտաքին ապրանքաշրջանառությամբ հարևան երկրներից առաջատար էր Իրանի Իսլամական Հանրապետությունը, երկրորդը՝ Թուրքիան՝ 212297,80 հազ.[2]: Հարևան երկրներից ՀՀ-ն դրական առևտրային հաշվեկշիռ ունի միայն Վրաստանի հետ: Եթե մինչև

[1] Տե՛ս http://www.heritage.org, 2015 Index of Economic Freedom
[2] Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», 2014 թ.:

2013 թ. Հայաստանից Վրաստան արտահանումը կազմում էր Վրաստանի ներմուծման ծավալների մոտ 0,9 %-ը, ապա այժմ այն 2,5 % է: Աճի պատճառներից է հայկական ընկերությունների կողմից Վրաստանում վերջին տարիներին ճանաչում գտած ապրանքանիշների արտահանումը[3]:

Անկախացումից հետո ՀՀ-ն նախկին խորհրդային երկրներից տնտեսական առումով առավել սերտ կապեր է հաստատել Ռուսաստանի Դաշնության հետ: 1995-1997 թթ. Ռուսաստանի հետ արտաքին առևտուրն ունեցել է աճի միտում, 1997-1999 թթ. այն նվազել է, այնուհետև նորից աճել (տե՛ս գծապատկեր 1): ՌԴ-ից բացի՝ ՀՀ-ն ակտիվ առևտրային հարաբերությունների մեջ է նաև Ուկրաինայի և Բելառուսի հետ:

Գծապատկեր 1

ՀՀ-ից ՌԴ արտահանման տեսակարար կշիռը ՀՀ արտահանման մեջ, ՌԴ-ից ՀՀ ներմուծման տեսակարար կշիռը ՀՀ ներմուծման մեջ, տոկոս[4]



2003 թ. ԱՀԿ անդամակցությունից հետո Հայաստանի ապրանքաշրջանառությունը դեպի Եվրոպա և ԱՄՆ աճեց: Ներմուծումը ԵՄ երկրներից 2013 թ. կազմել է ՀՀ ներմուծման 26,4 %-ը, ԱՊՀ երկրներից՝ 29,7 %-ը: Թեև 2010-2013 թթ. ՀՀ արտահանման ընդհանուր ծավալում ԵՄ երկրների բաժինը 48,3-ից նվազել է մինչև 33,4 տոկոսի, այնուհանդերձ 2013 թ. այն ավելի բարձր էր, քան ԱՊՀ երկրներինը (27,1 %)[5]:

Հայաստանի առևտրատնտեսական հարաբերությունները բնութագրող հիմնական ցուցանիշների միջև եղած քանակական կապերը ուսումնասիրելու նպատակով ՀՀ 1996-2013 թթ. եռամսյակային տվյալների հիման վրա կատարել ենք ռեգրեսիոն վերլուծություն: Մոդելնե-

[3] Տե՛ս «Հայ-վրացական գործարար կապեր. հայացք Վրաստանից», www.banks.am

[4] Տե՛ս Արտաքին առևտուր, «ՀՀ արտաքին առևտուրն ըստ երկրների, տարիների և ցուցանիշների», www.armstatbank.am

[5] Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», 2014 թ., էջ 545, www.armstatbank.am

ռում օգտագործվել են հետևյալ նշանակումները. GDP- անվանական ՀՆԱ՝ մլն ՀՀ դրամ, X-ՀՀ արտահանում՝ մլն ՀՀ դրամ, EXRATE-անվանական փոխարժեք, NEXRATE-անվանական արդյունավետ փոխարժեք, G-պետական ծախսեր՝ մլն ՀՀ դրամ, IG-համախառն ներդրումներ՝ մլն ՀՀ դրամ, TR-ՀՀ մուտք գործող անձնական տրանսֆերտներ՝ մլն ՀՀ դրամ, DIRL-ուղղակի ներդրումներ հաշվետու երկրում՝ մլն ՀՀ դրամ, TB-առևտրային հաշվեկշռի սալդո՝ մլն ԱՄՆ դոլար, P_OIL-նավթի գինը եվրոպական շուկայում՝ ԱՄՆ դոլար 1 բարելի համար, CPI-սպառողական գների ինդեքս (ՍԳԻ)[6]:

Տեսականորեն դոլար/դրամ անվանական փոխարժեքի աճը այլ գործոնների անփոփոխ մնալու պարագայում պետք է նպաստեր արտահանման աճին, և այս ցուցանիշների միջև պետք է լիներ դրական կորելյացիոն կապ: Հայաստանում այդ կապը բացասական է: ՀՀ արտահանումը դրական կորելյացիոն կապ ունի անվանական արդյունավետ փոխարժեքի (NEXRATE) և իրական արդյունավետ փոխարժեքի (REXRATE) հետ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Կոռելյացիոն մատրից

	X	NEXRATE	REXRATE	EXRATE
X	1.000000	0.657382	0.484732	-0.534795
NEXRATE	0.657382	1.000000	0.811733	-0.804512
REXRATE	0.484732	0.811733	1.000000	-0.805401
EXRATE	-0.534795	-0.804512	-0.805401	1.000000

ՀՀ արտահանման վարքը հետազոտելու նպատակով դիտարկել ենք հինգ մոդել (տե՛ս աղյուսակ 2): Առաջին մոդելում ՀՀ արտահանման վարքը բացատրող փոփոխականներ են անվանական արդյունավետ փոխարժեքը և արտերկրից ստացվող տրանսֆերտները: Երկուսն էլ ունեն դրական գործակիցներ, որոնք վիճակագրորեն նշանակալի են արժեքականության մեկ տոկոս մակարդակում: Մնացորդների համացրվածության (հոմոսկեդաստիկության) վարկածը ստուգել ենք Բրեուշ-Պագան-Գոդֆրիի թեստով: $\chi 2$ հավանականությունը (0,11) ցույց է տալիս, որ 5 % արժեքականության մակարդակում մնացորդների հոմոսկեդաստիկ լինելու զրոյական վարկածը չենք մերժում: Ժարկ-Բերայի թեստի համաձայն՝ զրոյական վարկածը, որ մնացորդները նորմալ են բաշխված, ընդունվում է 95 % հավանականությամբ: Դարբին Ուոթսոնի վիճականին 0,03 է, այսինքն՝ մնացորդների միջև առկա է առաջին կարգի ավտոկոռելյացիա: Ստացված արդյունքները վկայում են մոդելի բարելավման անհրաժեշտության մասին:

[6] Մոդելներում փոփոխականների անվան մեջ HP բաղադրիչի առկայությունը նշանակում է հարթեցում Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտրի միջոցով, SA -ն՝ սեզոնային հարթեցում, L-ը կամ log-ը՝ լոգարիթմական մեծության, D-ն՝առաջին կարգի տարբերության կիրառում:

Աղյուսակ 2

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները.
կախյալ փոփոխական՝ արտահանում

Անկախ փոփոխական	Մոդել				
	1	2	3	4	5
c	1,265***	0,158***	0.029***	0.019***	0.015***
HPLTR_SA	0,710***	0,011***	0.013***	0.013***	0.014***
log(NEXRATE)	0.453***	-	0.010***	0.016***	0.017***
HPLX_SA(-1)	-	1.350***	1.349***	1.335***	1.338***
HPLX_SA(-4)	-	-0.373***	-0.373***	-0.357***	-0.361***
HPLGDP_SA	-	0.011***	-	-	-
HPLIG_SA*D(LDIRI)	-	-	-	7.32E-06**	7.58E-06**
D(CPI_SA)	-	-	-	0.005***	0.005***
D(HPLP_OIL_SA)	-	-	-	-	0.068**
MA(1)	-	1.336***	0.963***	0.787***	0.798***
MA(4)	-	0.482***	0.406***	-0.209*	-0.198*
MA(8)	-	0.125***	-	-	-
HPLIG_SA	-	-	0.004**	-	-
D(LDIRI)	-	-	3.30E-05*	-	-
Durbin-Watson	0.030	0.130	1.053	1.680	2.010
Prob(Jarque-Bera)	0.050	0.318	0.806	0.690	0.840
Prob(Breusch-Pagan-Godfrey Heteros. Test)	0.110	0.000	0.283	0.586	0.380
Prob(BG Serial Correlation LM Test)	0.000	0.000	0.000	0.001	0.142
Adj. R-squared	0.900	0.940	0.949	0.960	0.965
Prob(F-statistic)	0.000	0.000	0.000	0.000	0.000
Akaike info criter.	-0.590	-11.304	-11.759	-11.627	-11.643

Արժեքականության * տասը տոկոս, ** հինգ տոկոս, *** մեկ տոկոս մակարդակներ:

Հաջորդ մոդելներում բացատրող փոփոխականների շարքում ներառվել են արտահանման լագային արժեքները, ՀՆԱ-ն, ներդրումները, ՍԳԻ-ն, նավթի գինը: Մոդել 5-ի մնացորդները բավարարում են Գաուս-Մարկովի պայմաններին, F վիճականու հավանականությունը ցույց է տալիս, որ մոդելը վիճակագրորեն նշանակալի է: Փոքրագույն քառակուսիների եղանակով գնահատված բոլոր պարամետրերը վիճակագրորեն նշանակալի են: Բրեուշ-Գոդֆրիի LM վիճականին վկայում է, որ մնացորդների միջև առաջինից մինչև 3-րդ կարգի ավտոկոռելյացիա չլինելու զրոյական վարկածը պետք է մերժել: Մոդելի հատկորոշումն (սպեցիֆիկացիան) է.

$$HPLX_SA=0.015+1.338*HPLX_SA(-1) + 0.014*HPLTR_SA-0.361* HPLX_SA(-4) +0.017*LOG(NEXRATE)+7.582e-06*(HPLIG_SA*D(LDIRI)+0.005*D(CPI_SA)+ 0.068*D(HPLP_OIL_SA)+[MA(1)=0.798, MA(4)=-0.198] \quad \textbf{(1)}$$

Մոդել 5-ի համաձայն՝ տրանսֆերտների մեկ տոկոս աճը հանգեցնում է արտահանման 0,014, իսկ անվանական արդյունավետ փոխար-

ժեքի մեկ տոկոս աճը՝ արտահանման 0,017 տոկոս աճի: Արտահանումը դրական է՝ կախված ներդրումներից, ներքին գների մակարդակից և նավթի գնից: ՀՀ արտահանման վիճակագրական և (1) հավասարումով կանխատեսված արժեքները բավականին մոտ են (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2

ՀՀ արտահանման վիճակագրական (X) և կանխատեսված արժեքները (XFN)



Կանխատեսման որակի ցուցանիշները (տե՛ս գծապատկեր 3) վկայում են, որ մոդելի կանխատեսման ուժը բարձր է. Թեյլի անհավասարության գործակիցը 0,05 է[7]: Bias Proportion=0,003425. սա նշանակում է, որ արտահանման վիճակագրական և կանխատեսված շարքերի միջինների խզումը (gap) 0,34 տոկոս է. առկա է փոքր խզում:

Գծապատկեր 3

ՀՀ արտահանման կանխատեսումը. գրաֆիկը և կանխատեսման որակի ցուցանիշները



ՀՀ ՀՆԱ-ն վերլուծելու նպատակով դիտարկել ենք վեց մոդել (տե՛ս աղյուսակ 3): Մոդել 6-ում ՀՆԱ-ն բացատրվում է անվանական

[7] Թեյլի անհավասարության գործակիցը արժեքներ է ընդունում 0-ից 1 միջակայքից՝ $0<u<1$: Եթե $u=0$, ապա փոփոխականի վիճակագրական և կանխատեսված արժեքները նույնն են: Եթե $u=1$, ապա կանխատեսման ուժը ցածր է:

փոխանակային կուրսով, արտերկրից ստացվող տրանսֆերտներով և պետական ծախսերով: Հետագա մոդելներում անկախ փոփոխականներին ավելացրել ենք օտարերկրյա ուղղակի ներդրումները, արտահանումը, ՀՆԱ-ի լագային արժեքը: Բոլոր պարամետրերը վիճակագրորեն նշանակալի են: Մոդելներ 9, 10 և 11-ում մնացորդները հոմոսկեդաստիկ են և նորմալ բաշխված: Մնացորդների ավտոկոռելացված չլինելու զրոյական վարկածը չի մերժվում: Մոդել 11-ի հավասարումն է.

$$D(LOG(GDP))=-0.005+0.086*D(LOG(TR))+0.011*D(LOG(X))+0.392*\varepsilon_{t-1}$$
$$+0.089*D(LOG(GDP(-4)))$$

Ստացված արդյունքների համաձայն՝ արտերկրից ստացվող տրանսֆերտները տնային տնտեսությունների սպառողական ծախսերի միջոցով դրական են ներգործում ՀՆԱ-ի վրա: Արտահանման աճը նպաստում է ՀՆԱ-ի աճին: Մոդելը ներկայացնում է այս ցուցանիշների միջև եղած ակնհայտ կապերի քանակական գնահատականները:

Աղյուսակ 3

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները. կախյալ փոփոխական՝ ՀՆԱ

Անկախ փոփոխական	Մոդել					
	6	7	8	9	10	11
c	-0.006	-0.012	-0.017	-0.027**	-0.03**	-0.005
D(EXRATE)	-0.004**	-0.003**	-0.004**	-	-0.002*	-
D(LOG(TR))	0.247**	0.21**	0.221**	0.72***	0.35***	0.086**
D(LOG(G))	0.916***	0.98***	0.78***	-	0.89***	-
D(LOG(DIRI))	-	0.10***	-	-	-	-
D(LOG(X))	-	-	0.423***	0.828***	0.52***	0.11*
AR(1)	-	-	-	-	-0.59***	-
MA(1)	-	-	-	-0.633***	-	0.39***
D(LOG(GDP(-4)))	-	-	-	-	-	0.89***
Durbin-Watson	2.406	2.493	2.501	1.815	2.167	1.843
Prob(Jarque-Bera)	0.364	0.501	0.290	0.210	0.502	0.422
Prob(Br-Pagan-Godf. Heter. Test)	0.077	0.019	0.039	0.511	0.737	0.080
Prob(BG Serial Correl. LM Test)	0.073	0.028	0.029	0.220	0.206	0.232
Adj. R-squared	0.786	0.828	0.816	0.699	0.846	0.971
F-statistic	80.56***	79.1***	73.12***	57.46***	71.3***	587.1***
Akaike info criter.	-0.231	-0.434	-0.368	0.063	-0.529	-2.312

Արժեքականության * տասը տոկոս, ** հինգ տոկոս, *** մեկ տոկոս մակարդակներ:

ՀՀ անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը: Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության որոշման կողմնակիցները ԵՏՄ-ին անդամակցությունը համարում են անխուսափելի, քանի որ «դրանով Հայաստանը լուծում է իր լինելիության խնդիրը»: Անդամակցության ընձեռած տնտեսական հնարավորություններից նշվում են տնտեսական անվտանգությունը, ուղղակի ներ-

դրումների և զբաղվածության աճը: Տրանսպորտային մեկուսացման հաղթահարման ու էներգապոտենցիալի հզորացման խնդիրների լուծմանը կնպաստեն Հայաստանում ԵՏՄ երկրների ներդրողների մասնակցությամբ իրականացվող հեռանկարային ենթակառուցվածքային նախագծերը՝ նոր ատոմակայանի կառուցումը, դեպի Իրան երկաթուղու, Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի շինարարությունը, Ռուսաստանի հետ Վրաստանի տարածքով երկաթուղային հաղորդակցության վերականգնումը[8]:

Ընդդիմախոսների կարծիքով, Հայաստանի ԵՏՄ մուտք գործելը ենթադրում է որոշակի բարդություններ, քանի որ Միության անդամ երկրների հետ Հայաստանի ցամաքային սահման չունենալու հետևանքով մաքսային արտոնությունների ռեժիմը արդյունավետ չի գործի: Բացի այդ՝ ՀՀ-ն պետք է մինչև Մաքսային միության մակարդակի բարձրացնի իր մաքսատուրքերը՝ Հայաստանի միջին կշռված ներմուծման մաքսային սակագինը ԱՀԿ երկրների հետ կազմում է 2,7 %, իսկ Մաքսային միությունում 2015 թ. գործելու է 6,0 % մակարդակի սակագինը: Մաքսատուրքերի բարձրացումը կհանգեցնի բյուջեի դեֆիցիտի կրճատմանը, սակայն Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ կարող է խնդիր առաջանալ: Բարդություններ կարող են առաջանալ Իրանի, Վրաստանի և եվրոպական գործընկերների հետ արտաքին առևտրում:

ՀՀ ինտեգրման գործընթացների ուսումնասիրության խմբի հաշվարկներով՝ Մաքսային միությանը միանալու դեպքում տնտեսության ներկա կացության պայմաններում 2 տարի հետո ՀՀ-ն կունենա տարեկան հավելյալ 4 տոկոս համախառն ներքին արդյունքի աճ, իսկ Եվրամիության հետ ասոցիացման պայմանագրի դեպքում՝ 2,3 տոկոս աճ[9]:

Մեր նպատակն է գնահատել Եվրասիական տնտեսական միությանը և Եվրամիությանը Հայաստանի անդամակցելու ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա: Տնտեսական ինտեգրման ազդեցությունը գնահատելու նպատակով որոշ հետազոտություններում ինտեգրումը դիտարկվում է որպես կեղծ փոփոխական, մյուսներում՝ որպես հովանավորչության աստիճանի հակադիր մեծություն: Որպես ինտեգրումը բնութագրող մեծություն վերցրել ենք ՄՄ-ից ՀՀ ներմուծման և ՀՀ-ից ՄՄ արտահանման մեծությունների գումարի հարաբերությունը ՀՀ և ՄՄ ՀՆԱ-ներին.

$$Int_{ij,t} = (Ex_{ij,t} + Ex_{ji,t})/(GDP_{it} + GDP_{j,t})$$

---

[8] Տե՛ս «Армения и Таможенный союз: оценка экономического эффекта интеграции». СПб., 2013, էջ 10:

[9] Տե՛ս http://www.noravank.am «Մաքսային միությունը Հայաստանին տալիս է տնտեսական անվտանգություն, խոշոր ներդրումներ և զբաղվածության աճ», հարցազրույց Ինտեգրման գործընթացների ուսումնասիրության խմբի ղեկավար Աշոտ Թավադյանի հետ, 2013 թ., նոյեմբեր:

Մոդելի հիմքում ընկած է Կոբբ–Դուգլասի արտադրական ֆունկցիան մեկ աշխատողին ընկնող ՀՆԱ-ի համար՝ $y=Ak^{\alpha}$, որտեղ $y=Y/L$-ը մեկ աշխատողին ընկնող ՀՆԱ-ն է, A-ն՝ տեխնոլոգիական առաջընթացը, $k=K/L$-ը՝ մեկ աշխատողին ընկնող ֆիզիկական կապիտալը: Արտադրական ֆունկցիան գծայնացվել է.

$$\Delta \ln y_t = \Delta \ln A_t + \alpha \Delta \ln k_t \qquad (1)$$

Ինտեգրումը 2 ուղիներով է ներգործում տնտեսական աճի վրա՝ տեխնոլոգիական առաջընթաց և ֆիզիկական կապիտալի աճ: Տարբերակելով պերմանենտ (անընդհատ) ու ժամանակավոր ազդեցությունները՝ ստանում ենք երկու հավասարում.

$$\Delta \ln y_t = \delta_{1A}^{S} + \varphi_{1A}^{S} Int_t + \alpha_1^{S} \Delta \ln k_t + (1-\lambda_1)\Delta \ln y_{t-1} + \varepsilon_{1t} \qquad (2)$$

$$\Delta \ln y_t = \delta_{2A}^{S} + \varphi_{2A}^{S} \Delta Int_t + \alpha_2^{S} \Delta \ln k_t + (1-\lambda_2)\Delta \ln y_{t-1} + \varepsilon_{2t} \qquad (3)$$

որտեղ՝

$$\Delta \ln k_t = \delta_{1K} + \varphi_{1K} Int_t \qquad (4)$$

$$\Delta \ln k_t = \delta_{21K} + \varphi_{21K} \Delta Int_t \qquad (5)$$

(2)-ը և (4)-ը ներկայացնում են պերմանենտ, իսկ (3)-ը ու (5)-ը՝ ժամանակավոր ազդեցությունը: λ-ն մեկնաբանվում է որպես ճշգրտման գործակից, և երկարաժամկետ ազդեցությունները (δ,φ) կարելի է ստանալ δ^S և φ^S գործակիցները λ-ի վրա բաժանելով:

Գնահատենք (2) և (3) հավասարումները: Սա մասնակի ճշգրտման մոդել է[10]: Նման մոդելները պահանջում են ստացիոնար փոփոխականներ: Augmented Dickey-Fuller թեստը $\Delta \ln y$, $\Delta \ln k$, ΔInt փոփոխականների համար ժխտում է ոչ ստացիոնար լինելու զրոյական վարկածը առնվազն 5 % արժեքականության մակարդակում: *Int* փոփոխականը ոչ ստացիոնար է: Սա էլ հենց ցույց է տալիս, որ ինտեգրումը տնտեսական աճի վրա պերմանենտ ազդեցություն չի կարող ունենալ: Ստացիոնար $\Delta \ln y$ և ոչ ստացիոնար *Int* փոփոխականների միջև չի կարող լինել հավասարակշռված կապ:

Մյուս խնդիրն այն է, որ ներդրումները ոչ միայն տնտեսական աճին, այլև նպաստում են ներդրումային նոր նախագծերի իրագործմանը: Սա նշանակում է, որ կապիտալի աճը՝ $\Delta \ln k$-ն, էնդոգեն է և կոռելացված է մոդելի սխալի հետ, ուստի կիրառել ենք գործիքային փոփոխականների մեթոդը:

(2) հավասարման պարամետրերի գնահատմամբ ստացել ենք.

[10] Տե՛ս Harald Badinger. Growth Effects of Economic Integration, The Case of the EU Member States (1950-2000). Research Institute for European Affairs, University of Economics and Business Administration Vienna. IEF Working Paper Nr. 40, December 2001, էջ 18:

Մոդել 12

Dependent Variable: D_LN_GDP
Method: Least Squares
D_LN_GDP=C(1)+C(2)*INT+C(3)*D_LN_K +(1-C(4))*D_LN_GDP(-1)

	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C(1)	0.411831	0.402396	1.023447	0.3360
C(2)	-8.511594	7.495719	-1.135527	0.2890
C(3)	1.000949	0.297783	3.361337	0.0099
C(4)	1.084244	0.243591	4.451088	0.0021

R-squared	0.610706	Mean dependent var	0.070927
Adjusted R-squared	0.464721	S.D. dependent var	0.265326
S.E. of regression	0.194120	Akaike info criterion	-0.179479
Sum squared resid	0.301461	Schwarz criterion	-0.017843
Log likelihood	5.076874	Durbin-Watson stat	1.870194

Մոդել 12-ում *Int* փոփոխականի գործակիցը վիճակագրորեն նշանակալի չէ, այսինքն՝ ՄՄ անդամակցելու դեպքում պերմանենտ ազդեցություն մոդելը ցույց չի տալիս: Սա բնական է, եթե հաշվի առնենք *Int* փոփոխականի ոչ ստացիոնար լինելը:

Ժամանակավոր ազդեցությունը դիտարկելու համար *Int* ցուցանիշի փոխարեն վերցնում ենք Δ*Int* ցուցանիշը: (3) հավասարման գործակիցների գնահատման արդյունքներն են.

Մոդել 13

Dependent Variable: D_LNGDP
Method: Least Squares
D_LNGDP=C(1)+C(2)*D_INT(-1)+C(3)*D_LNK +(1-C(4))*D_LNGDP(-1)

	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C(1)	-0.019878	0.071693	-0.277264	0.7886
C(2)	5.539569	5.561693	0.996022	0.3484
C(3)	0.719489	0.258849	2.779569	0.0239
C(4)	1.273921	0.239327	5.322926	0.0007

R-squared	0.597832	Mean dependent var	0.070927
Adjusted R-squared	0.447019	S.D. dependent var	0.265326
S.E. of regression	0.197304	Akaike info criterion	-0.146945
Sum squared resid	0.311430	Schwarz criterion	0.014691
Log likelihood	4.881668	Durbin-Watson stat	1.311504

Int փոփոխականի գործակիցը ոչ նշանակալի է: Այս արդյունքները մասամբ կարելի է բացատրել այն բանով, որ ՀՀ-ն նոր է միացել ԵՏՄ-ին, և թվային շարք դեռևս չունենք:

Այս նույն մոդելը կիրառել ենք նաև ՀՀ ԵՄ ինտեգրման տնտեսական էֆեկտը գնահատելու համար: Ստուգվող վարկածն է՝ «ինտեգրու-

մը Եվրամիությանը Հայաստանի համար ունի դրական էֆեկտ»: (2) հավասարման պարամետրերի գնահատման արդյունքում ստացել ենք.

Մոդել 14

Dependent Variable: D(GDP_S)
Method: Least Squares
D(GDP_S)=C(1)+C(2)*INT2+C(3)*D(LNK)+(1-C(4))*D(GDP_S(-1))

	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C(1)	0.025688	0.012328	2.083777	0.0592
C(2)	0.000374	0.001278	0.292979	0.7745
C(3)	0.386209	0.098369	3.926136	0.0020
C(4)	0.649489	0.160933	4.035772	0.0017

R-squared	0.961612	Mean dependent var	0.131260
Adjusted R-squared	0.952015	S.D. dependent var	0.028363
S.E. of regression	0.006213	Akaike info criterion	-7.112021
Sum squared resid	0.000463	Schwarz criterion	-6.918874
Log likelihood	60.89617	Durbin-Watson stat	0.756766

INT2 փոփոխականի C(2) գնահատված գործակիցը վիճակագրորեն ոչ նշանակալի է: Սա նշանակում է, որ դարձյալ պերմանենտ ազդեցությունը բացակայում է:

(3) հավասարման պարամետրերի գնահատմամբ ԵՄ-ի համար ստացել ենք.

Մոդել 15

Dependent Variable: D(GDP_S)
Method: Least Squares
D(GDP_S)=C(1)+C(2)*D(INT2(-1))+C(3)*D(LNK)+(1-C(4))*D(GDP_S(-1))

	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C(1)	0.018714	0.005531	3.383316	0.0054
C(2)	0.019222	0.003129	6.142373	0.0001
C(3)	0.239131	0.048365	4.944323	0.0003
C(4)	0.427956	0.085179	5.024218	0.0003

R-squared	0.990670	Mean dependent var	0.131260
Adjusted R-squared	0.988338	S.D. dependent var	0.028363
S.E. of regression	0.003063	Akaike info criterion	-8.526570
Sum squared resid	0.000113	Schwarz criterion	-8.333423
Log likelihood	72.21256	Durbin-Watson stat	1.310447

Վերջին մոդելի համաձայն՝ ԵՄ ինտեգրումը այս տարիների ընթացքում ՀՀ տնտեսական աճի վրա ժամանակավոր ազդեցություն ունեցել է, քանի որ INT2 փոփոխականի գործակիցը վիճակագրորեն նշանակալի է: Ազդեցությունը շատ փոքր է. ինտեգրման մակարդակի 1 % աճը հանգեցնում է ՀՆԱ լրացուցիչ 0,01 % աճի: Նման փոքր ազդեցության առկայությունը կարելի է մեկնաբանել նաև որպես վիճակագրական սխալի արդյունք:

Այսպիսով, 12-ից 15 մոդելների արդյունքների հիման վրա մերժում ենք ՀՀ տնտեսական աճի վրա ինտեգրման պերմանենտ և ժամանակավոր ազդեցության վարկածները: ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցումը կնպաստի ՀՀ տնտեսական անվտանգության, ուղղակի ներդրումների և զբաղվածության աճին, սակայն մաքսատուրքերի բարձրացման հետևանքով կարող է բարդություններ առաջացնել որոշ երկրների հետ արտաքին առևտրում:

Բանալի բառեր – *առևտրատնտեսական հարաբերություններ, առևտրային հաշվեկշիռ, տնտեսական աճ, արտահանում, մաքսատուրքեր, ինտեգրում, ռեգրեսիոն վերլուծություն, պերմանենտ և ժամանակավոր ազդեցություն*

АЛВАРД ХАРАТЯН, АСПРАМ ШАДЯН – ***Некоторые количественные оценки возможных последствий вступления РА в Евразийский экономический союз.*** – Посредством регрессионных моделей в работе изучены количественные связи между основными показателями, характеризующими торгово-экономические отношения Армении. Проанализированы возможные последствия членства страны в Евразийском экономическом союзе. Оценено воздействие вступления в Евразийский экономический союз или возможное вступление в Евросоюз на экономический рост Армении.

Ключевые слова: *торгово-экономические отношения, торговый баланс, экономический рост, экспорт, таможенные платежи, интеграция, регрессионный анализ, перманентное и временное воздействие*

ALVARD KHARATYAN, ASPRAM SHADYAN – ***Some Quantitative Estimates of the Possible Consequences of Armenia's Accession to the Eurasian Economic Union.*** – Within the framework of this article quantitative relationship between the main indicators characterizing the economic and trade relations of the RA were studied by means of the regression models. The possible consequences of the membership of Armenia to the Eurasian Economic Union were analyzed. The impact of the possible entry into the Eurasian Economic Union or the European Union on economic growth of Armenia was assessed.

Key words: *trade and economic relations, trade balance, economic growth, export, custom dues, integration, regression analysis, permanent and temporary effect*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ԵՎԳԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ** – ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս
   ЕВГИНЕ ВАРДАНЯН – преподаватель кафедры социальной работы и социальных технологий ЕГУ
   YEVGINE VARDANYAN – Lecturer of the Chair of Social Work and Social Technologies, YSU
   էլ. հասցե՝ yevginevardanyan@gmail.com
2. **ՌՈՒԲԵՆ ԵԳԱՆՅԱՆ** – տնտեսագիտության թեկնածու, «Հայկական սոցիալ-ժողովրդագրական նախաձեռնություն» ՀԿ նախագահ
   РУБЕН ЕГАНЯН – кандидат экономических наук, председатель общественной организации «Армянская социально-демографическая инициатива»
   RUBEN EGANYAN – PhD, chairman of the NGO «Armenian social-demographic initiative»
   էլ. հասցե՝ rubeneg@mail.ru
3. **ՄԵԼԻՆԵ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ** – Վանաձորի պետական համալսարանի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս
   МЕЛИНЕ КАРАКЕШИШЯН – преподаватель кафедры психологии и социологии Ванадзорского государственного университета
   MELINE GHARAKESHISHYAN – Lecturer of the Chair of Psychology and Sociology, Vanadzor State University
   էլ. հասցե՝ melva88@mail.ru
4. **ԱՏՈՄ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի դոցենտ
   АТОМ ВАРДУМЯН – кандидат философских наук, доцент кафедры теоретической философии и логики ЕГУ
   ATOM VARDUMYAN – PhD, Associate Professor of the Chair of Theoretical Philosophy and Logics, YSU
5. **ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ** – տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան
   ГАЙК САРКИСЯН – доктор экономических наук, профессор, декан факультета экономики и менеджмента ЕГУ
   HAYK SARGSYAN – Sc. D. in Economics, Professor, Dean of the Faculty of Economics and Management, YSU
6. **ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ** – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ
   ЖИРАЙР МХИТАРЯН – аспирант факультета экономики и менеджмента ЕГУ
   ZHIRAYR MKHITARYAN – PhD student of the Faculty of Economics and Management, YSU
7. **ՍԵԴԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ** – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ
   СЕДА НАГАПЕТЯН – аспирантка факультета экономики и менеджмента ЕГУ
   SEDA NAHAPETYAN – PhD student of the Faculty of Economics and Management, YSU

8. **ՍԱՐԳԻՍ ՂԱՆԹԱՐՋՅԱՆ** – տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ
САРКИС КАНТАРДЖЯН – доктор экономических наук, профессор, заведующий кафедрой управления и бизнеса ЕГУ
SARKIS KHANTARJIAN – Sc. D. in Economics, Professor of the Chair of the Chair of Management and Business, YSU
9. **ՎՈԼՈԴՅԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ** – տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր
ВОЛОДЯ ОВСЕПЯН – кандидат экономических наук, профессор кафедры экономической теории ЕГУ
VOLODIA HOVSEPYAN – PhD, Professor of the Chair of Theory of Economics, YSU
10. **ԱԼՎԱՐԴ ԽԱՌԱՏՅԱՆ** – տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ
АЛВАРД ХАРАТЯН – кандидат экономических наук, доцент кафедры математического моделирования в экономике ЕГУ
ALVARD KHARATYAN – PhD, Associate Professor of the Chair of Mathematical Modeling in Economics, YSU
էլ. հասցե՝ alvardkharatyan@yahoo.com
11. **ԱՍՊՐԱՄ ՇԱԴՅԱՆ** – Structured Credit Data Management ընկերության ֆինանսական վերլուծաբան
АСПРАМ ШАДЯН – финансовый аналитик общества Structured Credit Data Management
ASPRAM SHADYAN – Financial Analyst of the Structured Credit Data Management Company
էլ. հասցե՝ aspramshadyan@gmail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ✵ СОДЕРЖАНИЕ ✵ CONTENTS

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ
СОЦИОЛОГИЯ
SOCIOLOGY

Եվգինե Վարդանյան – Տեղական ինքնակառավարման մոդելի ձևավորման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում 3
Евгине Варданян – Процесс формирования модели местного самоуправления в Республике Армения
Yevgine Vardanyan – The Process of Formation of the Model of Local Self-Government in RA

Ռուբեն Եգանյան – Շրջանակային (ցիրկուլյար) միգրացիայի սահմանման շուրջ 14
Рубен Еганян – Об определении круговой (циркулярной) миграции
Ruben Eganyan – On the Definition of Circular Migration

Մելինե Ղարաքեշիշյան – Վանաձորի կանանց աշխատանքային միգրացիոն հոսքերի առանձնահատկությունները 20
Мелине Каракешишян – Особенности женских трудовых миграционных потоков из г. Ванадзора
Meline Gharakeshishyan – Features of Women External Labor Migration Flows from Vanadzor

Ատոմ Վարդումյան – Աշխարհայացքային համատեղության խնդիրը հաղորդակցության գործընթացում 27
Атом Вардумян – Проблема мировоззренческой совместимости в процессе коммуникации
Atom Vardumyan – The Problem of World Outlook Compatibility in the Process of Communication

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ЭКОНОМИКА
ECONOMICS

Հայկ Սարգսյան, Ժիրայր Մխիթարյան, Սեդա Նահապետյան – Սահմանադրականության հարացույցը. տնտեսագիտական առումները, գնահատման հիմնահարցերը 36
Гайк Саркисян, Жирайр Мхитарян, Седа Нагапетян – Парадигма конституционализма: экономические аспекты, вопросы оценки
Hayk Sargsyan, Zhirayr Mkhitaryan, Seda Nahapetyan – The Paradigm of Constitutionalism: Economic Aspects and Issues of Evaluation

Սարգիս Ղանթարջյան – Ռիսկերի որոշումը ինովացիոն նախագծերում 52
Саркис Кантарджян – Определение рисков в инновационных проектах
Sarkis Khantardjian – The Definition of Risk in Innovative Projects

Վոլոդյա Հովսեփյան – Մարդկային կապիտալի զարգացումը և տնտեսական աճը **57**
Володя Овсепян – Развитие человеческого капитала и экономический рост
Volodya Hovsepyan – The Development of Human Capital and the Economic Growth

Ալվարդ Խառատյան, Ասպրամ Շադյան – Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցելու հնարավոր հետևանքների որոշ քանակական գնահատականներ **65**
Алвард Харатян, Аспрам Шадян – Некоторые количественные оценки возможных последствий вступления РА в Евразийский экономический союз
Alvard Kharatyan, Aspram Shadyan - Some Quantitative Estimates of the Possible Consequences of Armenia's Accession to the Eurasian Economic Union

Տեղեկություններ հեղինակների մասին..... **76**
Сведения об авторах
Information about the Authors

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 106, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Գրիգորյան
Контрольный корректор Г. Григорян
Proofreader G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝ Մ. Աբգարյան
Компьютерная верстка М. Абгарян
Computer designer M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 10. 09. 2015:
Տպաքանակ՝ 100: Չափը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ:

.....